

ԷԶՄԻԱԾԻՆ



1968

№ 146

ՌՆԺԸ
ԻԴՆԱՐԻ

Յոսիս -

ՀԱՄԱԿԱՐԻՆ


117-10690.

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԱՄՍԱԳԻՐ
ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԱԹՈՌՈՅ
Ս. ՀԱՄԱԿԱՐԻՆԻ

Է

1968






ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

	Էջ
ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ	8
ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ	4
Հ. ժ. ՍԻՐՈՒՆԻ—Կոմիտասին Ռեա	6
Հ. ԵՂԻԱՋԱՐՑԱՆ—Ախթալայի վանքը և նրա Ռեա կապված Ախթալա ավանի մյուս Ռուշարձանները	18
ՍԱՅՐ ԱԹՈՒՌՈՒՄ	27
Անավերջի Ռանդիսություն Ռոզնոյ ճեմարանում	28
ՍԱՍՈՒՆ ՍՐԿ. ՎԱՐԴԱՆՑԱՆ—Հավիտենականությունը՝ ակնթարթի չափ երկար	30
ՀՈՎՀԱՆՆԵՍ ՍՐԿ. ԳԸՎԸԳՑԱՆ—Խոկում աղոթքի մասին	32
ՀԱԿՈՐ ՍՐԿ. ՆԱԼԲԱՆԴՑԱՆ—Ծննդման մի առավոտ	34
ՀԱԿՈՐ ՄԻՍԻԹԱՐՑԱՆ—Սիմեոն վարդապետ Զուղայեցու մատենագրական և քերա- կանագիտական վաստակը	36
Հ. Ս. ԲԱՒԻԱԼՑԱՆ—Հայոց Ռիմ տոմարի ամսացուցների և ամսօրերի ստուգարանու- թյունը	45
Ո. ԵԳԱՆՑԱՆ—Ավետիք և Համբարձում էնֆիաճյան գրավաճառ եղբայրների ձեռա- գրական Ռավաքանուն	51
Յուզակ Մայր Աթոռ ս. Էջմիածնի Գոր ստացված ձեռագրերի	60

Հանձնված է արտադրության 1/VII 1968 թ.: Ստորագրված է տպագրության 12/VIII 1968 թ.:
Տպագրական 4 մամուլ, թուղթ 60×84¹/₈, պատվեր 462



ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ, ԷՋՄԻԱՇԻՆ

«ԷՋՄԻԱՇԻՆ» ԱՄՍԱԳՐԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Армянская ССР, Эчмиадзин, Редакция журнала «Эчмиадзин».
Redaction de la revue «Etchmiadzine», Etchmiadzine, Arménie, URSS.

Մայր Աթոռ Ս. Էջմիածնի տպարան, 1968 թ.

ՀՐԱՄԱՆԱԻ

Տ. Տ. ՎԱԶԳԵՆԻ ԱՌԱՋՆՈՅ

ՎԵՀԱԺԱՌ ԵՒ ՍՈՐԵՍՋԱՆԱԳՈՅՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ

ԱՄԽԵԱՅՆ ՀԱՅՈՑ





ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Ամենայն Հայոց Հայրապետ Տ. Տ. Վազգեն Ա կաթողիկոսը արտասահման կատարած ուղևորությունից վերադարձավ Մայր Աթոռ շաբաթ, հուլիսի 27-ին:

Նորից Արքությունը իր այս ուղևորության ընթացքին այցելեց հայ եկեղեցական թեմերն ու համայնքները՝ Ավստրիայում, Ամերիկայի Միացյալ Նահանգներում, Կանադայում, Արգենտինայում, Ուրուգվայում, Բրազիլիայում և Ֆրանսիայում:

Վեհափառ Հայրապետին ուղեկցում էին՝ գերաշնորհ տ. Կոմիտաս եպիսկոպոսը՝ առաջնորդ Վրաստանի թեմի, գերաշնորհ տ. Տիրայր եպիսկոպոսը՝ առաջնորդ Ռումինիայի և Բուլղարիայի թեմերի, հոգեշնորհ տ. Մերսես Ծ. վարդապետ Պողոսյանը՝ տեսուչ հոգևոր ճեմարանի, և պրն. Արթուր Հատիտյանը՝ խմբագիր «Էջմիածին» ամսագրի:

30 հուլիս 1988

Ս. Էջմիածին

ԴԻՎԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՒԻ





ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի կարգադրությամբ Հայաստանյայց առաքելական եկեղեցին, որպես անդամ եկեղեցիների համաշխարհային խորհրդի, 1968 թ. հուլիսի 4—19 մասնակցեց Ուփսալայի (Շվեդիա) մեջ գումարված 4-րդ համագումարին՝ հետևյալ պատվիրակությամբ.

1. Գերաշնորհ տ. Սերովբե արքեպիսկոպոս Մանուկյան.
Արևմտյան Եվրոպայի հայոց հայրապետական պատվիրակ, պատվիրակության նախագահ.
2. Գերաշնորհ տ. Պարզե եպիսկոպոս Գևորգյան.
առաջնորդ հայոց Ռուսաստանի.
3. Հոգեշնորհ տ. Մեսրոպ ծ. վարդապետ Գրիգորյան.
հոգևոր հովիվ հայոց Վիեննայի.
4. Հոգեշնորհ տ. Ներսես ծ. վարդապետ Պողապալյան.
տեսուչ ս. Էջմիածնի հոգևոր ճեմարանի.
5. Հոգեշնորհ տ. Արսեն վարդապետ Բերբերյան.
հոգևոր հովիվ Լոնդոնի հայոց ս. Սարգիս եկեղեցու:

20 հուլիս 1968

Ա. Էջմիածին

ԴԻՎԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ





ԿՈՄԻՏԱՍԻՆ ՀԵՏ*

III.—Խաչիճ ճամփան

Շողոմեակին մեջ ենք արդեն:

«Ես քանի մը ընկերներու հետ, կպատմեմ Անտոնյան, հայոգեցա սպրդի մինչև առաջին կարգի ճամփորդներու հատուկ սալոնը: Ուրիշները մեզմե առաջ կրցեր էին նույնը ընել, և երբ սալոն մտանք, անկյուն մը տեսանք մեզ նման հետիոտն եկողներին Տիրան Քելեկյանը, դուկտ. Թորգոմյանը, Հայկ Խոճասարյանն ու Կոմիտաս վարդապետը, որոնք նստելու տեղ գտեր էին»:

Քուրորդ մտահոգ էին թե ո՛ւր կտարվին այսպես: Ամեն մեկը ենթադրություն մը կընէր: Մյուս կողմն ոստիկանները սկսած էին հետզհետեւ ավելի դաժան դառնալ:

«...Մենք դուրս ելանք միջոց մը, տեսնելու համար թե ինչու չեն դադրած ոստիկաններու պոռչուկները, որոնք արձագանքները մինչև սալոն կհասնեին: ...Ոստիկանները կջանային պզտիկ խումբերու վերածել անցքերու մեջ խռնվածները և զանազան խուցերու և սրահներու մեջ տեղավորելու պանոնք, և եթե այս գործը կզժվարանար, պատճառը իրենց կողմն կիրարկված քրտությունն էր: Ամենն կպիտեներ զադունի ոստիկաններն էին, որոնք շենք շնորհք կհայհոյեին այն ու ձախ: Մեզի շատ քնական թվեցավ հայ լրդ-տեսներու ներկայությունը անոնց հետ: Այն մթնոլորտին մեջ ուր կգտնվեինք, ասիկա այլևս դարձանայի չէր: Ոչ իսկ զգուշություն կը-

նեին իրենց մեր մեջ ներկայությունը ծածկելու համար: Օրը իրենցն էր ապահովարար:

...Երբ կրկին մտանք սալոնը, Կոմիտաս իր անկյունեն ելեր և հայտնի չէ թե ինչպես տեղավորվեր էր դուկտ. Տաղավարյանի և դուկտ. Թորգոմյանի միջև: Երկու բժիշկներն այն կուլային, և Կոմիտաս մեկ մը մեկուն, մեկ մը մյուսին կուղղեր շատ անհանգիստ արտահայտությամբ մը վառված աչքերը: Երբեմն կամ Տաղավարյանի և կամ Թորգոմյանի կողմը հակելով, բաներ մը կմրմնջեր, թերևս միսթարություն կամ քաջալերության խոսքեր, զորս չէինք իմանար»:

Եվ ահա շողոմեակին շչակը: «Շուտով զգացինք անիվներուն դառնալը և անոնց հարուցած ճողվույնը: Հայտնի էր որ ճամփա պիտի ելլեինք: ...Դուկտ. Թորգոմյան հանկարծ ոտքի ելավ և մինչև սալոնին դուռը հառաջանալով, աչքերը ուղղեց լուսնին: Երկար պահ մը դայն դիտել և այտերն ի վար իջնող և մորուքին երկայնքը մարգրտացող արցունքները սրբել վերջ, դեմքը ուղղեց Բերայի սիլուետին, լալագին ձայնով մը մրմնջելով:

«— Մնաս բարով... ա՛յ քեզ տեսնելիք շունիս...»

«Զինքը առին տարին ու նստեցուցին Կոմիտասին բով: Այս վերջինը այլևս շուրջիններով չէր զբաղեր կարծես: Իր աչքերը, որոնց մեջ նայվածքը բոլորովին անհանգիստ ու անհանգարտ արտահայտություն մը ստացած էր, հառած էր գետինը, որոշ կետի մը»:

Արամ Անտոնյան կպատմե թե այդպիսի 13/26-ի իրիկունը հայ քրտականներու կարավանը պիտի հասներ վերջապես իր առաջին հանգրվանը, Բավլիի խանը, ուր և պիտի սկսեր Կոմիտաս վարդապետի տոսմը»:

* Շարունակված «Նշմանակ» ամսագրի 1965 թվականի ՊՊ Ա-ից, Ե-Ժ-ից. 1966 թվականի ՄՄ Ա-2-ից, Ը-Ժ-ից, 1967 թվականի ՄՄ Գ-2-ից և 1968 թվականի ՄՄ Ա-Դ-ից:

«Բառը, կգրեմ, հաճախ գործածված ու գործածվելու վրա, ճիշտ չէ, և խոշոր շափազանցություն մըն է, երբ կականարկեմ ամսագրի ընթացքին իր մոտ հայտնված տագնապիւն։ Ու որքան ալ թուփալեննրու բազմություն մը անընդհատ կկրկնեն թե Կոմիտաս խենթեցավ տարագրության ճակտին վրա, իրականությունը սա է որ Կոմիտաս շխենթեցավ ամսագրի ընթացքին։ Իր մտքին փուլուման բուն տոամը, որ հետագային Պոլսո մեջ կերպարանք առավ, մանվածապատ կնձիռ մըն է, որուն թափանցելու համար պետք է կանգ առնել բազմազան պատճառներու վրա։ Շատշատ այդ տոամին պատճառներին մեկը, և ո՛չ թե պատճառը կրնանք նկատել նաև աքսորը։ Բայց ասիկա չի նշանակեր որ եթե աքսորը չըլլար, տոամը չպիտի հայտնվեր։ Առիթ պիտի ունենամ այս կետին անդրադառնալու։ Սա միայն ըսեմ այստեղ որ Կոմիտասի և ուրիշ լոթ բախտակիցներու համար, աքսորը շատ կարճատև եղավ, այսինքն լոկ 15 օր, — բանտարկության և ճամփորդության օրերն ալ միասին հաշվելով։ Մեզի հետ ձերբակալված էր ապրիլ 11-ի (Հ. Տ.) շաբաթ օրվան գիշերը, Պոլսեն ելանք հանրոց կիրակի գիշերը, միասին Չանղըրի ժամանեցինք ապրիլ 15-ի շաբաթը։ Երբ իրիկունը, իր վերադարձի հրամանը հասավ 11 օր վերջ, ապրիլ 26-ի կիրակի առտուն, օր մըն ալ ազատ շրջեցավ Չանղըրի մեջ, բոլորովին զերծ ամեն հարկադրությունից, և ապրիլ 28-ի երեքշաբթի օրը, ինք և իր լոթ բախտակիցները մեկնեցան Պոլիս, ուր պիտի մտնեին մայիս 2-ի շաբաթ իրիկունը։

Կոմիտասի ամբողջ տոամը աքսորի մեջ, ջղագրգռության, քսնք քիչ մը բուռն ջղագրգռության պահ մը եղավ, որ երեք վրդովիչ համեմատության մը չհասավ և երկար ալ չքաշեց։ Իր տագնապը, ենթագրելով որ չէր սկսած արդեն, առաջին անգամ հայտնեցավ ապրիլ 14-ի իրիկունը, Բավլի ժամանելիս քիչ ետքը, հասարակ ժանտարմայի մը կողմն գործված աննշան բրտության մը վրա, և տեքց մինչև ապրիլ 16-ի իրիկունը, երբ արդեն Չանղըրի զորանոցն էինք, այսինքն ընդամենը երկու գիշեր և երկու օր, այն ալ ոչ մշտատև կերպով, այլ ավելի կամ նվազ երկար ընդհատումներով, որոնց ընթացքին քիչ անգամ բառ էր ելավ բերնեն։

Տեղավյիի հանգրվանը հասեր էինք իշնելով քարոտ ու գրեթե ցից բարձունք մը, որմե վար մեր կառքերուն գահավիժումը, բարեբախտաբար կարճատև, ճամփուն ամենն ծանր տաժառը պատճառած էր մեզի։ Չարմանալի չէր որ մեր կայք ժամանումը փախուստ մը եղավ կառքերեն, որոնցմե ամեն մարդ վար նետվի կուզեր վայրկյան մը առաջ։ ... Իշնղները առհասարակ կուղղվեին

դեպի խանը, ընդարձակ երկհարկանի քառակուսի շենք մը որ ասվելի ամրոցի կնիաներ քան բնակության սահմանված ունէ շենքի։ ... Պարզ էր որ ցուրտ գիշեր մը պիտի ունենայինք։ Ոմանք իրենց մարմնին ամենն խոշտանգված մասերը կմարձեին, փոխնի-փոխ ցավի կամ գոհունակության կանչերով, երբեմն նաև հիշողներով, որոնց սովաբ ու արդար բաժինը օրվան պետական մարզող կուղղվեին։

Մարավը կշարլարեր բոլորը։ Ամեն ոք դեպի հրապարակ կփութար ուր ջրհան մը նըշմարեր էին։ Առաջին գացողները ետ դարձան հուսահատ, որովհետև կառապաններն ու ժանտարմաները արդեն ջրհանին մոտ տեղավորվեր էին իրենց անասունները ջրելու, իսկ վեց դուլներ կային ջրհանին առջև, 42 կառքերուն 84 ձիերուն համար, ու վեճը ծագեր էր արդեն կառապաններուն և ժանտարմաներու միջև և հետզհետև կսաստկանար։ Ու ահա կարավանին ամենն երիտասարդներն երկուքը, Արմեն Տորյան (Հրայր Սուրենյան) և Փաստրմաճյան, ջրհանին շուրջ տիրող խառնակությունն օգտվելով, հաջողք էին լեցուն դուլներեն մեկը փախցնել, կառքերու պատվարը անցեր էին, և դեպի իրենց ընկերները կու գային, որոնք խելահեղ կրսպասեին ջուրի քանի մը կաթիլի։

Մերենցմե ամենն անհամբերը Կոմիտասն էր։ Հազիվ մեզի մոտեցած, Փաստրմաճյանի և Տորյանի բերած դուլը և անոր մեջ ծփացող վճիռ ջուրը տեսնելով, պոռաց ուրախութենեն, գլուխը առաջ, դեպի դուլը ցցեց և սկսավ թրվալ։ Դեռքերը արագորեն իրարու շփելով, ինչպես հաճախ կըներ հրճվողի պահերու մեջ։ Աշվրներուն հրավառ նայվածքը պարզապես զամված կմնար դուլին մեջ հանգած ադամանդավառ ջուրին, իբրև թե անկե դուրս աշխարհ գոյություն չունենար իրեն համար։

Սակայն այդ դուլին խմելը խնդիր մըն էր։ Գավաթ կամ ունէ աման չունեինք, և չէինք ալ կրնար մեր ափերեն օգտվել, որովհետև ամենուս ալ ձեռքերը երկար առնեն ի վեր չէին լվացված, և ճամփուն ընթացքին ամեն քանի քսվելով-քսվելով այնքան աղտոտած ու սեցած էին որ շատեր պատրանքը կունենային թե ձեռնից կկրնեին։ Պետք եղավ որ դուլը բերող երկու շուտիկները վերցնեն գայն մինչև վարդապետին բերանը որպեսզի խմելու ձև մը գտնեի։

Բայց ճիշտ այն պահուն ուր Կոմիտաս շրթունքը ցցած, ձեռքերը դուլին կերկնցներ իր հենակ, որպեսզի կարենա հանգիստ խմել, ձիավոր ժարտարմաներեն մեկը, որուն մեզի մերձենալը չէինք նշմարած, քիտ հարվածով մը դուլը թոցուց Փաստրմաճյանի ու Տորյանի ձեռքեն։ Բարեբախտություն մըն էր

որ հրկաթե լայն շրջանակներով ծանր ջրամանը Կոմիտասի կամ ուրիշի մը գլխուն չըրախեցավ. հետեանքը կրնար շատ ծանր ըլլալ. Բայց Կոմիտաս այդ ընդհարման վախը կրեց, և երկու քայլ ետ նետվեցավ, աջ քաղովը բոլորելով գլխուն շուրջ, իբր թե զայն պաշտպանել ուզեր գալիք վտանգի մը դեմ: Միայն մաս մը ջուր ժայթքած էր դեմքին վրա, և սկսավ կաթկթիլ մորուքն ի վար: Թրջեցավ մանավանդ նրվանդ Զավուշյան, որ անոր ճիշտ մոտը կանգնած էր:

Անքան արագությամբ տեղի ունեցավ այս անցքը որ մեզմե շատեր չէին հասկեցած թե ի՞նչ պատահեցավ իրոք: Դուլը գետինն էր, ամբողջովին պարպված, և ուրիշ բանի չէինք նայեր:

Կոմիտաս պարզապես շքամբ էր, բոլորովին անշարժ կմնար, իբր թե քարացած ըլլար, և կարծես չէր նշմարեր այն թաշկինակները զորս մեր ընկերներն ու մանք իրեն կերկարեին որպեսզի չորցնե գեմքը: Աչքները, որոնց մեջ եթե ոչ սարսափի, գունե արտակարգ զարմացման արտահայտություն մը պաղած կմնար, չէր բաժներ ժանտարմային: Այս վերջինը, անհասկանալի մոլուցք մը բերնին, ծոցեղավ վերցուց դուլը ու հեռանալու վրա էր, երբ Իպրահիմ էֆենտի. — կարավանին վարիչը, — որուն ամենատես աչքերեն չէր խուսափած այս միջադեպը, մեր կողմը շտապեց և կեղծուց դաշն:

— Ո՛ւր կտանիս այդ դուլը, հարցուց:

— Մեր հայվանները (անասունները) պիտի ջրեմ:

— Էվվեյա պո՛ւ հայվանլարը (է՛ն առաջ այս անասունները), պոռաց Իպրահիմ էֆենտի, դուլը վար դնել տալով:

Ասիկա ըսավ շատ քնական եղանակով մը, թերևս առանց մտքեն անցնելու թե կրնայինք անկե վիրավորվիլ: Անշուշտ ավելի վայելուչ կերպով մը կրնար ըսել Էվվեյա պո՛ւնլարը (էն առաջ ասոնք), բայց չեմ կարծեր որ հայվան բառը մեղ նախատելու մտքով գործածեց: Թուրք պաշտոնատարները հաճախ կրկերակրեին դայն, — պարզ կրթության պակասի, անփափկավարություն և կամ վարժություն բերմամբ: Եվ մեր հայ աղաներն ալ այդ բառով զգոհություն կարտահայտեին, երբ թերություն մը տեսնեին իրենց ստորադասներուն կամ պաշտոնյաներուն մոտ:

Ժանտարման, միշտ նույն անբռնելի մտմտությո՜ւն բերնին, թերևս ակուսներուն մեջեն հայհոյելով, հեռացավ գնաց, Կոմիտասի աչքերը միշտ անբաժան մնացին անկե, մինչեվ որ անհետացավ:

Իսկ Իպրահիմ էֆենտի, պարապ դուլը ձեռքը դեպի հրապարակը ուղղվելով, վերջ տվավ ժանտարմաններու և կառապաններու

միջև ծագած վեճին, և անշուշտ իր հրամանին վրա էր որ կառապաններ տրամադրելի վեց դուլներեն չորսը լեցնելով մեզի բերին, խընդրելով միայն որ շուտ հագեցնենք մեր ծարավը:

Բնական է շտապեցինք, մանավանդ որ այդ դուլներեն ջուր խմելը այլևս որեւէ դժվարություն չէր ներկայացնեիր, շնորհիվ նախախնամական շերեփի մը զոր ումանք խանին նպարավաճառին մոտ գտեր էին, և զոր մաքրեցին ոչ թե օճառով որ երազ մըն էր Բավիի այդ կայքին մեջ, այլ գետնի հողով:

Կոմիտաս, որ պահ մը առաջ ամենեն ծարավն էր մեր մեջ և ամենեն անհամբերը, և որուն մատուցին շերեփով առնված ջուրի անդրանիկ բաժինը, չխմեց և լոկի խան մտավ:

«Շուտով մոռցանք ժանտարմային հարուցած միջադեպը, Կոմիտասն ալ անոր հետ: Զեմ կարծեր որ իրեն մատուցված ջուրին մերժումը, հետո իր լոկի նահանջը դեպի խանը, մտահոգության և կամ մասնավոր ուշադրություն տալիս դարձան նախատեսներուն կողմի: Եղածը ինքնին մեծ բան չէր: Աքսորի ճամփու մը վրա, ժանտարմայի մը բրտությունը անշուշտ անակնկալի մը բնույթի չի ստանար աքսորականներու աչքին, թողունք Թուրքիո, նույնիսկ բոլորովին քաղաքակիրթ երկիրներու մեջ: Ժանտարման ամեն տեղ և ամեն ժողովուրդի մեջ, անողորմ է, — չըսելու համար ուրիշ բան:

Արդեն ուրիշ զբաղում ունեինք: Թուրք գեղջուկներ հայտնվեցին էին մեր շուրջը, իրենց հետ բերելով խնամով կապված հարդի շոր խուրձեր: Կարելի էր անոնցմե մեկ քանի հատ միացնելով բազմոցի պես բան մը հարդարել կառքերուն հատակը:

...Մկրտիչ (Պասմաճյան) արդեն հեռացեր էր դեպի գեղջուկները, նոճասարյան ու ես ալ անոր հետեւելու վրա էինք, երբ Քեյկլյան որ խանեն դուրս ելեր էր, ձայն տվավ մեզի, ու մեր մոտ գալուն հարցուց թե ի՞նչ պատահած էր Կոմիտասի: Իրմե իմացանք որ վարդապետը «անսովոր երևույթ մը ունի», չի խոսիր ու կասկածոտ նայվածք մը կձգե իր շուրջը շարժուկող, մասնավորաբար խան մտնող ամեն մարդու վրա:

Քանի մը բառով պատմեցինք ինչպե՜ս, առանց ծածկելու թե միջադեպին բուն պատճառը Տորյանն ու Փաստրմաճյանը եղած էին: Պատմեցինք նաև Իպրահիմ էֆենտիին միջամտության պարագան, հայտնելով որ պարզապես կշտամբած էր ժանտարման, մեկ ալ այդ առթիվ անհաճո բառով մը պատկերվով:

Քեյկլյան լայն շունչ մը առավ: Ինք ալ, ինչպես ներսը գտնվողներն ումանք, այնպես

կարծե՞ր էին թե հատկապես Կոմիտասի գեմբան մը տեղի ունեցած է դուրսը, մինչդեռ ժանտարման ո՛չ Կոմիտասի, ո՛չ ալ մեզմե մեկուն կամ մյուսին ուէ խոսք չէր ուղղած: Դուլլին փախցվիլը տեսած միջոցին անշուշտ իր աչքեն չէին վրիպած նաև զայն փախցնողները, Տորյանն ու Փաստրմաճյանը, որոնք Կոմիտասի մոտն էին, և որոնց նույնպես բան մը չէր բռնած, այլ լուկ գուլլը առնել տանիլ ուղած էր:

— Վախցանք որ պարագան ավելի ծանր բան մըն է, ըսավ Քելեկյան:

Հայտնապես ապահովված էր և գոհ կերեվարա:

Երբ խան մտանք, Կոմիտասը տեսանք նստած թրքական սրճարաններու հատուկ ցած ու առանց հենարանի աթոռակի մը վրա, բակին ձախ կողմի խուցերեն մեկուն մոտ, հայտնապես անհանգիստ դրոթյան մը մեջ: Իր շուրջը, նույնպես աթոռակներու վրա նըստած էին դուկտ, Թորգոմյան, զոկտ, Զեմահրեյան, վերապ, Քերոբյան, Պալաքյան վարդապետ և ուրիշներ: Ոչ ոք կիսոսերու Կոմիտաս հազիվ թե անտարբեր ակնարկ մը նետեց մեր վրա, երբ իր առջևն անցանք: Քելեկյան մնաց այնտեղ, ես հեռացա նոճասարյանի հետ և միացանք ծանոթներու խումբի մը:

Այդ միջոցին մեր ստվար մեծամասնությունը խանն էր արդեն: Դուրսը մնացողներն ալ, ցուրտեն խթանված, հետզհետե նեղս կրճատեին: Ոմանք կրցեր էին աթոռակ մը գրտնել ու նստիլ: Ուրիշները երկնցած էին ստորնահարկի խցիկներում առջև փռված փախաթներու վրա, խումբ-խումբ կիսոսեին: Կոմիտասի լանսովորը երևույթը շատ աչքի չէր զարկած, և գուրսը պատահած միջադեպը առհասարակ անծանոթ մնացած էր:

Նախին նպարավաճառը մոտակա Տյումանսուլ գյուղը դրկեր էր մեկը, ուտելիք գտնելու համար: Անոր ընկերացիներ էր դասթեմունիցի թուրք երիտասարդ մը, որ թուրք կիներու կողմն հարձակում կրեր էր Տյումանսուլ անուն գյուղի մը մեջ, գյուղ ուր կիներ միայն կրնանկեն և ուր մտնելու անխոհմտությունը գործեր էր: Մարդուն պուխը դեռ կիսովին կորսված կամար վիրակապերու տակ:

Ե՛րբ այդ միջոցին Կոմիտասի ձայնը առինք, և իր կողմը դարձանք:

— Ժանտարմա՛ն է արեւ, կհարցներ շուրջիններուն, աչ ցուցամատը ցցած դեպի երիտասարդը:

Մեկ երկու հեղ կրկնեց այս հարցումը:

Զեմ գիտեր ի՛նչ պատասխան տվին իրեն: Անշուշտ միշտ վրդովիչ երևույթ մը ունեւր, և աչքերուն մեջ վառող նայվածքը պարզապես անհանգստություն կպատճառեր դիտողին, բայց իր խոսիլը բարենշան բան մը նկատ-

վեցավ անոնց կողմն որոնք տեղյակ էին թե խան դաժնապես ի վեր բառ մը չէր արտասանած:

Ժանտարմայի այդ մտավախությունը, առաջին հայտարար երևույթը իր ջղագրգռության տազնապին, որ նույն գիշերն ու հաջորդ օրը բուրդովին սուր կերպարանք մը պիտի ստանար, իր մեջ բույն դրեր էր արդեն:

Շուտով սակայն դադրեցանք իրմով հետաքրքրվել, և մեր ուշադրությունը կեդրոնացավ դուրսեն եկողներու վրա, որոնք կը ծանուցանեին թե կառքերը լծվելու և շարվեվելու վրա են:

Երիկունը ուշ առնե՛ր բաժնվեցանք Բալլին, երբ դեռ լույս էր: Բուրսա ալ զժգոհ էինք անոր համար որ կնախորտերինք գիշերը խանը անցնել, էնկյուրի-Բալլի ճամփան կես մը խորտակած էր մեզ, և գիշերվան մը հանգիստը, հող չէ թե խանին աղտոտ փախաթներուն վրա, նույնիսկ առանց բարձի ու ծածկոցի, ճշմարիտ կաղզույր մը կրնար դառնալ:

Հետո տարեց մարդիկ կային մեր մեջ, ու նաև հիվանդներ: ...Մտահոգության պարսպա՛մըն էր նաև Կոմիտաս վարդապետի ջղագրգռությունը:

...Կառքերը, ինչպես կնախատեսեինք ու կվախնայինք, շուտով սկսան իրենց դժոխային պարը խճուղիին վրա: Եվ ալ չեմ ակնուրկեր մեր խեղճ ոսկորներուն տաժանքին, մանավանդ երբ մութը իջավ ու կարավանին ընթացքը կատարյալ արշավի մը վերածվեցավ:

...Այս գիշերային արշավանքը դեպի Գալեհիք, ավելի տաժանելի բան մը դարձավ բան մեր ուղեգնացությունը էնկյուրիեն Բալլի:

...Շուտով սարսափն ալ պիտի ավելնար ցուրտին տաժանքին:

Դժնդակ եղած է Բալլիին Գալեհիք տանող ճամփան:

Ե՛րբ այդ շրջանը, կպատմե Արամ Անտոնյան, այլ գեանուղի մը, ուր խավարը կտիրապետեր կուպրի թանձրությամբ, և որուն մեջ ամեն բան, մեր գլխուն վրա ցցված ժայռեր, անոնց ծերպերուն մեջ գանգրացած վայրի բույսերու խուրճերը, հողի ցցունքներ, և ասդին-անդին բոս բախտի հասակ նետած մեծավոր ծառերու զագաթներ, ուրուային ձևվեր կառնեին, զորս մեր երևակայությունը իսկույն կփոխակերպեր առասպելական հրականերու կամ հեքիաթունակ հրեշներու:

Զգարմացանք երբ վերջեն Պալաքյան վարդապետ պատմեց թե Կոմիտաս, որ իրենց կառքին մեջ կգտնվեր, այդ մթին անցքին ամբողջ երկարությամբ վրա տեսած ժայռի ցցունքներն ու ծառերը կշփոթեր դարանակալ ժանտարմաներու հետ, և կատարյալ սարսափի մը մատնված, իր գեմքը կժածկեր եր-

կու ափերով, կամ գլուխը ուղեկցին վերարկուին ծալքերուն տակ կմխրճեր, պաղատելով որ «Պահպանիչ» կարգա իր վրա Պայաքյան կավելցնեն թե ինքն ալ անձնապես այն տպավորության տակ մնաց թե յուրաքանչյուր ծառի կամ ապառաժի հտին ավազակ մը կծկտած է, հրացանը ձեռքը, պատրաստ կրակելու:

Ուրիշներ ավելի եղբրական մտավախություններ ունեցեր էին, ինչպես վերջին պատմեցին: Եվ ասիկա ալ դարմանալի չէր, որովհետեւ այդ սոսկալի արահետը, որուն մեջ մխրճվեր էինք, իրոք հարմարագույն սպանդի վայրերն էին կրնար դառնալ, եթե այդ եղած ըլլար մեզ առաջնորդողներուն նպատակը:

Բարեբախտաբար երկար չտեց, Շուտով մեր հտին թողուցինք զայն ու վերստին միտանք դաշտալի տարածություն մը, որուն վրա խճուղին բաղդատարար լավ վիճակի մէջ կմտար:

Արամ Անտոնյան նկարագրելով քսորականներու կարավանին ժամանումը Գալիսի, կպատմե թե անոնք ինչպես դետեղվեցան խանի մը մեջ, որ երկհարկանի տեղեկ շենք մըն էր, լերկ բարձունքի մը վրա:

«Վերջին անցքը որ կհիշեմ,—կգրէ,—Կոմիտասի մուտքն էր. Պայաքյանի հետ կողք-կողքի մտան ներս, և Կոմիտաս պարպապես ոռնաց, տեսնելով դետեղարկին մեջ ծավալած ծուխը որ բոլորովին թանձրացեր էր ատենն ըր Վեր, որովհետեւ մեզմե շատեր շարունակաբար ծխելու վրա էին: Գիտեինք որ նույնիսկ սովորական կյանքի մեջ, թողունք վառվածք, չվառած սիկարեթի մը տեսքն իսկ զդայնություն կպատճառեր իրեն: Զինքն ալ վերնահարկը հանեցին շուտով, կենթադրեմ կես մը բռնի, որովհետեւ քանի կրարձրանար, ծուխը այնքան զգալի կըլլար, ու կգծկամակեր կըլլու»:

Անտոն, քսորականները մոտակա հրապարակը կհանվին որպէսզի գնումներ ընեն ժանտարմաներու հսկողության տակ:

Եկող միջոցին մեր մոտ տեսանք Կոմիտասը, միայնակ, ինչ որ շատ լավ տպավորություն ըրավ ամենուս ալ վրա: Քանի որ հետեւորդ չունէր, որեւմէն հանդարտած պետք է ըլլար: ...Մեր շուրջն էին ժանտարմաներէն մեկ քանիս որոնք նույնպէս գնումներ կընէին: Կոմիտաս՝ միշտ նույն ակնածությամբ կրարներ բոլորն ալ, այնքան խոնարհությամբ որ մեզմե ոմանք, մանավանդ անոնք որ տեղյակ չէին իր ջգադրողության պարպանքներուն, սկսան կասկածիլ թե ժանտարմաները կհանգնեն:

Եվ սակայն շուրջ էր, եթե կարելի էր շրջութիւն տնտես տալ այն հոգեկան դրություն որուն մեջ կուվայտեր Մեկ ալ կհորդորեր

նույնը ընել, և կարծես կդարմանար որ ժանտարմաները ոնէ մտահոգության առարկա չեն մեր մոտ:

Հայտնի էր թե ժանտարմայի մտավախությունը միշտ վառ կմտար իր մեջ, հակառակ տեղը որ այդպէս հանդարտ կթվէր: Պահ մը վերջ, երբ ալլես ժանտարմա շմաց մեր շուրջը, սկսավ նույն հարգալի որդուններուն առարկա դարձնել բոլորովին անձանթ մարդիկ, որոնք ապշությամբ կդիտեին իր ընթացքը, և զլուխին թոթվելով իրենց համփան կշարունակեին, առանց բան մը հասկցած ըլլալու այդ անակնկալ հարպանքի արտահայտութիւններէն: Տարակույս չկար որ Կոմիտաս զանոնք կշփոթեր ժանտարմաներու հետ, ինչպէս գիշերը նույն շփոթության առարկա դարձուցեր էր ճամփուն վրա գտնվող ծառերը, երբ սրարշավ կանցնէինք անոնց անդենն:

«...Գալիսիք 200 տուն հայություն ունէր, և ասոնք ոնէ մտավախութեն վերձ էին այդ օրերուն: Շուտով արհամիրքը պիտի հնձեր բոլոր այրերը, կիներն ալ թուրքերու ցանկության առարկա դարձնելով: ...Գիշերը իմանալով որ բազմաթիւ հայեր բերված են և թե կրնամորենք ալ կային անոնց մեջ, այդ ապրիվ մարդիկ անկողիններ ու վերմակներ բերեր էին վերջիններուն համար: ...Այնպէս որ րավական հանդիսատէ գիշեր մը անցուցեր էին եկեղեցականներն ու հիվանդները, անշուշտ նաև ուրիշներ:

...Կոմիտաս ալ շուտով հանդարտեր էր, բունեն ընկճվելով, և կըցեր էր քնանալ:

Առավոտուն, շատեր փութացեր էին Գալիսիի վաճառատեղին՝ գնումի: «Գալիսիքն խումը մը հայեր եկեր էին մինչև վաճառատեղին, և ապահովաբար կուղեկին մեղի հետ հարարերության մեջ մտնել: Բայց կզոյնանային, թերես ո՛չ այնքան իրենց, որքան մեր վիճակը զգալապեսնելու մտավախությամբ: ...Բայց ատեն չունեցանք մերձենալու այդ հայերուն, որովհետեւ հանկարծ իմացանք թե էնկլուրինն ձիավոր ժանտարմա մը հասած և հրաման մը բերած է մեր մասին: ...Բնական է ալլես չհամեցանք վաճառատեղին, Ռմանք զանապաւն ենթադրությանց մղվիլ սկսան: Լավատեսները կիտրհեն թե ժանտարման կրնա մեր Պոլիս վերադարձին հրամանը բերած ըլլալ:

Երբ խանին առջև հասանք, մեզմե քանի մը փոքր խումբեր միայն կգտնվէին այնտեղ: Վաճառատեղին դարձողներն ալ հաղվելով, հաղիվ երկու տասնյակի կհասներ մեր թիվը: Մյուսները, տմբողջովին հովիտն էին, ու անկե ոչ որ վեր կելլեր ալլես: Վերը մնացողներն ալ ավելի տեղեկություն մը չունէին ժանտարմային բերած հրամանին նկատմամբ:

Այնտեղ տեսանք նաև Կոմիտասը, և մեզի դարմանալի թվեցավ որ տակավին վերը կմնա, մինչդեռ իր ճամփու ընկերները և ընդհանրապես բոլոր անոնք որոնցման սովորաբար շրջապատված կմնար, հովիտն էին արդեն:

«Մեկը ըսավ թե Կոմիտաս ալ իջնելու վրա էր, նույնիսկ քայլերը երազեց երբ էնկյուրիեն եկող ժանտարման հրապարակ հասավ, բայց տեսնելով որ այս վերջինը վերստին ձի հեծնելով դեպի հովիտ կշտապե, խսկույն ետ դարձավ ու մնացաւ:

Վերջին պիտի պարզվեր թե էնկյուրիեն եկող ժանտարման հրաման մը բերած էր հնչակյան Հակոբ Ավետիսյանի (Արծրունի) մասին՝ որ Չանղըրը տարվող խումբին մեջ էր:

Արդարև, կարավանին Գալեճիք գտնված ատեն, աքսորականներն կզատեն, Այաշ դրկվելու համար, Արծրունին Հետո բոլորը կբերվին հովիտ, ուրկե ճամփա պիտի հանվին դեպի Չանղըրը, աքսորականներու վերջին կայանը:

«Երբ հովիտն կիջնեինք,—կպատմե Արամ Անտոնյան,—Կոմիտաս պահ մը մեր մոտ մնաց: Բոլորովին հուզված ու անհանդարտ երևույթ մը ունեւր, ու թները շարժելով բաներ մը կմըթմըթար դորս չէինք ըմբռնեք որոշակի: Հետաքրքրված էր թե թմանտարման ինչու տարավ Արծրունին», և պետք եղավ իրեն բացատրութիւն տալ եղածին վրա: Չեմ կարծեք սակայն որ մտիկ ըրավ: Երթունքները կերերտկային, բայց ոչ մեկ բառ կխոսեք անոնցման: Կզգայինք իր ներքին փոթորիկը որ կտատապեցնէր զինքը, բայց մեզի կարելի չէր անոր թափանցել:

Հետո անցանք զինքը, և միջոց մը շտանք թե ի՛նչ կընեք, մինչև որ հանկարծ իր ձայնը առինք նորեն, բայց այս անգամ հրատակ ու որոշ:

— Բացվեցեք, ճամփա տվեք, կըսեր:

Մեր մտածումը այն եղավ թե ժանտարմա մը կու գա ետևնուս: Դարձանք և նայեցանք դեպի խանը, բայց ոչ ոք տեսանք ճամփուն վրա: Իրավ է, բան մը կհետեւեք մեզի, բայց մարդ չէր, այլ քոսոտ ու հիվանդկախ էջ մը որ իր խրխլած սրունքներուն վրա տատանելով կիջնէր հովիտ, ուր խոտը չէր պակսեր:

Կոմիտաս կանգ առած էր, վերարկուին ծալքերը փորին շուրջը սեղմած, և երբ անասունը իր առջևին կանցնէր, մարմինը կորացուց հարգանքի դիրքով մը, ու ձեռքի շարժումով մը երկար ողջույն մը ուղղեց անոր: Հետո, մինչդեռ անասունը մեզի կմոտենար, Կոմիտաս հանձնարարեց մեր խումբին որ լաճապարներ, թթողունք որ ժանտարման անցնի երթաւ: Պարզապես իշուն կակնարկեր:

Տեսարանը զավեշտական ընույթ մը ունեւր անշուշտ իր տազնապին անտեղյակ եղողներու համար, և ոմանք խնդացին, կարծելով թե կկատակե, բայց մենք ախուր մնացինք:

Ասիկա վերջին արտահայտութիւնը եղավ ժանտարմայի իր մտավախութեան, և անկե անդին, մինչդեռ Չանղըրը ճամփուն վրա էինք, իր ջղագրգռութիւնը բոլորովին տարբեր ընույթ պիտի ստանար:

«Առտվան ժամը ութն էր ապրիլ 15/28-ի այդ հինգշաբթի օրը, երբ Գալեճիքն մեկնեցանք մոայլ, գրեթե ճնշող օդով մը: Տասնեակու ժամվան ճամփա մը ունեինք մեր առջև մինչև Չանղըրը,—տասնեակու ժամվան շարշարանք, կխորհէինք,—բայց բաղդատմամբ նախորդ օրվան, այս վերջին հանգրվանը շատ պիտի չնեղեք մեզ:

...Խճուղին, դեպի Չանղըրը, բարեբախտաբար լավագույն վիճակի մեջ էր, բայց երկար ատեն մնաց անհարթ ու անհամասար, ու շարունակ պետք կծագեք ավելի նվազ ցից բարձունքների վեր ելլելու: Ընթասույաները կջանային կարելի եղածին չափ շուտ հասնել Չանղըրը: Կառապաններ անոնց ցանկութեանն օգտվեցան, և ճամփուն ընթացքին հաճախ մեզ վար իջեցուցին բարձունքներու ստորոտը, թե՛ գնացքը երազելու և թե՛ մանավանդ իրենց ձիերուն տաժանքը մեղմելու համար:

Այդպես հետիտն, քնական է ավելի գու՛ղինք, որովհետև ոչ միայն կփրկվեինք կառքերու ցնցումներեն,—ինչ որ մեծագույնն էր մեր հոգեբուն,—այլ առիթ կունենայինք համախումբ մնալու, իրարմէ լուր առնելու, նույնիսկ շաղակրատելու, երբեմն բոլորովին ապշեցնուցիլ թեթևությամբ մը, իբր թե այդ ճամփորդութեան ծայրը աքսորը չլլար:

Հետզհետե լուր առինք նախորդ օրվան հիվանդներուն վրա: Բացի ծերունի Վրթանես Փափաղյանեն, որ շատ տկար կմնար, մյուսները բաղդատարար լավ դրութեան մեջ էին:

Բայց Կոմիտասի վիճակը շատ ծանրացած էր: Կըսեին թե այլևս ժանտարմաներով չի հետաքրքրվիր քնով, և իր մտավախութիւնը անոնց մասին բոլորովին անհետացած է, սակայն շարունակ կխոսի Պոլիս թույած թուղթերուն վրա, պոռալով թե ի՛նչ պիտի ըլլան իր աշխատութիւնները: Զինքը հանդարտեցնելու համար ըսեք էին թե անգամ մը որ Չանղըրը հասնինք, դուրին է իր թուղթերը և դիրքերը բերել տալ, և ավելի հանգստութեամբ կրնա իր աշխատութիւններուն վերադառնալ, բայց չէին կրցեր համոզել:

Ասիկա նոր երևույթն էր իր ջղագրգռութեան, որ նույն օրը մշտապես պիտի արտահայտեք ճամփու ընթացքին, մանավանդ կեսօրե վերջ և Չանղըրը մոտեցած ատեննիս:

Այս վերջին երևույթին մեջ, իր ջղադրողությունը կերևա բոլորովին սուր և վրդովիչ հանգամանք մը ունենալու որ նույնիսկ շատեր որոնք իրմով չէին հետաքրքրված մինչև այդտեղ, հիմա հաճախ կ'ստանան իր վրա, և իր «հիվանդության» ալ վրա, և վախ կ'հայտնեն իր հետևանքը կրնա ծանրագույն բան մը ըլլալ:

Ոմանք ալ կ'դարմանային թե ինչպե՛ս Կոմիտաս այսպե՛ս հանկարծ փոխվեցա՛վ, իրոր բանտին մեջ, ինչպե՛ս ճամփու ընթացքին, մինչև Բազմի, Կոմիտաս երբեք արտակարգ մտահոգություն մը ցույց չէր տված: Երբ զեռ բանտն էինք, կատակ մը կ'նկատեիր եղածը, և այն համոզումը ունենալ թե շուտով սխալը կ'դարմանվի: Այնքա՛ն հեռու էր սե մտածումներն որ առհասարակ շուրջինները կ'մտնեին և կ'քաջալերեիր, ամեն մարդու սիրտ կու տար, կ'ջանար վանել անոնց մոտ արմատ ձգած անհուսությունն ու մտափախությունները: Ասիկա պարզապէս կ'հայտնեն թե ներքնապէս անզոր կ'մնա: Եվ այս ներքին անզորությունն է որ սովորաբար արհուրջուն կ'անվանենք: Կոմիտաս, մեր մեջ, իրապէս մեկն էր ամենեն արիւնքեղինը:

Արամ Անտոնյան քանի մը ատը քաղկեդոն հետո Բյուզանդ Քեչյանի և զոկտ. Թորոսյանի հուշերէն Կոմիտասի արի կեցւածքին մասին աքսորի օրերուն, կ'արուեստէ:

«Անոնք որ զինքը այդպէս տեսնէր էին, չէին կրնար ըմբռնել թե անշշան միջադէպը, — ժանտարմայի մը կողմէն դրծված պարզ ու անհետևանք կոպտություն մը որ իրեն զեմ ալ չէր ուղղված, — կրցա՛յ մեկ վայրկյանն մշտնա իր մեջ քանդել այդ հողեկան անզորությունը: Ասիկա պարզապէս հանելուկ մը կ'թվէր իրենց»:

Խնդիրը հոն է սակայն որ այդ ներքին անզորությունը անեղծ մնացա՛ծ էր իր մեջ, երբ Բազմի միջադէպը պատահեցա՛վ, Չեմ կարծեմ:

Կոմիտաս բանտին մեջ, ինչպե՛ս ճամփուն վրա, շրջապատված մնաց այն մարդոցմէն որոնք առաջին վայրկյանն իսկ մտահոգությունը ունեցան թե մեր ձեռքակալությունը պարզապէս մահվան դատապարտություն մըն է, և թե ուշ կամ կանուխ բոլորս ալ պիտի զոհվինք ո՛նէ՛ տեղ, ո՛նէ՛ պատրվակով ու ո՛նէ՛ եղանակով: Անշուշտ այսպե՛ս խորհողներուն ամենքն ալ ընհատակվեցան, ոմանք նույնիսկ առաջին աղատողները եղան, բայց վերջապէս մինչև իրենց փրկությունը, ամեն օր, ամեն ժամ, գրեթե ուրիշ բանի վրա շխտեցան, այլ միայն մեղի վիճակված արկածին այդ սարսափելի ելքին վրա: Ասոնց մեջ պատմության հմուտ անձեր կային, — կ'հիշեմ լոկ Քելեկյանն ու Քեչյանը, որոնք իրենց հոգեւորական, կամ իրենց բառով՝ հեռատե-

սության ուժ տալու համար օրինակներ կրեցին Ֆրանսական մեծ հեղափոխության արհամիրքի շրջանն, թվելով շարան-շարան գլուխները բոլոր ականավոր մարդոց զորս կ'լիւծեինք հնձած էր, և նմանության եզրեր կ'գտնեին, ավելի ճիշտը՝ կստեղծեին անոնց և իրենց միջև:

Կոմիտաս կ'սեր այս ամենը, և շատ հավանականաբար, գրեթե ամեն օր և ամեն առթիվ կ'ընկնէր այդ վարհուրելի պատմությունները, մինչև մեր Բազմի հասնիլ արդեն քանդել էին իր հողեկան անզորությունը, ա՛յնքան որ ուղտիկ պատճառ մը կրնար տեղի տալ ոչ միայն պարզ ու ժամանակավոր ջղադրողության մը, այլ նույնիսկ ավելի ծանր մտքի խանգարման մը: Չմոռնանք որ իր ֆիզիկական բտեսակ մըս դրությունն ալ, զոր երբեք պետք չէ աչքն հեռացնել, զինքը շատ արմատիկ կ'զարծնէր այդ կարգի տազնապի մը:

Իրերը այնպէս բերին որ ժանտարմային միջադէպը ըլլա այդ պատճառը: Բայց այդ միջադէպը իր մեջ բան մը չխախտեց, այլ պարզապէս իրմեջ արդեն իսկ խախտած բանի մը հայտնաբերում տեղի տվա՛վ: Եթե այդ միջադէպը պատահած ալ չլլար, ուրիշ ո՛նէ՛ բան, մեզմե մեկուն կողմէն եղած անհարկ ականարկություն մը, կատակ մը, կրնար պատճառ դառնալ միևնույն ջղային տազնապին:

Ասոր ապացույցը սա է որ ժանտարմաները, որոնք այնքան մտափախություն կ'պատճառէին իրեն, վերջնականապէս մոռցա՛վ, բայց իր ջղադրողությունը մնաց, ուրիշ երկվույթ մը ստանալով:

Եվ ավելի հատկանշական ապացույց մըն է սա պարագան, — ինչպե՛ս Չանդրըր հասնելն ետքը տեղեկացանք, — որ իր ջղադրողության այդ նոր երևույթին հայտնության պատճառ դարձած էր իր ճամփու ընկերոջ, Պալաքյան վարդապետի կողմէն եղած պարզ ու անմեղ հարցում մը թե արդո՞ւք ձերքակալվելէն առաջ ո՛նէ՛ կարգադրություն ըրա՞ծ էր իր ձեռագիրներուն փրկության համարս:

Կոմիտաս երբեք վար չիջա՛վ ճամփու ընթացքին, ինչպե՛ս չիջան նաեւ եայլըներու մեջ թառած իր բախտակիցները:

Գծարխտարար Արամ Անտոնյան շավարտեց աքսորի իր հուշերը: Ընդհատեց զանոնք մեկնէ՛ հավանաբար Արմաւուրի վարչության հետ անհասկացողության մը պատճառով: Այնպէս որ լրիվ մեղ ծանոթ չեղան Կոմիտասի և իր ընկերներուն անցուցած օրերը Չանդրըրի մեջ, այն մանրամասնություններով զորս ի վիճակի էր տալ միայն ինքը Անտոնյան: Ան կարավանը կրեց Կապոնի մինչև Թյուրքի մոտ, շարաշուք այն վայրը ուր ինք, ճիշտ ու ճիշտ 81 օր վերջը, այն է ողորմա-

6-ին՝ կառքի գծախառն արկած մը պիտի ունենար երբ 26 ընկերներու հետ Չանգըրընն էնկյուրի կտարվեր, — գծախառնություն որ հեղանդանոց պիտի պահեր զինք ատեն մը և պիտի փրկեր զայն այն սպանդեն որուն իր ընկերները զոհ պիտի երթային էնկյուրիեն մեկնելի քիչ հետո: Անոր այդ արկածեն շաբաթ մը ետք, օգոստոս 13-ին, միշտ «Թյունելի» այդ տխրահամբավ խանին առջև էր որ ոչխարներու պես պիտի մորթվեին վարուժանքն ու Սևակը, իրենց նույնքան գծախառն երեք ընկերներուն, Օրթագյուղի հացագործ Արթին աղայի, կազմարար Օննիկ Մաղազանյանի և Երկաթագործ ուրֆացի վահան Քեհյայանի հետ, հինգե ալ թեկնեմն կապված և բոլորովին մերկացված, որպեսզի իրենց հաղուստներն ու ներքնազգեստները չկտրատվին, շարյուժտափն, շաղտոտին, արժեքն չիյնանա:

Արամ Անտոնյան Կոմիտասը կթողու կարավանը Թյունել մեկնելի առաջ, հիշելով միայն որ ան Գալեհիքեն բաժնվելի հետո կառքեն երեք վար չիլավ ճամփու ընթացքին:

Եվ թող ընթերցողը մեզ թույլ տա որ դիմենք աքսորի իր մյուս ընկերներու հուշերուն ալ, ճանչնալու համար այն քանի մը շաբաթը զոր Կոմիտաս անցուց աքսորի մեջ, Եթե շատ բան չդիտցանք դժնդակ շաբաթներուն մասին զորս Այաշի աքսորականներն ապրեցան իրենց եղբրական վախճանեն առաջ, Չանգըրը տարվածներուն մասին ավելի բուրեղ ունեցանք, վերապրողներու հուշերուն շնորհիվ, իրենց հուշերը գրեցին, օրինակ, Գրիգորիս վրդ. Պայաքյան (հետո եպիսկոպոս), Միքայիլ Շամտանճյան, Բյուզանդ Քեչյան, Սարգիս Սրենց, դոկտ. Նազգաշյան, Հայկ Խոճասարյան, ավելի կամ նվազ մասնաժամանակով մեր մասին մասին ալ, հնարավոր դարձնելով որ դայն ճանչնանք նաև այն օրերուն՝ երբ հոգիով ու շիղերով ամուր այն մարդը որ Կոմիտասն էր, հետզհետե ցնցվի ներսեն, ու հոգեկան վերք մը իր ներսը բանի, դայն հասցնելու համար վերջնական փլուզումի մը:

Պայաքյան վարդապետ կպատմե թե աքսորականները ինչպես ժամանեցին էնկյուրի, և թե ինչպես ճամփու հանվեցան հոնկե դեպի աքսորավայր, կնկարագրե իրենց սարսուռ երբ կառքերու շարանը, էնկյուրի իրենց հոտին ձգելով, մտավ սաղերու և ձորերու դաշարապետույտ անհարթ ճամփաներու մեջ. «Քանի մեր ճամփան կշարունակեինք և

մարդաբնակություններն կհեռանայինք, այնքան մեր հոգիները կխռովեին և մեր մտքերը շարագուշակ մտածումներով ինքնալիկումի կենթարկեինք: Զի ամեն ապառաժի և ամեն ծառի ետև պահվրտած ավազակներ տեսնել կկարծեինք, և ամեն ծառն վար ձգված կախորաններ կախաղանի շվան կկարծեինք... Հայ ժողովրդի շինական երգերու վարպետն ու անդուզական վարդապետ հայր Կոմիտաս, որ մեր կառքին մեջ կգտնվեր, արդեն մտքի տարօրինակ տրամադրություններ կը ցուցներ, և հաստարմատ ծառերը շարժուն և հարձակող ավազակներ կարծելով, միշտ իր գլուխը վերարկուի փեշերուն ներքև կշանար թագցնել, որսորդի երկյուղեն ամպրի առջև գլուխը թաղող կաթավներու նման, կթախանձեր որ «Պահպանիչ» ըսեմ իր գլխուն վրա, հուսալով վերագտնել իր խռովահույզ հոգիին հանդարտությունը»:

Կոմիտասի մասին աքսորի իր հուշերը պատմեց նաև Հայկ Խոճասարյան, Նախկին տնօրեն Մայր վարժարանի, և հետո Բերայի էսայան վարժարանի՝ Խոճասարյան աղային երեսփոխան ալ էր, մեկն էր կեղտոնի խմբակցության ամենեն կարկառուն անդամներեն, և մաս էր կազմած Հարստահարությանը հանձնաժողովին: Եվ սակայն միշտորդությունց շնորհիվ կրցավ աքսորեն դառնալ, և հայ կյանքի մեջ դեր կատարեց հետադային ալ Պոլսի թե Ամերիկա Խոճասարյան կղեր իր հուշերուն մեջ:

Սեպտեմբեր 24-ին Պոլսեն աքսորված հայ մտավորականներու շաբթին մեջ էր նաև Կոմիտաս վարդապետ: Երեք հարյուրի մոտ ձերբակալաբնորու մեջ ամենեն ընկճված ինքն էր. իր արվեստագետի նուրբ և զգայուն հոգին չէր կրցած տոկալ այսքան ծանր ցնցումի մը, և դիտակ՝ թե ճակատագիրը վաղվան համար ինչ վերապահած է իրեն, մահվան արհավիրքի մեջ կապերը: Որոշ էր որ կյանքի պահպանման բնագոյը այլևս լռեցուցած էր իր մեջ ամեն խորհուրդ և նախասիրություն: Բանտին մեջ հետո դեպի Չանկըրի աքսորի տաժանագին ուղևորության բովանդակ տեղուկները, գլուխը երկու ձեռքերուն մեջ առած, ինքնամիտք և անխոս, արձանային լուռությամբ կպահեր, անհաղորդ իր շուրջը անցած-դադարածին: Ի՞նչ դառն հակազդեցություն. ընկերային շրջանակի մեջ ևս ճանրեցած էի զինքը. միշտ զվարթ և ժպտուն»:

⁴ Հայ Գողգոթան, էջ 92—93:

⁵ «Կոմիտաս վարդապետ, անձնական հուշեր(ս), «Հայաստանի կոլեակ», 1936, թիվ 1, էջ 11:



Հ. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

ԱԽԹԱԼԱՅԻ ՎԱՆՔԸ ԵՎ ՆՐԱ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԱԽԹԱԼԱ ԱՎԱՆԻ ՄՅՈՒՍ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԸ

Ա. ՊԱՏՄԱ-ԱԾԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՀԱՄԱՌՈՏ ԱՎՆԱՐԿ

Ախթալայի վանքը գտնվում է այժմյան Ախվերդու շրջանի Ախթալա քանվորական ավանում՝ պատմական Հայաստանի Գուգարք նահանգի Տաշիրք գավառում: Ծանապարհը Ախվերդի քաղաքից նախ ընթանում է Դեբեդ գետի աջ ափով, ապա Երևան-Թբիլիսի երկաթուղու Ախթալա կայարանի մոտ հատուկ կամուրջով անցնելով գետը՝ շարունակվում է գետն ի վայր նրա ձախ ափով, ապա անցնելով նրա ձախակողմյան վտակը՝ Բանդիսագող Ախթալա գետակը, անմիջապես թեքվում է դեպի ձախ և գետակի ձախ ափով, անտառի եզրով ոլորապտույտ քարձրանում է հանքագործների ավանը՝ Ախթալա: Ավանը շրջապատված լիճելով անտառապատ լեռներով, կարկաչաժուռ գետակներով և կանաչազարդ ու ծաղկավետ ծորերով, մի գմայելի տեսարան է ներկայացնում այցելուի համար, հանդիսանալով գեղեցկատեսիլ և չքնադազել Լոռիի նույնքան հետաքրքիր ու գեղեցիկ անկյուններից մեկը:

Ախթալա ավանի բնական այդ գեղեցկությունը լրացնում են այնտեղ գտնվող քաղամայիլ ու քաղմայիսի շատ հետաքրքիր ու արժեքավոր պատմական հուշարձանները:

Ախթալա ավանը միաժամանակ Հայաստանի հնագույն բնակավայրերից է, շատ վաղ ժամանակներում նա հանդիսացել է Տաշիրք իշխանների ազարակը, իսկ վաղ միջնադարում, ինչպես այդ մասին տեղեկացնում են պատմական աղբյուրները, դարձել է բնակավայր՝ պահպանելով իր հատուկ Ազարակ անունը: Միջին դարերում վերակոչվել է Պղնձահանք, հավանաբար այնտեղ հայտնաբերված հարուստ պղնձահանքերի շնորհիվ, իսկ ուշ միջնադարում հայտնի է Ախթալա անունով: Ախթալայի վանքը տեղադրված է ավանի կենտրոնական մասում,

Բյուսիսից հարավ ձգվող մի լեզվաձև կամ ցամաք թերակղզու տեսք ունեցող քարձրավանդակի վրա, Տաշիրքի իշխանների ավանդաճի հին ամրոցի ներսում:

Պատմական աղբյուրները շատ քիչ տեղե-



1. Ախթալա. — վանքի և ամրոցի ընդհանուր տեսարանը արևելքից

կություններ են պարունակում այդ խիստ հետաքրքիր հուշարձանի մասին, նրա վրա քաղակալում են նաև վիմագիր արձանագրությունները: Եղած պատմական տեղեկություններից պարզ է դառնում, որ վանքն էլ համապատասխան ձևով փոխել է իր անունը, ինչպես ավանը՝ նախ կոչվել է Ազարակի եկեղեցի կամ մեծաստան, ապա Պղնձահանքի վանք, իսկ ավելի ուշ՝ Ախթալայի վանք:

Վրաց մատենագիր Վախուշտն պատմում է, որ «Հաղպատից ցած գտնվում է Մոնկանի հովիտը՝ Լավար լեռան ստորոտում... Ավելի ցած և դեպի Բյուսիս է Ազարակի եկեղեցին, որ Գուրգասյանը (446—489 թթ.) դարձրեց եպիսկոպոսարան, որի իրավասու-

թյունը տարածվում էր Խումանի, Գարդոբանի, Բերդուշի վրա: Նրա կաթուղիկեն շատ նարտարապետական ձևով է շինված և այժմ կոչվում է Ախթալա¹:

Հայ պատմագիր Սիրակոս Գանձակեցին տեղեկացնում է, թե «վախճանեցաւ և Իվանե, եղբայր Զաքարեի և թաղեցաւ ի Պղնձահանքն ի դուռն եկեղեցոյն՝ գոր շինեաց ինքն, առեալ ի Հայոց՝ Վրաց վանս արար»²:

Նույն Գանձակեցի պատմիչը նկարագրելով Չաղատա գորավարի գլխավորությամբ մոնոթեական քանակի 1249 թվականին Վրաստանի վրա կատարած արշավանքները և դրա հետևանքով տեղի ունեցած ավերածությունները, կոտորածն ու թալանը, ավելացնում է. «Յետ այսօրիկ մեռաւ իշխանաց իշխանն առագ, և թաղեցաւ ի Պղնձահանքն ի գերեզմանի հօր իւրոյ Իւանեի»³:

Ավագ իշխանի մահվան մասին հիշատակում է նաև Վարդան քարձրաբերդցի պատմիչը, ասելով. «Ի վեց հարիւր իննսուս և ինն թուին մեռաւ առագ՝ որդի Իւանեի, և թաղեցաւ ի Պղնձահանքն ընդ հօր իւրոյ—այր անագաւ և պատերազմասեր և աղօթական»⁴:

Պղնձահանքի վանքի մասին հիշատակում է նաև Ստեփանոս Օրբելյան պատմիչը: Նրա տեղեկության համաձայն Պղնձահանքի վանքումն էր պահվում այն ս. Նշան մատուցքը, որն Իվանե Աթաբեկը նվեր էր ստացել Սյունյաց Վասակ իշխանից: Իսկ հետո՝ 1216 թվականին Սյունյաց հոգևոր թեմի առաջնորդ Սարգիս Եպիսկոպոսի խնդրանքով նույն Իվանեն նվիրում է Ամաղու Նորավանքին:

Նույն Օրբելյանի տեղեկություններից պարզվում է նաև, որ հետագայում սուր վեճ է ծագում վերո նշանակ Նշան խաչի պատկանելության շուրջը: Այդ կապակցությամբ Լիպարիտ Օրբելյան իշխանի նախաձեռնությամբ՝ տարբեր դավանանքի քարձրաստիճան հոգևորականներից և մի շարք նշանավոր վանքերի առաջնորդներից հատուկ ժողով է գումարվում, քննելու և որոշելու, թե ով է պատկանում վերոհիշյալ ս. Նշան խաչմատուցքը: Այդ ժողովին մասնակցելիս է եղել նաև Պղնձահանքի վանքի առաջնորդը⁵:

¹ Ազգագրական հանգես, գիրք 7—8, Թիֆլիս, 1801, էջ 428—29:

² Պատմութիւն Հայոց—Արարեալ Կիրակոսի վարդապետի զանգակեցոյ, Թիֆլիս, 1808, էջ 210:

³ Նույն տեղ, էջ 305:

⁴ Մեծին Վարդան քարձրաբերդեցոյ—պատմութիւն տիեզերական. Մոսկվա, 1861, էջ 194:

⁵ Պատմութիւն ճահնգին Սիսական—արարեալ Ստեփանոսի Օրբելյանի արքեպիսկոպոսի Սրենաց. Թիֆլիս, 1810, էջ 358—55:

Պատմական աղբյուրների վերը մեջբերված տեղեկություններից միանգամայն պարզ ու որոշակի է դառնում, որ ներկայիս Ախթալա ավանը որպես բնակավայր գոյությունն է ունեցել դեռ ե դարում և կոչվելիս է եղել Ագարակ: Հստ երևույթին ավելի վաղ մա հանդիսացել է Գուգարաց աշխարհի իշխանների կալվածք-ագարակը, որը հետագայում դառնալով առանձին բնակավայր, կոչվել է այդ նույն անունով: Իսկ այժմյան Ախթալայի վանքն էլ կոչվելիս է եղել նրա անունով՝ Ագարակի եկեղեցի կամ վանք, ինչպես սովորաբար Հայաստանի բոլոր վանքերը կոչվելիս են եղել այն բնակավայրի անունով, որի մեջ կամ նրանց մոտիկ գտնվելիս են եղել:

Հետագայում Ագարակը վերակոչվել է Պղնձահանք, ամենայն հավանականությամբ այնտեղ գոյություն ունեցող հարուստ պղնձահանքերի պատճառով: Իսկ Ագարակի եկեղեցին կամ վանքը՝ Պղնձահանքի կամ Պղնձահանքի վանք:

Ավելի ուշ Պղնձահանքը վերակոչվել է Ախթալա և նրա անունով էլ վանքը՝ Ախթալայի վանք:

Թե երբ է Ագարակը վերակոչվել Պղնձահանք, իսկ վերջինս էլ՝ Ախթալա, ստույգ հայտնի չէ, հայտնի է միայն, որ ԺԲ դարի վերջերին այդ բնակավայրը հայտնի էր Պղնձահանք անունով, իսկ ԺԸ դարում նա արդեն կոչվում էր Ախթալա:

Այն նույն մատենագրական տեղեկություններից հայտնի է դառնում նաև, որ Ագարակի վանքը հիմնել է Վրաց Վախթանգ Գուրգասյան թագավորը Ե դարում: Ըսկայն ինչպես պարզ է դառնում վերո մեջբերված պատմական աղբյուրների վկայություններից և տեղում կատարված հնագիտական հետազոտություններից, Գուրգասյան թագավորի կառուցած եկեղեցու շենքը չի պահպանվել, նա հիմնովին ավերվել է: Նրա քաղաքի վրեկորները մինչև վերջին ժամանակներն էլ թափված էին կից ձորերում, վանքի շրջակայքում. մի մասն էլ օգտագործել են գյուղամիջի աղբյուրի շենքի (ճկ. 2) ու առանձին բնակելի շենքերի կառուցման և նույնիսկ ամրոցի բերդապարիսպների վերանորոգման վրա:

Հուշարձանների պահպանության Կոմիտեն իր ժամանակին հավաքել է այդ թափված քեկորների մեծ մասը և դասավորել վանքի գլխավոր եկեղեցու ներսը:

Թե երբ է տեղի ունեցել Ագարակի եկեղեցու սկզբնական շենքի ավերումը, ստույգ հայտնի չէ: Պատմական աղբյուրներում բազմաթիվ տեղեկություններ են պարունակում այն մասին, թե ինչպիսի մեծ ավերածություններ են տեղի ունեցել Տաշիրք զավառում (որը գտնվում էր Ախթալայի վանքը) արաբական և սելջուկյան արշավանքների

ժամանակ: Հայտնի է, որ սելջուկյան խրվածքի 1105 թվականին Տաշիրքն առաջատակելու միջոցին այրեց ճուլմիսկ Հաղպատի և Սանահինի վանքերը⁶:



2. Ախթալա.—Հին եկեղեցու բեկորներ՝ օգտագործած որակաւորից աղբյուրի շենքում

Կասկածից վեր է, որ Ագարակի Ե դարում կառուցված եկեղեցին էլ ավերված լինի հենց այդ վանքերի հետ միաժամանակ, որոնց այնքան մոտիկ էր գտնվում այն:

Որոշ ուսումնասիրողներ հիմնվելով Կիրակոս Գանձակեցու վերո մեջբերած այն վկայության վրա, թե Ախթալայի վանքը կառուցել է Իվանե Աթաբեկը, անհավանական են համարում վրաց մատենագիր Վախուշտի այն տեղեկությունը, ըստ որի Ախթալայի վանքի սկզբնական հիմնադրումը տեղի է ունեցել Ե դարում: Նրանք աչքաթող են անում այն քաղմաթիվ բեկորները, որոնք անվիճելիորեն պատկանում են Ե դարում կառուցված եկեղեցուն:

Ախթալայի վանքը, ինչպես այդ մասին տեղեկացնում են ԺԳ դարի հայ մատենագիրները, միջին դարերում եղել է վրացական արքեպիսկոպոսանիստ վայր: Այդ մասին հիշատակություններ կան նաև Ախթալա ավանի սահմաններում գտնվող մի քանի հուշարձանների վրա հայերեն և վրացերեն յեզուներով փորագրված արձանագրություններում:

Այդպես, օրինակ.—Առաքելոց եկեղեցու կառուցման վերաբերյալ վրացերեն արձանագրության մեջ ասվում է, որ այն կառուցել է Պղնձահանից վանքի առաջնորդ Պետրեն՝ Ավագի աթաբեկության ժամանակ:

Ավանին մոտիկ, ճանապարհի եզրին կանգնեցրած մի փոքրիկ խաչքարի վրա. «Կանգնեցաւ խաչս ի փրկութիւն Ասգու, լառաջնորդութեան Համագասպայ և ի ծի-

նամծեցութեան Պետրեի. ի թուականիս հայոց ՈՂԳ. (1244)»⁷:

Ախթալա ավանից քիչ դեպի արևելք, ճանապարհի ձախ կողմում եղած հին գյուղատեղում գտնվող մի խաչքարի վրա փորագրված արձանագրության համաձայն, այն կանգնեցրել է Հակոբ երեքը.—«...յարեւատութեան Աւագին և ծինամծղարութեան Պետրեի և հայրապետության Համագասպայ, ի թուիս հայոց ՈՂԴ. (1245)....»:

Այդ խաչքարին կից գտնվող փոքրիկ եկեղեցու վրա փորագրված արձանագրությունն էլ հավաստում է, որ այն կառուցվել է «յամս աստուածագոր արքայութեան Դեմետրի, առաջնորդութեան տեր Հովանիսի, ծինամծղարութեան Սիմոնի...»⁸:

Վերը մեջբերածներից միանգամայն պարզ ու հասկանալի է դառնում, որ Ախթալայի վանքը հանդիսանում էր Հայաստանի հյուսիսային շրջաններում գտնվող վրացահավան կամ. ինչպես ընդունված է անվանել, քաղկեդոնիկ վանքերի ու եկեղեցիների, որոնց թիվը բավական շատ էր Հայաստանի այդ մասում՝ արքեպիսկոպոսանիստ կենտրոն:

Խիստ բնորոշ է հետաքրքիր է նաև այն, որ այդ արձանագրությունների մեջ Ախթալայի վանքի, որպես քաղկեդոնիկ եկեղեցու՝ առաջնորդներին զուգընթաց (Պետրե, Սիմոն), հիշատակվում են նաև հայ-յուսավորչական դավանանքի արքեպիսկոպոսներ՝ Տեր-Համագասպը և Տեր-Հովհաննեսը, որոնք Հաղպատի վանքի առաջնորդներ էին:

Դրանից հետո պատմական աղբյուրները ոչ մի հիշատակություն չեն պարունակում Ախթալայի վանքի մասին, չնայած այն բանին, որ նշված ԺԳ դարը և դրան հաջորդող երկարատև մի ժամանակաշրջան՝ համարյա ողջ միջնադարի ընթացքում քաղաքական մթնոլորտը, ինչպես Հայաստանի մյուս զավառներում, այնպես էլ Տաշիրք-Լոռիում, որի սահմաններում էր գտնվում Ախթալայի վանքը՝ խիստ անբարենպաստ էր:

Թե ինչպիսի վիճակում են եղել ավանն ու վանքը մոնղոլական արշավանքների շրջանում, մամալանդ Լանգթեմուրի 1387 և 1400 թվականների, պարսից Ջահան-Շահի 1440 թվականի, թուրքերի 1578 թվականի արշավանքների ժամանակ, ստույգ հայտնի չէ:

Առանձնապես հետաքրքիր է, թե ինչ հետևանքներ է ունեցել պարսից Ծահ-Աբաս մեծի 1605 թվականի արշավանքները Ախթալա ավանի և վանքի նկատմամբ, արշա-

⁷ և ⁸ Е. Такайшвили, Сборник материалов по описанию местностей и племен Кавказа, кн. 29, отд. 1-й, Тифлиси, 1901, стр. 138-145.

⁹ Հայերեն արձանագրությունների լրիվ տեքստը տեսնել հուշարձանների նկարագրության քաճնով:

⁶ Սամուելի քաճնայի անցույ.—Հավաքմունք ի գրոց պատմագրաց. Վաղարշապատ, 1893, էջ 121:

վանքներ, որի ընթացքում, ինչպես տեղեկացնում են ժամանակի պատմիչները, Հայաստանի բազմաթիվ գավառների, որոնց թվում նաև Տաշիրը-Լոռիի բնակչությունը բռնի կերպով տեղահան արվեց և քշվեց Պարսկաստան: Իսկ ավելի ուշ՝ Օմար-խանի արշավանքների ժամանակ առավել ավերվեց և մեծ մասամբ ամայացավ և Լոռին:

Ախթալայի վանքի մասին հետագա տեղեկությունները վերաբերում են ԺԸ դարին: Ալեքսանդր Երիցովը¹⁰ փոխ առնելով Պ. Ի. Իոսսելյանուց, մեջ է բերում Ախթալայի վանքի հետևյալ հոգևոր պետերը-առաջնորդները...

1. Սոփրանիյ. սա գերի վերցվեց Օմար-խանի կողմից և ազատվեց Ախալցխա քաղաքի քրիստոնյա լեզգիների կողմից վճարված փրկագնով. վախճանվում է Տրապիզոնի Հովհաննու Կարապետի վանքում:

2. Գեղեղոն—վախճանվում է 1792 թվականին:

3. Իգնատիոս—կախադան է բարձրագվում թուրքերի կողմից 1796 թվականին Ախալցխայում, մեղադրվելով ռուսների հետ գաղտնի հարաբերությունների մեջ գտնվելու համար՝ երբ դեպի Ախալցխա էր արշավում ռուսաց Ռզոր քանակը գեներալ Գուդեփիչի գլխավորությամբ:

4. Հոհանն—վախճանվում է 1798 թվականին:

5. Հովակիմ Անկյուրացի—ուսանելիս է եղել Կիպրոս կղզու Կիկտոսյան վանքում, վախճանվել է 1827 թվականին:

Ախթալայի վանքը հայ արվեստի ու ճարտարապետության շատ հետաքրքիր և նշանավոր կոթողներից է: Նրա հուշարձանների կառուցողական խիստ յուրօրինակ և առանձնահատուկ ձևերը, նրանց հարուստ, շքեղ ու փարթամ զարդաքանդակները, որոնք մշակված են վերին աստիճանի մուրք ձևով, մույնքան հարուստ ու գեղեցիկ որմնանկարները՝ մեծ հիացմունք ու ամօքնելի տպավորություն են թողնում դիտողի վրա:

Ախթալայի վանքի հուշարձանները հատկապես կարևոր և նշանակալից են նաև նրանով, որ նրանց վրա իրենց վառ արտացոլում են գտել եղբայրական վրաց ժողովրդի մշակույթի առանձին, շատ ուշագրավ ձևերը: Իրավագիտորեն Ախթալայի վանքը հանդիսանում է եղբայրական երկու ժողովուրդների՝ հայ և վրաց մշակույթի միաձուլ արտահայտությունը: Դրանից էլ հետևում է, որ նա իր արժանի տեղն ունի այդ երկու ժողովուրդների մշակույթի պատմության մեջ:

Ախթալայի վանքը՝ որպես արվեստի ու ճարտարապետության հիանալի կոթողի,

չի վրիպել նաև օտարագահ գիտնականների ուշադրությունից: Այդ առթիվ ամս թե ինչ է գրել ակադեմիկոս Գրիմը. «Շենքի թոյր մասերում եղած զարդաքանդակները սքանչելի են իրենց կատարելությամբ, և աշխատանքը այնքի է բնկնում հատկապես մշուկման ճշտությամբ»¹¹:

Առանձնապես ուշագրավ ու հետաքրքիր է Տակաշվիլու կարծիքը Ախթալայի վանքի մասին՝ որպես ճարտարապետական կառուցվածքի: Խոսելով վրաց թամար թագուհու գահակալության ժամանակ վրաստանում ճարտարապետության զարգացման վիճակի մասին, որպիսի ժամանակում կառուցվել է նաև Ախթալայի վանքը, նա ավելացնում է. «Մենք առիթ ենք ունեցել տեսնելու վրացական համարյա թոյր եկեղեցիները, որոնց մասին մենք գիտենք, որ նրանք բոլորն էլ իսկապես կառուցվել են թամար թագուհու ժամանակ, քայք նրանցից և ոչ մեկը՝ իրենց պարզությամբ, նրբագեղությամբ և մշակման ճշտությամբ չի կարող համեմատվել Ախթալայի վանքի հետ»¹²:

Բ. ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ՊԱՏՄԱ-ՃԱՐՏԱ-ՐԱՊԵՏԱԿԱՆ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Ախթալայի վանքը

1. Աստվածածին կամ, ինչպես տեղացի հույներն են անվանում՝ Մարիամ անեի եկեղեցի (նկ. 3): Վանքի գլխավոր եկեղեցին



3. Ախթալայի վանք.—Գլխավոր (Աստվածածին) եկեղեցին Ռուսիսից

է և, ինչպես վկայում է Կիրակոս Գանձակեցի պատմիչը, կառուցել է Իվանե աթաբեկը: Կառուցման ճիշտ տարեթիվը պատմիչը չի նշում, ուստի եկեղեցու կառուցման ճիշտ

¹⁰ Вестник по археологии Кавказа, № 1. Тифлис, 1872. стр. 20-24.

¹¹ Ա. Երիցով, նշված աշխատությունը:

¹² Տակաշվիլի, վերը նշված աշխատությունը:

ժամանակի մասին գոյություն ունի տարբեր կարծիքներ:

Այդ նույն Տակայշվիլին, իր վերը նշված աշխատության մեջ (էջ 144), հիմնվելով եկեղեցու կառուցողական և զարդաքանդակների մշակման ձևերի վրա, այն կարծիքն է հայտնում, թե նա առավելապես ժ—ԺԱ դարերի գործ է, քան ԺԲ դարի: Միաժամանակ Տակայշվիլին եկեղեցու կառուցման վերաբերյալ Կիրակոս Փանծակեցու վկայությունը վերագրում է ոչ թե Ախթալայի վանքին, այլ Ախթալա ավանում գտնվող մեկ ուրիշ եկեղեցու՝ վերջինիս կառուցումը դնելով Իվանեի աթոռակության առաջին շրջանում՝ ԺԲ դարի վերջին քառորդում: Սակայն Տակայշվիլու թե մեկ և թե մյուս կարծիքը, մեր խորին համոզմամբ, ճիշտ չէ և անհավանական:

Ախթալայի վանքի այդ եկեղեցու կառուցման ժամանակի մասին պետք է նկատի ունենալ նաև հետևյալ հանգամանքը: Թե մատենագրական, թե վիմագրական և թե հիշատակագրական աղբյուրներում Ջաքարյան այդ երկու եղբայրների՝ Ջաքարեի և Իվանեի կողմից ձեռնարկված բոլոր միջոցառումները երկրի տնտեսական, շինարարական, կուլտուրական և մյուս այլ բնագավառներում նշվում են երկու եղբայրների անունով միաժամանակ:

Մինչդեռ Ախթալայի վանքի նշված եկեղեցու կառուցման վերաբերյալ նշվում է միայն Իվանեի անունը: Դրանից էլ բխում է այն հավանական ենթադրությունը, որ այդ եկեղեցու կառուցման ժամանակ արդեն վախճանված պետք է լինեին Ջաքարեի: Հետևապես այն կառուցվել է Ջաքարեի մահվանից՝ 1218 թվականից հետո, սակայն ոչ ոչ, քան մինչև Իվանեի մահը՝ 1227 թվականը: Ինչևիցե այդ ամբողջական հուշարձանը պետք է կառուցված լինի կամ ԺԲ դարի վերջին քառորդում, կամ ԺԳ դարի առաջին քառորդում:

Մինչև այդ եկեղեցու կառուցումը տեղում եղել է մի այլ եկեղեցի, որը կառուցել է վրաց վախթանգ Գուրգասյան թագավորը Ե դարում, ինչպես այդ մասին նշվեց վերևում, սակայն այդ եկեղեցու շենքը հիմնովին ավերվում է և նրա վայրում կառուցվում է ներկայիս եկեղեցին:

Աստվածածին եկեղեցին, առաջին կոչված «Գմբեթավոր սրահներ» տիպի մի ընդարձակ կառուցվածք է, արևելյան կողմից ունի կիսակլոր լայն ու խորը արսիդ՝ քաղկեդոնիկ եկեղեցիներից հատուկ ցածրիկ բնով: Աքսիդի երկու կողմերում կան կրկնաճարկ խորաններ. ստորին հարկի խորանները քավակահին ընդարձակ են, արևելյան կողմից ունեն կիսակլոր արսիդներ: Հարավային կողմի խորանների մուտքերը բացվում են դեպի արևմուտք՝ եկեղեցու կողերի թևերի ուղղու-

թյամբ: Հյուսիսային կողմի ներքին հարկի խորանի մուտքը կամարակալ լայն բացվածքի ձևով է. մի ուրիշ մուտք էլ այդ խորանից տանում է դեպի բեմը:

Եկեղեցու ներսում, արևմտյան մասում տեղադրված երկու պուրները առանձին կամարներով միանալով արևելյան արսիդի եզրերից ձգվող կիսաայուների հետ, տանիքի կենտրոնում կազմում են քառակուսաձև լայն բացվածք, միաժամանակ իրենց վրա կրելով երբեմնի գեղեցիկ գմբեթը:

Սյուները միաժամանակ հատուկ կամարներով միանում են իրենց դիմացի՝ արևմտյան, հարավային և հյուսիսային պատերին կից ձգվող կիսաայուների վրա, կազմելով երեք թևեր՝ կենտրոնից համեմատաբար լայն, քան կողերինը՝ թաղակալ ծածկերով: Կիսաայուները միաժամանակ միանում են որմնակամարներով, պատերի վրա առաջացնելով լայն ու սալոյիկ խորշեր. իսկ սյուներն ու կողերի պատերի կիսաայուները միացնող կամարները գոտկում են կողերի թևերի ծածկի թաղը:


Սյուների բները ուղակող են, խիստ կարճ, որի հետևանքով ավելի լայնաթոփյառ ու պաշտիկ են դրանցից ելնող կամարները. իսկ կիսաայուների բները երեք կողմանի են: Դրանց համապատասխան ձևով են նրանց խորխուխուրներն ու խոյակները:

Արևելյան պատի մեջ արտաքուստ կան երկու եռանկյունաձև խորք, մեծ հիշեր, որոնց կամարակալ զազաթները զարդարված են քուսական ձևի ծուպավոր քանդակներով, իսկ եզրերը՝ գլանաձև կիսաայուներով, որոնք ունեն գեղեցիկ մշակված խորխուխուրներ ու խոյակներ:

Երեք խոշոր մուտքերը բացվում են արևմտյան, հարավային և հյուսիսային պատերից՝ առաջինը պատի կենտրոնական մասից, իսկ մյուսները՝ պատերի արևմտյան մասերից, որոնք թուրքն էլ ունեն շքեղազարդ պատակալներ (Նկ. Նկ. 4, 5):

Երկուական երկար ու մեղ, կամարապատ զազաթ ունեցող լուսամուտներ բացվում են հյուսիսային և հարավային ճակատներից. երեքական հատ մույն ձևի լուսամուտներ էլ բացվում են արևելյան և արևմտյան ճակատներից, ըստ որի արևելյան կողմի լուսամուտներից կենտրոնից բացվում է ամսիցապես պատի մեջ, իսկ կողերինը՝ այդ պատի արտաքին հիշերի մեջ, համապատասխան կողերից: Նույնաձևան մեկական շատ փոքր լուսամուտներ էլ բացվում են խորանների արևելյան պատերից:

Բացի նշված լուսամուտներից, երկու հատ կլոր անցքեր բացվում են արևելյան պատից, մեկ հատ հարավային խորանի հարավային պատից և մեկ հատ էլ հյուսիսային խորանի հյուսիսային պատից: Թե լուսամուտները և



թե կտր անցքերը, մեծ մասամբ ունեն գեղա-
քանդակ շրջանակներ:

Եկեղեցու արտաքին երեսնապատը կապ-
տագույնը քաղալտի շատ մաքուր հղկած խո-



4. Ախթալայի վանք.—Աստվածածին եկեղեցու
հարավային մուտքը

շոր քարերից է, իսկ ներսի կողմից շարված
է զանազան քարերի և թրծած աղյուսի կը-
տորներից՝ կրաշաղախով միաձուլված և
պատած է կրաշաղախի սվաղով: Նույն ձևով
են կառուցված նաև պուրհների բները: Պա-
տերն արտաքուստ ունեն երեք կարգ ցոգու:
Ծածկը թաղակապ է՝ երկթեք տանիքով, որը
պատած է եղել սալքարերով: Հատակը պա-
տած է նույն քաղալտի հղկած սալքարերով:

Ամբողջապես քանդված է գմբեթը, թափ-
ված են տանիքի սալքարերը: Թե ինչպիսին
է եղել գմբեթը և երբ է քանդվել այն, պարզ
չէ, որոշ տեղեկություններից հավաստի է
դառնում, որ անցած դարի սկզբներին դեռ
կանգուն է եղել այն: Իսկ նրա որպիսության
մասին Վախուշտն ասում է, որ «նրա կա-
թողիկեն շատ ճարտարապետական ձևով է
շինված». հասկանալի է, որ նա իրոք համա-
պատասխան պետք է լինեի եկեղեցու շենքի
հույսկապ կառուցվածքին:

Հուշարձանը շքեղորեն զարդարված է բու-
սական և երկրաչափական ձևերի գեղեցիկ

քանդակներով, որոնք մշակված են վերին
աստիճանի նորը ձևով:

Ներսից սվաղած է կրաշաղախով, որն
ամբողջապես պատած է սրբապատկեր և
զարդանկար որմնանկարներով: Դրանց մեջ
իրենց կատարելությամբ առավել աչքի են
ընկնում աստվածամոր նկարը՝ արևելյան
արսիդի կոնխում, Հիսուսի ծնունդն ու մկրդ-
ությունը՝ հարավային ծածկի թաղում
և ուրիշները:

Որմնանկարների մի մասը՝ անձրևաջրերի
ներս հոսելու հետևանքով որոշ չափով վը-
նասվել էին: Հայաստանի և Վրաստանի հա-
մապատասխան գիտական հիմնարկների
արշավախումբը արվեստի վաստակավոր
գործիչ Լիդիա Ալեքսանդրովնա Դուրնովայի
ղեկավարությամբ մի շարք տարիների ըն-
թացքում աշխատանքներ էր տանում վերա-
կանգնելու որմնանկարների վնասված մա-
սերը:

Հուշարձանը ենթարկվել է մի շարք վերա-
նորոգումների, ըստ որի Մ. Ա. Վորոնցովի
կարգադրությամբ, ինչպես այդ մասին տեղե-
կացնում է Ա. Երիցովը¹⁰, տանիքը՝ թափված
սալքարերի փոխարեն ծածկվում է կապ-
տագույն կղմինդրով, իսկ քանդված գմբեթի
փոխարեն կառուցվում է կիսագնդաձև
փայտյա գմբեթ՝ պատած թիթեղով: Նաև այն
հետագայում տանիքի ծածկի այդ նոր կղ-
մինդրները նորից թափվում են և քանդվում
է նաև նոր շինած փայտյա գմբեթը:

Սովետական իշխանության տարիներից,
բացի վնասված որմնանկարների վերա-



5. Ախթալայի վանք.—Աստվածածին եկեղեցու
հյուսիսային մուտքի ճակատակապ քարի
զարդաքանդակները

կանգնումից, մեծ աշխատանքներ են կա-
տարվել հուշարձանի վերանորոգման և քա-
րեկարգման ուղղությամբ. Տանիքը ծածկը-
վում է թիթեղով, գմբեթի հիմքի քաղվածքի

¹⁰ Ա. Երիցով, Ույն տեղ:

վրա կառուցվում է հատուկ փայտյա ծածկույթ, պատելով այն կարմիր կղմինդրով: Պատերը մաքրվում է զանազան գրոտումներից, մաքրվում և քարեկարգվում է ներսն ու շրջապատը: Ներսում կազմակերպվում է փոքրիկ հնադարան, ուր հավաքվում են շրջակայքում եղած հնագիտական քեկորներ, պատրաստվում են Ալավերդու շրջանում եղած նշանավոր հուշարձանների յուսուցկարներ, ինչպես և այդ հուշարձաններին և Ախթալայի վանքին վերաբերող գրավոր տեքստեր՝ քաղված մատենագրություններից: Նըշանակվում է հատուկ պահակ:

Եկեղեցու ներսում կան մի քանի գերեզմաններ, որոնք ունեն մարմարյուն տապանաքարեր՝ ներկա դարին վերաբերող ռուսերեն և վրացերեն առաջնագրություններով: Աջակողմյան խորանում եղած մի գերեզմանի տապանաքարի վրա կարդացվում է.— «ԶՄովսես քահանայս յիշեսցիք յաղսորս ձեր»:

Եկեղեցու հյուսիսային պատին կից, արտաքուստ կառուցված է փոքրիկ մատուռ, որը շարված է նույն կապտագույն քաղալտի մաքուր տաշված քարերով, կրաշաղախի միացությամբ: Ծածկը թաղակապ է. միակ մուտքը արևմտյան կողմից է. արևելյան կողմից ունի փոքրիկ լուսամուտ: Սալահատակված է, տանիքը պատած է սալքարերով: Կառուցման ժամանակը հայտնի չէ, իր կառուցման ձևով հատուկ է ԺԳ դարին:

2. Երկրորդ եկեղեցին—գտնվում է գլխավոր եկեղեցու արևմտյան կողմում, կից, հարավային թևի ուղղությամբ (նկ. 6): Կառուցման ճիշտ ժամանակը հայտնի չէ, պարզորոշ նկատվում է, որ կառուցված է գլխավոր եկեղեցուց հետո և կից սրահից առաջ: Եւ որովհետև այդ սրահում է թաղված Իվանե աթաբեկը, ապա եկեղեցին կառուցված պետք է լինի մինչև Իվանեի մահը, այսինքն՝ մինչև 1227 թվականը:

Քաղկեդոնիկ եկեղեցիներին բնորոշ մի կառուցվածք է՝ արևելյան կողմից առանց հատուկ արքիդի, շատ ցածրիկ բնով: Հատակագիծը երկարածիկ ուղիղ քառակյուցի է, ծածկը՝ թաղակապ: Ներսում, կողերի պատերին կից ձգվող որմնապատները միանում են կամարով, գոտիելով ծածկի թաղը:

Երկու մուտքերից մեկը քացվում է արևմուտյան կողմից՝ պատի կենտրոնական մասից, իսկ մյուսը՝ հյուսիսային կողմից՝ պատի արևմտյան ծայրից՝ սրահի մեջ: Երկու երկար ու նեղ, կամարակապ զազառ ունեցող լուսամուտներ քացվում են հարավային պատից, նման մի լուսամուտ էլ քացվում է արևմուտյան պատից՝ մուտքի վերևում:

Կառուցված է կապտագույն քաղալտի սրբատաշ քարերով՝ կրաշաղախի միացու-

թյամբ: Պատերն արտաքուստ ունեն երեք կարգ ցուլ: Տանիքը պատած է եղել սալքարերով, որոնք ժամանակի ընթացքում յալվել են և այժմ պատած է կղմինդրով: Սալահատակված է եղել, որն ամբողջապես քանդված է:



6. Ախթալայի վանք.—Աստվածածին եկեղեցու սրահը և կից փոքր եկեղեցու հյուսիսային մուտքն ու մի լուսամուտը

Այս հուշարձանը, առավել շքեղորեն, զարդարված է բուսական ու երկրաչափական ձևերի շատ գեղեցիկ քանդակներով, որոնց մշակման նրբությունը հասցված է բարձր կատարելության: Առանձնապես հետաքրքիր և ուշագրավ են պատերի արտաքին երեսներից ձգվող զյառանք բներ ունեցող կիսասյուները՝ իլիստ բնորոշ ու գեղազարդ խարիսխներով և խոյաններով, որոնք միանալով որմնակարներով, պատերի վրա առաջացնում են լայն նիշեր: Նույնպիսի շքեղությամբ են մշակված նաև մուտքերի և լուսամուտների շրջանակները:

8. Սրահը—գտնվում է գլխավոր եկեղեցու արևմտյան, իսկ երկրորդ եկեղեցու հյուսիսային կողմերում՝ կից երկուսին (նկ. 6): Այս սրահի կառուցման ճիշտ ժամանակը նույնպես որոշ չէ. ուսկայն ակներև է, որ նա կառուցված է եկեղեցիներից հետո՝ նույն Իվանե աթաբեկի միջոցով: Ինչպես պարզվում է կիրակոս Գուգնակեցու, Ստեփանոս Օրբելյանի և Վարդան Բարձրաբերդցու վերը մեջ բերված լիսյություններից, այս սրահում պետք է թաղված լինեն Իվանե աթաբեկը և իր որդի Ավագը:

Խաչած և հատվածք ունեցող երեք մույթերը և գլխավոր եկեղեցու արևմտյան պատի արտաքին երեսին կից ձգվող երեք որմնապատները իրար հետ միանալով առանձին կամարներով, նախ կազմում են թաղակապ ծածկը, ապա արևմտյան կողմից երկու և հյուսիսային ու հարավային կողմերից մեկա-

կան կամարակալ լայն քաղաձքներ, իսկ գլխավոր եկեղեցու պատի վրա՝ երկու լայն խորշեր:

Սրահը նույնպես կառուցված է կապտագույն բազալտի սրբատաշ մեծ քարերով, քանդակագիր է: Սալահատակված է. տանիքը պատած է սալքարերով, որոնց մի մասը թափված է: Նկատվում է վերանորոգումների առանձին հետքեր:

Սրահում կան մի քանի գերեզմանների հարթ երես ունեցող տապանաքարերով, որոնց վրա կան ոռններն և վրացերեն լեզուներով փորագրված տապանագրություններ:

4. Երրորդ եկեղեցին—գտնվում է նախորդներից մի փոքր դեպի հյուսիս-արևմուտք: Կառուցված է ԺԹ դարում: Սա գմբեթավոր փոքր մի կառուցվածք է, ուղիղ քառակյուղի հատակագծով: Արևելյան կողմից ունի կիսակլոր փոքր արսիտ՝ ցածրիկ բեմով: Կառուցված է նույն կապտագույն բազալտի մաքուր տաշված քարերով, կրաշաղախի միացությամբ:

5. Ջանգակատունը նախորդ եկեղեցու արևելյան կողմում է, մոտիկ վերջինին: Սու նույնպես կառուցված է ԺԹ դարում: Քառակուսի հատակագիծ ունեցող բարձր մի շենք է, շարված կապտագույն բազալտի տաշված քարերով՝ կրաշաղախով միաձուլված:

6. Ախթալայի ամրոցը.—Ախթալայի վանքի հուշարձանների խմբին պետք է վերագրել նաև այս ամրոցը: Ցամաքային թերակղզու ձև ունեցող այն բարձրավանդակը, որի վրա գտնվում է վանքը, երեք կողմից եզերվում է Ախթալա գետակի և նրա մի ճյուղը կազմող Հանքերի-ջուր վտակի խոր ձողերի ուղղաձիգ ձգվող բարձր ու անմատչելի քարափներով, հանդիսանալով մի տեսակ բնական անառիկ ամրություններ: Չորրորդ՝ հյուսիսային կողմից բարձրավանդակը հարակցվում է ընդհանուր լեռնաշարքին: Այդ վերջին կողմից, ինչպես և արևելյան ու արևմտյան ձորափերի խոցելի տեղերն ամրացված են քրգաձև բարձր ու լայն ամրոցապատերով, ըստ որի արևմտյան և հյուսիսային կողմերից՝ կրկնակի պատերով, որոնք միաժամանակ վանքի համար ծառայում են որպես պարիսպ:

Թե երբ է հիմնվել այդ ամրոցը, ստույգ հայտնի չէ: Պատմական աղբյուրների տեղեկությունների համաձայն, քազարատունիները Ժ դարում ժառանգելով Տաշիրը գավառը, հիմնում են Լոռի քաղաքը, կառուցում և վերակառուցում են մի շարք բերդեր: Հավանական է, որ հենց այդ ժամանակ՝ Ժ դարում կառուցված լինի նաև Ախթալայի այս ամրոցը:

Ամրոցի գլխավոր մուտքը հյուսիսային կողմից է՝ սրահավոր մեծ դարպասի ձևով:

Սրահը բավական մեծ է, ձգվում է հյուսիսից-հարավ, ծածկը թաղակալ է՝ գոտկող երեք կամարներով, որոնց ծայրերը հենվում են սրահի կողերի պատերի մեջ դրված կալունակների վրա:

Սրահի տանիքի վրա, որպես երկրորդ հարկ գոյություն են ունեցել այլ շենքեր, հավանաբար պահակատեղիներ, որոնք այժմ ավերակ վիճակում են:

Մի ուրիշ, փոքր մուտք էլ արևմտյան կողմից է, որը միաժամանակ ծառայելիս է եղել որպես ստորերկրյա գաղտնի անցք:

Ամրոցի գլխավոր մուտքի երկու կողքերից ձգվում են մեկական քրգաձև, բարձր աշտարակներ, որոնցից արևելյան կողմին է մնում՝ կիսակազուրն վիճակում: Վերջինս մեջ նկատվում է հինգ հարկից բաղկացած շենքի մնացորդներ (նկ. 7):



7. Ախթալայի ամրոց.—Գլխավոր մուտքը ներսից և կից հինգ հարկանի քրգաձև աշտարակի մնացորդները

Ստորին հարկը գետնափոր է, որը լցված լինելով փլատակներով, նրա ներքին որպիսությունը պարզ չէ: Երկրորդ հարկի սենյակի կենտրոնում տեղադրված հնգակող մույթի յուրաքանչյուր կողմից ձգվում է մի-մի կամար, որոնց ծայրերը հենվում են պատերի ներսի երեսին կից ձգվող որմնաույտների վրա: Դրանից վերև գտնվող հարկերի սենյ-

յակները ներսից որմնապուներ չուեն, այլ կենտրոնում դրված մույթից ձգվող կամարների ծայրերը հենվում են անմիջապես պատերի վրա: Բնորոշ է այն, որ աշտարակի ներսում եղած շենքերի հիմք հարկերը հավասար բարձրություն չուեն, այլ վարից վեր աստիճանաքար ցածրանում են, այնպես, որ ամենավերին՝ հինգերորդ հարկի շենքը ամենամեծատ շատ ցածրիկ է:

Ամրոցի հյուսիս-արևմտյան կողմից հետագայում ավելացված է նոր ամրոցապատ:

Ամրոցի պարիսպներից ներս եղել են բազմաթիվ այլ շենքեր, ոմանք գետնափոր, որոնք մեծ մասամբ ավերվել են և որոնց փլատակների վրա հետագայում, ավելի ուշ, կառուցվել են բնակելի բազմաթիվ շենքեր: Ամրոցական են մնացել միայն երկու շենք, որոնցից մեկը գետնափոր է և գտնվում է գլխավոր եկեղեցու հյուսիսային կողմում, ամրոցի այդ կողմի բերդապարսպին մոտիկ:

Բավականին մեծ շենք է, ուղիղ քառակյունի հատակագծով, պատերը շարված են կիսատաշ վորքը քարերով՝ կրաշաղախով միաձուլված: Ծածկը թաղակապ է, տանիքի բարձրությունը գետնի հավասարության է: Միակ մուտքը արևելյան կողմից է: Թե երբ է կառուցվել այդ շենքը և ինչ նպատակի է ծառայել, պարզ չէ:

Մյուս շենքը, որի միայն պատերն են կանգուն, գտնվում է նախորդի հյուսիսային կողմում, ամրոցի արևելյան կողմի բերդապարսպին կից, այնպես որ վերջինս հանդիսանում է շենքի արևելյան պատը: Անդարձակ սրահի ձևով մեծ շենք է, երկարաձիգ ուղիղ քառակյունի հատակագծով: Որոշակի կերպով նկատվում է, որ եղել է երկհարկանի, և որ երկու հարկերն էլ փայտածածկ են եղել, որոնք այժմ փլված են:

Պատերի կանգուն մասերը շարված են կապտագույն բազալտի տարբեր մեծությամբ՝ մասամբ կիսատաշ և մասամբ էլ մաքուր տաշված քարերով՝ կրաշաղախի միացությամբ: Հյուսիսային պատի մեջ, ներսից կա մի մեծ կամարակապ խորշ:

Գլխավոր մուտքը հարավային կողմից է, լայն ու շրջանակով: Մի ուրիշ փոքր մուտք էլ բացվում է հյուսիսային պատից, որը տանում է դեպի մի փոքր շենք: Շենքի այդ թևի դասավորությունը ենթադրել է տալիս, որ նրա ստորին հարկը ծառայելիս եղած լինի որպես սեղանատուն, իսկ վերին հարկը՝ որպես ննջարան: Դրա հյուսիսային կողմի փոքր շենքն էլ պետք է եղած լինի խոհանոցը: Այդ մեծ շենքի կառուցման ժամանակը նույնպես որոշ չէ:

4. ԱՆԹԱՆԱ ԱՎԱՆԻ ՄՅՈՒՍ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԸ

7—8. Ա. Երրորդության վանք. — գտնվում է ավանի հյուսիս-արևելյան մասում, վանքից դեպի հյուսիս-արևելք, Հանքերի-ցուր վտակի ձախ ափին, ձորալանջին: Բաղկացած է երկու եկեղեցուց, երկու մատուռից. կից կան մի քանի գերեզմաններ (նկ. 8):



8. Ախթալա. — Ա. Երրորդության վանքը արևմուտքից

Վառժանյան աղբյուրները ոչ մի հիշատակություն չեն պարունակում այդ հուշարձանի մասին: Միակ հիշատակությունը՝ եկեղեցիների ներսում եղած մի խաչքարի վրա փորագրված վրացերեն հետևյալ արձանագրությունն է, որը մեջ ենք բերում ըստ Տակայշվիլի¹⁴ ուսերենից հայերենի՝ մեր թարգմանությամբ. «Տեր աստված, ողորմի սրա կառուցողներ Գևորգին և Սիմոնին»:

Չնայած արձանագրությունը փորագրված է խաչքարի վրա և կարող է վերաբերել նրա կառուցմանը, սակայն մեր կարծիքով այն վերաբերում է վանքի կառուցմանը, քանի որ ինչպես կանոն, խաչքարի մասին ասվում է աչ թե կառուցեցի, այլ կանգնեցրի:

Արձանագրության մեջ հիշատակված անձնավորություններից, մեր հաստատ համոզմամբ, Գևորգը պետք է լինի ս. Երրորդության վանքի առաջնորդը, իսկ Սիմոնը՝ Պրղընձահանից վանքի առաջնորդը:

Այդ Սիմոնի մասին, որպես Պղնձահանից վանքի առաջնորդի, հիշատակություն կան նաև Ախթալայից քիչ դեպի արևելք, ճանապարհի ձախ կողմում եղած հին գյուղատեղում գտնվող եկեղեցու վրա փորագրված հայերեն հետևյալ արձանագրության մեջ. «Կամար քարերարին Աստուծոյ, լամս աստուածազար արքայութեան Դեմետրի, ա-

¹⁴ Տակայշվիլի, հույն տեղ:

ռաջնորդութեան տեր Յովհաննիսի, ծիմամեղատութեան Սիմոնէ...»:

Ինչպէս առիթ եղաւ ճշելու վերնում, Ախթալայում եղած վրացերեն արձանագրություններում Պղնձահանից վանքի առաջնորդների հետ հիշատակվում են նաև Հաղպատի վանքի առաջնորդները: Այս հայերեն արձանագրության մէջ նույնպէս Սիմոնի հետ հիշված տեղ Հովհաննէսը Հաղպատի վանքի առաջնորդ Հովհաննէս եպիսկոպոսն է՝ Զաքարիի և Իվանէի քրոջ որդին: Սրա մասին Հաղպատի վանքի արձանագրությունների մէջ հիշատակվում է 1227 և 1233 թվականներին: Դրանից էլ հետևում է, որ ս. Երրորդության վանքը պետք է կառուցված լինի ԺԳ դարի երկրորդ քառորդում: Նրա կառուցողական քաղկեդոնիկ բնորոշ ձևերը և մանրամասների մշակումը հատուկ են ԺԳ դարին:

Եկեղեցիները կից են իրար՝ միմյանցից բաժանվում են մի ընդհանուր միջնորմով և հաղորդակցվում են այդ միջնորմի մէջ եղած կամարակապ մի բացվածքով:

Երկու եկեղեցիներն էլ ունեն երկարաձիգ ուղիղ քառանկյունի հատակագիծ, թաղակապ ծածկ և մեկական մուտք՝ արևմտյան կողմից:

Հարավային կողմի եկեղեցին համեմատաբար լայն է, արևելյան կողմից ունի կիսակլոր լայն աբսիդ՝ եկեղեցու ամբողջ լայնությամբ, որի կողերի պատերի մէջ կան մեկական խորշեր՝ դարակների ձևով: Ծածրադիր բեմի կենտրոնում դրված է խոշոր վեմքարը՝ մեծ սեղանաքարով:

Չորս լուսամուտներից մեկական հատ բացվում են արևելյան և արևմտյան պատերից և երկու հատ՝ հարավային պատից, որոնցից արևմտյան կողմինը համեմատաբար շատ մեծ է:

Հյուսիսային կողմի եկեղեցին նույնպէս արևելյան կողմից ունի կիսակլոր աբսիդ՝ եկեղեցու ամբողջ լայնությամբ, առանց բեմի ու վեմքարի: Հյուսիսային, արևելյան և արևմտյան պատերից բացվում են մեկական փոքր լուսամուտներ:

Եկեղեցիները արևմտյան կողմից ունեն ընդհանուր սրահ՝ դրանց արևմտյան պատերի ամբողջ երկարությամբ: Սրահի ծածկը նույնպէս թաղակապ է, սակայն բավականին ցածր է եկեղեցիների տանիքից: Արևմտյան կողմից ունի երկու և հարավային ու հյուսիսային ծայրերից՝ մեկական կամարակապ լայն բացվածքներ, ըստ որի հարավային ծայրի կամարակապ բացվածքը համեմատաբար աւելի մեծ է:

Երկու եկեղեցիներն էլ, ինչպէս և սրահը շարված են կապտագույն ծակտակավոր բազալտի մաքուր տաշված քարերով՝ կրաշա-

ղախի միացությամբ: Հենց այդ ծակտակավոր լինելը, հանգամանքն է, ըստ երևույթին, կառուցմանը վերաբերող արձանագրությունը հնարավոր չի եղել փորագրելու եկեղեցիների պատերի վրա, այլ փորագրել են խաչքարի վրա ու կանգնեցրել իւրեղեցու ներսում:

Թե եկեղեցիները և թե սրահը սալահատակված են եղել, բոլորի տանիքներն էլ պատած է եղել սալքարերով: Հուշարձանները կանգուն վիճակում են՝ քայքայված է սալահատակի մեծ մասը, թափված են տանիքների բոլոր սալքարերը, քայքայված է ծածկի երեսի շերտը, թափված են քիվերի մի մասը, մասամբ քանդված է պատերի վերի քարաշարքը:

9. Երկու մատուռներից մեկը գտնվում է եկեղեցիների հարավային կողմում՝ այդ կողմի եկեղեցուն կից: Սովորական ձևով կառուցված մատուռի մեծ շենք է, որից պատերի ստորին մասերն են միայն պահպանվել՝ մուտքի բացվածքի քարձրությամբ:

Այդ մնացորդներից որոշակի կերպով նկատվում է, որ մատուռը հյուսիսային կողմից առանձին պատ չի ունեցել, այլ եկեղեցու հարավային պատին կից ձգվելիս են եղել երեք որմնասյուներ, որոնք միանալով որմնակամարներով, եկեղեցու պատի վրա առաջացրել են երկու ոչ խորը խորշեր: Մատուռի հարավային պատի ներսի երեսից ձգվող որմնասյունը առանձին կամարով միացել է եկեղեցու պատին կից ձգվող կենտրոնի որմնասյան հետ, գոտկելով ծածկի թաղը:

Միակ մուտքը արևմտյան կողմից է, մի լուսամուտի հետքեր նկատվում են հարավային պատի մէջ: Մատուռի կանգուն մասերը շարված են կապտագույն բազալտի սրբատաշ քարերով՝ կրաշաղախի միացությամբ:

10. Մյուս մատուռը գտնվում է եկեղեցիների արևմտյան կողմում: Փորված է ձորալանջի մէջ, այնպէս, որ երեք կողմերից ծածկված է հողով, միայն արևմտյան պատն է ազատ, ուր բացվում է մուտքը: Մատուռի տանիքը գետնի և եկեղեցիների հատակի հավասարությանն է:

Խիստ մեղ, երկարավուն, ցածրիկ մի շենք է, շարված կապտագույն բազալտի մաքուր տաշված քարերով՝ կրաշաղախի միացությամբ: Ծածկը թաղակապ է, տանիքը ծածկված է հողով:

11. Ս. Երրորդության վանքի շուրջը և սրահում կան մի շարք գերեզմաններ՝ հարթ երես ունեցող տապանաքարերով, որոնցից մի քանիսն ունեն վրացերեն լեզվով փորագրված տապանագրություններ¹⁶, որոնք մեծ ենք բերում թարգմանաբար.

¹⁶ Ե. Տակաշվիլի, նույն տեղ:

«Աստված ողորմի Հոհաննիս».

«Աստված ողորմի Մովսես քահանային».

«Աստված ողորմի ղեկանոգ Նիկողային».

«Տեյր Աստված ողորմի Սիմոնին»:

Հավանական է, որ այս վերջինս Պղնձահանքի վանքի առաջնորդ Սիմոնը եղած լինի, որի մասին հիշվում է Ախթալայից դևաի արեվելը, ճանապարհի եզրին գտնվող հին գյուղատեղիում եղած եկեղեցու վրա փորագրված հայերեն արձանագրության մեջ:

Սի վրացերեն արձանագրություն էլ փորագրված է ս. Երրորդության վանքի վրա, որը հետևյալն է.

«Սուրբ հայրեր, աղոթեցեք յսնուն Աստուծոյ

մեղուցեալ Մօսէ (Մովսէս) Կանդալայկի համար»:

12. Առաքելոց կամ ս. Գևորգ եկեղեցի.— գտնվում է ավանի արևելյան կողմում, բարձունքի վրա: Արձանագրությունների մեջ կոչվում է առաքյալների անունով, իսկ տեղացիք նրան ս. Գևորգ են անվանում:

Արտաքուստ, արևմտյան պատի վրա, մուտքից վերև փորագրված վրացերեն արձանագրության¹⁶ համաձայն, եկեղեցին կառուցել է Պղնձահանքի վանքի առաջնորդ Պետրեն, Ավագի աթաբեկության ժամանակ՝ առաքյալների անունով:

Արձանագրությունը տարեթիվ չունի, ուստի եկեղեցու կառուցման ճիշտ ժամանակը որոշ չէ: Բայց որովհետև Ավագը աթաբեկության տիրույթը ստացավ 1242 թվականին (մինչ այդ նա պաասալար էր կոչվում), երբ առաջին անգամ նա այցելության գնաց մոնղոլական Օքադա մեծ Ղանին՝ Կարակորում, ապա եկեղեցու կառուցումը պետք է տեղի ունեցած լինի 1242 թվականից հետո, մինչև Ավագի մահը, որը տեղի է ունեցել 1250 թվականին, ինչպես այդ մասին տեղեկացնում են պատմական աղբյուրները... «Ի վեց հարիւր իննսուն և ինն թուին մեռաւ Աւագն՝ որդի Խանէի, և թաղեցաւ ի Պղնձահանքն ընդ հօր իւրում»¹⁷:

Եկեղեցու շենքը փոքր է, երկարածիկ ուղիղ քառակյուրի հատակագծով, ծածկը թաղակապ է: Արևելյան կողմից ունի կիսակլոր արքիդ՝ շատ ցածր թեմով: Միակ մուտքը արևմտյան կողմից է: Արևելյան, արևմտյան և հարավային պատերի մեջ բացվում են մեկական փոքրիկ լուսամուտներ, իսկ հյուսիսային պատի մեջ՝ մի շատ փոքր կլոր

անցք: Պատերն արտաքուստ ունեն երկու կարգ ցոգով:

Բնի կենտրոնում կանգնեցված վեմքարի վրա որպես սեղանաքար դրված է մի խաչքար, որի վրա վրացերեն լեզվով փորագրված է. «Աստված ողորմի Հորդանային, որն այդ ամայի վայրը դարձրեց պիտանի»¹⁸:

Եկեղեցին կառուցված է կապտագույն բազալտի մաքուր տաշված քարերով՝ կրաշաղախի միացությամբ: Սալահատակված է եղել. տանիքը պատած է եղել սալքարերով, որոնք այժմ ամբողջովին քանդված ու թափված են:

18—14. Ջուլզ եկեղեցիներ.— Գտնվում են Ախթալայի վանքից ու ամրոցից դեպի արևմուտք, մոտավորապես երկու հարյուր մետր հեռու, Ծամլուղ բանվորական ավանը տալով ճանապարհի ձախ եզրին:

Պատմական աղբյուրները ոչ մի հիշատակություն չեն պարունակում այդ հուշարձանների մասին, բացակայում են նաև վիմագիր արձանագրությունները, ուստի որոշ չէ, թե երբ են կառուցվել դրանք և ովքեր են եղել նրանց կառուցողները: Դատելով նրանց կառուցման ու մշակման ձևերից, կարելի է համոզված ասել, որ նրանք պետք է կառուցված լինեն ԺԳ դարում:

Իրար կից երկու փոքրիկ եկեղեցիներ են, որոնք միմյանցից բաժանվում են մի ընդհանուր միջնորմով: Երկուսի հատակագիծն էլ երկարածիկ ուղիղ քառակյուրի է, ծածկերը թաղակապ: Արևելյան կողմից ունեն կիսակլոր փոքր արքիդներ՝ շատ ցածրիկ բեմերով:

Հարավային կողմի եկեղեցին համեմատաբար փոքր է. հարավային և հյուսիսային պատերին կից, ներսից ձգվում են երկուական որմնասյուներ, որոնց միացնող կամարները գոտկում են ծածկի թաղը: Գլխավոր մուտքը հարավային կողմից է. մի ուրիշ մուտք էլ բացվում է հյուսիսային պատից, որը տանում է դեպի կից եկեղեցին: Չորս փոքրիկ լուսամուտներից երկուսը բացվում են հարավային պատի մեջ և մեկական հատ՝ արևելյան ու արևմտյան պատերի մեջ:

Հյուսիսային կողմի եկեղեցին ճախորդից քիչ մեծ է, հարավային և հյուսիսային պատերին կից, ներսից ձգվում են մեկական որմնասյուներ, որոնք միանում են՝ ծածկի թաղը գոտկող կամարով:

Միակ մուտքը հարավային կողմից է՝ կից եկեղեցու միջից: Նրեք փոքրիկ լուսամուտներ բացվում են հյուսիսային պատից, նման մեկական լուսամուտներ էլ բացվում են արևելյան և արևմտյան պատերից:

Երկու եկեղեցիներն էլ կառուցված են կապտագույն բազալտի թույլ ձևով մշակված

¹⁶ Մեծիմ վարդապետ Բարձրբերդեցու—պատմության տիեզերական, Մոսկվա, 1881, էջ 184:

¹⁷ Ե. Ցակալձվիլի, Տուլս տեղ (մեջ ենթ թերում թարգմանաբար):

քարերով՝ կրաշաղախով միաձուլված: Կանգուն վիճակում են, թափված են տանիքի սալքարերը և քայքայված է տանիքի վերի շերտը:

15. Մատուռ.—Գտնվում է Ախթալայի վանքից ու ամրոցից մոտ հիսուն մետր դեպի արևմուտք, Ծամուռլ բանվորական ավանը տանող ճանապարհի ձախ եզրին: Սովորական մատուռի ձևով կառուցված մի փոքրիկ շենք է՝ ուղիղ քառանկյունի հատակագծով, արևելյան կողմից կիսակլոր փոքրիկ աքսիդով:

Ավերակ վիճակում է՝ պահպանվել են պատերը՝ երկու մետրաչափ բարձրությամբ, որոնք շարված են կապտագույն բազալտի թույլ մշակված քարերով՝ կրաշաղախով միաձուլված: Միակ մուտքը արևմտյան կողմից է, որի առջևում, մատուռի շենքին կից նկատել են մի այլ փոքրիկ կառուցվածքի հիմնապատկերը՝ քար ու կիր շարվածքով: Հավանական է, որ դա մատուռի սրահը եղած լինի:

16. Մատուռ.—Սա նույնպես գտնվում է վանքից ու ամրոցից դեպի արևմուտք, մոտ հարյուր մետր հեռու, ձորալանջին, մի այգու մեջ: Թե երբ է կառուցվել այն և ուլքեր են եղել նրա կառուցողները, նույնպես որոշ չէ: Դատելով նրա մշակման ձևերից, կարելի է ենթադրել, որ նա կառուցված պետք է լինի ԺԳ դարում:

Դա նույնպես սովորական մատուռի մի շենք է՝ ուղիղ քառանկյունի հատակագծով և թաղակապ ծածկով: Ներսից, հյուսիսային պատին կից կենտրոնական մասից ձգվում է ուղղանկյուն մի որմնասյուն, որից ելնող կամարի ծայրը հենվում է հարավային պատի մեջ դրված կալունակի վրա՝ գոտկելով ծածկի թաղը:

Արևելյան կողմից ունի կիսակլոր փոքր աքսիդ, որի կողերի պատերի մեջ կան մի-մի փոքրիկ խորշեր՝ դարակների ձևով: Միակ մուտքը հարավային կողմից է: Հարավային և արևմտյան պատերի մեջ բացվում են մեկական փոքրիկ յուսամուտներ:

Արևմտյան կողմում, կից, ունեցել է հատուկ սրահ, որի հյուսիսային պատի մի մասն է միայն կանգուն: Մատուռի շենքը և սրահի կանգուն մասը շարված են կապտագույն բազալտի մաքուր տաշված քարերով՝ կրաշաղախի միացությամբ հատակը սվաղած է կրաշաղախով, տանիքը պատած է եղել սալքարերով, որոնք ամրոցովին թափված են: Թափված են նաև քիվերի մի մասը, քայքայված է տանիքի վերի շերտը: Ներսում թափված են խաչքարերի քանդակազարդ մի քանի բեկորներ:

17. Ս. Աստվածածին խաչարձան.—Գտն-

վում է ավանից մոտ մեկ կիլոմետր դեպի արևելք, երկաթուղու Ախթալա կայարանը տանող ճանապարհի ձախ կողմում, սարալանջին, սևտառի մեջ: Ինչպես երևում է խաչքարի ետևի երեսի վրա փորագրված արձանագրությունից, որը մեջ ենք քերում ստորև, այն կանգնեցրել է Կյուրիկեի դուստր Մարիամը 1188 թվականին՝ որպես սահմանակի թար:

1. Ես Մարիամ, Դ—
2. ուստր Կիրիկե—
3. ի կանգնեցի զ—
4. Պղնձահան—
5. աջս հող հա—
6. տի սուրբ Աստուածած—
7. ինս, որք եր—
8. կրպագեք զ—
9. Մեզ յաղա—
10. թս յիշեցեք:
11. Թու(ին) ՈԼԷ (1188). Էր:

Խաչարձանը բաղկացած է պատվանդանից և կոթող-խաչքարից, որոնք կապտագույն բազալտի մաքուր մշակված ամբողջական խոշոր քարերից են: Պատվանդանը քառակուսի ձև ունի, հարթ երեսներով: Խաչքարը զարդարված է բուսական ձևի գեղեցիկ քանդակներով:

Խաչարձանի շրջակայքը, ընդարձակ տարածության վրա նկատելի են պտղատու ծառերի այգիների հետքեր, իսկ խաչարձանի արևմտյան կողմում, շատ մոտիկ, պահպանվել է գետնի մեջ կարասածև փորված և ներսից քար ու կրով շարված մի մեծ հոր:

18. Եկեղեցի.—Գտնվում է Ախթալա ավանից դեպի արևելք, Ախթալա գետակի ձախ ձորալանջին գտնվող հին գյուղատեղում, գետակի ստորին հոսանքում, անուտի եզրին:

Մուտքի ճակատակալ քարի վրա փորագրված է եկեղեցու կառուցման վերաբերյալ հետևյալ արձանագրությունը.—

1. Կամաք քարերա—
2. ռին Աստուծոյ, յամս աստուածազարարքայութեան
3. Դեմետրի, առաջնորդութեան
4. Տէր Յովանիսի, ծինամծղարութեան
5. Սիմոն, կանազութեան Անքրոպիրին:

Ինչպես տեսնում ենք, արձանագրությունը չի ավարտված, ուստի եկեղեցու կառուցման ճիշտ ժամանակը պարզ չէ: Արձանագրության մեջ հիշատակված տեր Հովհաննեսը Հաղպատի վանքի առաջնորդ Հովհաննես եպիսկոպոսն է: Ջաքարեի և Իվանի քրոջ որդին, որի առաջնորդության ժամանակը, ինչպես առիթ ունեցանք նշելու վերևում, վերաբերում է ԺԳ դարի երկրորդ քառորդին:

Որ արձանագրության մեջ հիշատակված տեր Հովհաննեսը իրոք Ջաքարեն և Իվանեն եղբայրների քրոջ որդի Հովհաննես Եպիսկոպոսն է և ոչ թե մյուս Հովհաննես անունով առաջնորդները՝ դրանից առաջ և հետո, դա պարզ երևում է եկեղեցուն կից, վերջինիս կառուցումից հետո, 1245 թվականին կանգ-



9. Ախթալա.—Ավանից դեպի արևելք, Ախթալա գետակի ձախ ձորայանքին գտնվող հին գյուղատեղիի եկեղեցու հարավային մուտքը և կից խաչարձանը

նեցրած խաչարձանի արձանագրությունից, ուր Հաղպաստի վանքի առաջնորդ է հիշվում տեր Համազասպը (այդ խաչարձանի մասին քիչ հետո): Դրանից էլ հետևում է, որ եկեղեցին կառուցված պետք է լինի ԺԳ դարի երկրորդ քառորդի ժամանակամիջոցում:

Եկեղեցու շենքը շատ փոքր է, համարյա մատուռի ձևով, հատակագիծը ուղիղ քառակուսիի ձև ունի, ծածկը թաղակապ է: Արևելյան կողմից ունի կիսակլոր փոքր աբսիդ՝ ցածրիկ թեմով: Միակ մուտքը հարավային կողմից է՝ կիսակլոր ճակատակալ ջարով և գեղազարդ պարսկարով: Արևելյան և արևմտյան պատերը արտաբուստ զար-

դարված են գլանաձև բներ ունեցող զույգ կիսասյուներով, որոնք ունեն հետաքրքիր ձևով մշակված խարիսխներ ու խոյակներ: Այդ նույն պատերի մեջ բացվում են մեկական փոքր լուսամուտ:

Ամբողջ շենքը կառուցված է կապտագույն բազալտի սրբատաշ քարերով՝ կրաշաղախի միացությամբ, սալահատակված է, տանիքը պատած է սալքարերով: Շուրջը կան մի քանի գերեզմաններ՝ տափակ-հարթ երես ունեցող տապանաքարերով:

10. Խաչար-մահարձան.—Այս խաչարձանը գտնվում է վերոհիշյալ գյուղատեղում, եկեղեցու հարավային պատին կից (նկ. 9): Որոշակի կերպով նկատվում է, որ խաչարձանը կանգնեցված է եկեղեցու կառուցումից հետո: Խաչարի հակառակ երեսի և հարավային կողի վրա փորագրված արձանագրության համաձայն, որը մեջ ենք բերում ստորև՝ վերծանված ձևով, մահարձանը կանգնեցրել է Հակոբ երեզը՝ իր և իր ամուսնու գերեզմանների վրա:

Մահարձանը բաղկացած է պատվանդանից և կոթող-խաչարից, որոնք կապտագույն բազալտի ամբողջական խոշոր քարերից են: Պատվանդանի հատվածքը քառակուսի ձև ունի, բարձրադիր է, բոլոր կողմերից ողորկ ձևով մշակված: Խաչարը շատ մեծ է՝ բարձր ու շքեղ քանդակազարդված:

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

1. Խ թուխ ՈՂԴ. (1245) կա-
2. նգնեցաւ սուրբ տերու-
3. նականս յարե-
4. շատութեան Աւ-
5. ազին եւ ծինս-
6. մծղաւորութեան
7. Պետրէի, եւ հայ-
8. րապետութեան հա-
9. մագաւալալ, եւ Յակոբ
10. Էրէց կանգն-
11. եցի գխաչս ի հա-
12. նգստ-
13. արան-
14. ի մերո-
15. լ գի-
16. ս եւ
17. գամ-
18. ուսի-
19. ն իմ յ-
20. աղաւթ-
21. ս յի-
22. շեցէ-
23. ք:

20. Ամրոց.—Այս ամրոցը գտնվում է վերը նկարագրած հին գյուղատեղիի ու եկեղեցու

դիմաց՝ դեպի հարավ, ձորի սյուս ափին, լեզվածն մի փոքր քարձրավանդակի վրա: Վերջինս երեք կողմերից եզերվում է Դեքենտ գետի և նրա ձախակողմյան վտակը հանդիսացող Ախթալա գետակի՝ ձորերի ուղղածի՝ ձգվող քարձր ու ամմատչելի քարափներով, կազմելով բնական անառիկ ամրություններ: Չորրորդ՝ արևմտյան կողմից քարձրավանդակը մի նեղ, պարանոցաձև շերտով հարակցվում է ընդհանուր լեռնաշարքին, որն ամրացված է բերդապարիսպներով: Վերջիններս շարված են կապտագույն բազալտի՝ արտաքուստ քիչ հարթված մանր քարերով՝ կրաշաղախի միացությամբ:

Այդ բերդապարիսպների մի մասը այժմ

քանդված է՝ երկաթուղու Ախթալա կայարանից դեպի Ախթալա և Ծամուղ քանվորական ավանները և դրանց սահմաններում գտնվող պղնձահանքերը նեղճի՞ծ երկաթուղի անցկացնելու պատճառով: Դրա հետևանքով նշված ամրոց—քարձրավանդակը ստացել է մի տեսակ ցամաքակղզու ձև:

Պատմական աղբյուրները ոչ մի տեղեկություն չեն պարունակում այդ ամրոցի մասին, ուստի նրա կառուցման ժամանակը որոշ չէ: Սակայն ակնհայտ է, որ նա հանդիսացել է դեպի Ախթալայի ամրոցն ու վանքը տանող ձորի նախադուռը պաշտպանող մի կարևոր և ամուր հենակետ:





Մ Ա Յ Ր Ա Թ Ո Ռ Ո Ւ Մ

Հունիսի 29-ին՝ շաբաթ.—Գիւտ նշխարաց Սրբոյն Գրիգորի Լուսաւորչին մերոյ.

Մայր տաճարում պատարագեց արժ. տ. Նշան քհն. Բեյլեքյանը:

• •

Հունիսի 30-ին՝ կիրակի.—Դ կիր. Զկնի Հոգեգալստեան.

Մայր Տաճարում պատարագեց հոգ. տ. Գեորգ վրդ. Սերայգարյանը:

• •

Հունիսի 4-ին՝ Հինգշաբթի.—Սրբոց Թարգմաւազն մերոց Սաճակայ և Մեսրոպայ.

Օշականի ս. Մեսրոպ Մաշտոց եկեղեցում պատարագեց զեր. ա. Հուսիկ եպս. Սանթուրյանը: Քարոզեց զեր. տ. Հայկազուն արքեպ. Արրահամյանը՝ «Մարգարէասցին ուստերք ձեր և զստերք ձեր, և ձերք ձեր երազովք երազեսցին, և երիտասարդք ձեր տեսիլս տեսցեն» բնաբանով:

Հաւարտ ս. պատարագի կատարվեց հոգեհանգստյան պաշտոն՝ եկեղեցու բարերարների հիշատակին:

• •

Հունիսի 7-ին՝ կիրակի.—Ե կիր. Զկնի Հոգեգալստեան: Գիւտ տփոյ Սրբունոյ Աստուծաձնի.

Մայր տաճարում պատարագեց հոգ. տ. Կարապետ քհն. Քիլիշյանը:

Հունիսի 14-ին՝ կիրակի.—Զ. կիր. Զկնի Հոգեգալստեան.

Մայր տաճարում պատարագեց արժ. տ. Հովհաննես քհն. Մարուքյանը:

• •

Հունիսի 21-ին՝ կիրակի.—Վարդավառ: Պայծառակերպութիւն Տեառն մերոյ Յիսուսի Կրիստոսի:

Մայր տաճարում պատարագեց հոգ. տ. Մուշեղ վրդ. Պետիկյանը:

• •

Հունիսի 22-ին՝ երկուշաբթի.—Բ օր Վարդավառի: Յիշատակ մեռելոց:

Մայր տաճարում պատարագեց արժ. տ. Կարապետ քհն. Քիլիշյանը:

Հաւարտ ս. պատարագի կատարվեց հոգեհանգիստ «վասն համօրէն ննջեցելոց»:

• •

Հունիսի 28-ին՝ կիրակի.—Բ կիր. Զկնի Վարդավառի:

Մայր տաճարում պատարագեց վրահայոց թեմի առաջնորդ զեր. տ. Կոմիտաս եպս. Տեր-Ստեփանյանը: Քարոզեց Վահագն Հայրապետը՝ «Ի վերայ Աշոցն և սրբոյ էջմիածնի ամենայն ազգն հայոց կապեալ կառքնաբանով:

Հաւարտ ս. պատարագի կատարվեց հոգեհանգիստ՝ ի հիշատակ զեր. տ. Խաղարքեպ. Աջապահյանի, որ վերջերս վախճանվել է Բեյրութում:



ԱՄԱՎԵՐՋԻ ՀԱՆԴԻՍՈՒԹՅՈՒՆ ՀՈԳԵՎՈՐ ԾԵՄԱՐԱՆՈՒՄ

Հունիսի 17-ին, երկուշաբթի օրը, առավոտյան ժամը 10-ին, հոգևոր ճեմարանի հանդիսասարհում տեղի ունեցավ ս. Էջմիածնի հոգևոր ճեմարանի 1987—88 ուսումնական տարվա ամսվերջի հանդեսը, ի ներկայության Մայր Աթոռի միաբանության, Գերագույն հոգևոր խորհրդի և Վերստուգիչ հանձնաժողովի անդամների, հոգևոր ճեմարանի դասախոսական կազմի և Մայր Աթոռի պաշտոնեությունների:

Հանդեսին նախագահում էր Մայր տաճարի լուսարարապետ զեր. տ. Հայկազուն արքեպ. Աբրահամյանը:

Հանդեսն սկսվեց Հայկական ՍՍՀ պետական հիմնով և հոգևոր ճեմարանի քայլերգով:

Հոգևոր ճեմարանի վերակացու արծ. տ. Նշան քհն. Բեյլերյանի բացման խոսքից հետո, սկսվեց հանդեսի գեղարվեստական մասը, որի ժամանակ ուսանողները շնորհալիորեն հանդես եկան արտասանություններով, իմքերգերով և դաշնամուրային նվագով:

Հոգևոր ճեմարանի երգչախումբը կատարեց «Նմանեալ Մովսէսի» և «Որք զարդարեցին» շարականները: Բ յարանի սան Հովհաննես սրկ. Գրվըզյանը արտասանեց Ավ. Խառնակյանի «Մեր պատմիչները և մեր գուսանները» բանաստեղծությունը: Ա յարանի սան Վարդան Տեղեկյանը դաշնամուրի վրա կատարեց Ռախմանինովի «Պոկա»-ն, Գ դասարանի սան Խաչիկ Խաչատրյանը արտասանեց Վ. Տերյանի «Երկիր Նաիրի»-ն, Բ դասարանի սան Հակոբ Քյուվեյրյանը դաշնամուրի վրա կատարեց Կոստանդին Կրեստենկովի «Պրիմա կարեզա»-ն («Առաջին շոյանք»), Բ յարանի սան Հակոբ սրկ. Նալբանդյանը արտասանեց Վ. Թեքեյանի «Աղոթք վաղվան սեմին առջև»-ը, Բ յարանի սան Հովհաննես սրկ. Գրվըզյանը դաշնամուրի վրա կատարեց Դյուվերնուայի «Վալս»-ը, Բ դասարանի սան Հակոբ Խաչատրյանը արտասանեց Սիլվա Կապուտիկյանի «Խոսք իմ որդուն»-ը:

Խ. Մեյխանաջյանի ղեկավարությամբ հոգեվոր ճեմարանի երգչախումբը կատարեց Կոմիտասի «Քաղհան», «Գարուն ա», «Խումար պառկե», «Իմ յինարի յարը», «Լեպ-հոլե, լե» խմբերգերը:

Գ յարանի սան Սասուն սրկ. Վարդան-

յանը, ի դիմաց հոգևոր ճեմարանի ուսանողության, կարդաց երախտագիտության և շնորհակալության հետևյալ ուղերձը:

«Դեռ երեկ ձյուն էր ու ձմեռ:

Անձկությամբ նայում էինք պատումհանների տակ բարձրացած բարդիներին ու սպասում անհամբեր, թե մելկանդամ ծառերը ե՛րբ կկանաչեն:

Իսկ հիմա կոռնկն է թառեյ հայոց գանգրագիսակ բարդուն, և երեկվա դողույջ, վտիտ բողբոջներն այսօր դարձել են թուփ ու ծաղիկ:

Դուք, իբրև երջանիկ, հոգնաբեկ սերմնացաններ, եկել եք այսօր ձեյ թերթը հսկայաբեր:

Օր-օրի մենք աճում ենք, հասակ առնում, ձեր բարի ու պայծառ հայացքների ճերքո ծանրանում ենք ու իմաստնանում, իսկ դուք հոգնում եք, ծերանում: Մենք գտնում ենք, հարստանում, իսկ դուք վատնում եք, հատնում: Բայց դուք ուրախ եք ձեր շռայլումների համար, որ ձեր կորցրածով, աղքատացումով հարստացել է մեկը. ճամփա է գտել ու կարող է քայլել և եթե ընկնի, կկարողանա բարձրանալ:

Դուք մեզ թևեր եք տալիս:

Տալիս եք երազ ու տեսիլք:

Սովորեցնում եք թռչելու գաղտնիքը:

Ինչո՞վ, ինչպե՞ս կարող ենք մենք շնորհակալ լինել ձեր քարության, ձեր տվածի, ձեր վատնածի համար:

Ծերմակում են ձեր մազերը՝

Պատճառը մենք ենք:

Ջեզանից ումանք ծերանում են, թեքվում՝

Պատճառը մենք ենք:

Ու թե պատահի, որ ձեզնից ումանք էլ չա՛հելանան մի օր ծերության հասակում՝

Կրկին պատճառը մենք կլինենք:

Հայ ուսուցիչը երկար-երկար ճանապարհ է անցել: Հայ հոգևորականը աղոթել է, սովորել ու սովորեցրել:

Երեկ՝ նրանք,

Այսօր՝ դուք:

Ու...

Վաղը՝ մենք:

Քայլել են.

Քայլել եք:

Եվ...

Պիտի քայլենք:

Պիտի անցնենք այն ճանապարհով, որով քայլել են մեր պատմության հսկաները: Իսկ այդ ճանապարհի հարթ ու հեշտ չի եղել: Բայց ոչ ոտքերը արյունոտվել են հաճախ: Նա, ով հախընտրել է հեշտը, խոսափել դժվարից, — անցել է անհուշ ու անհետ:

Տարօրինակ է գուցե.

Բայց այդ է մեր պատմության խորհուրդը, իմաստը: Երևի հենց դրա համար էլ դժվար է հայ լինել, հայ ապրել:

Մենք պարտավոր ենք՝

Ավարտին հաղթել ձեր սկսածը,

Վերադարձնել ձեր կորուստները:

Սակայն լավ է չխոստանալ:

Խոստումը ոչ թե խոսքն է,

Այլ՝

Գործը,

Աշխատանքը:

Հավանաբար դա է պատճառը, որ հա, ով ասելու շատ քան է ունենում, լուր է երկար...

Ընդհակադրության խոսքերը մաշվել են վաղուց:

Մենք շնորհակալության խոսքեր չենք թողնում: Իրա փոխարեն պետք է աշխատենք, որքան հնարավոր է, ձեր հույսերն ու լավագույն ակնկալիքները արդարացնել:

Որ՝

Հայոց Հայրապետը

Եվ դուք

Գոհ մնաք մեզանից:

Որպեսզի եկող սերունդները խոսեն մեր մասին, ինչպես որ մենք ենք խոսում անցած ու անցնող սերունդների մասին:

Հանդիսության երկրորդ բաժնում հոգևոր ճեմարանի վերատեսչի պաշտոնակատար արծ. տ. Հովհաննես քհն. Մարությանը կարդաց հոգևոր ճեմարանի 1967—68 ուսումնական տարվա հաշվետու զեկուցումը:

«Գերաշնորհ սրբազան հայրեր, հոգեշնորհ եղբայրներ, սիրելի դասախոսներ, սաներ և ներկաներ:

Հնձվորի անխառն ուրախությամբ այս պահին հավաքվել ենք այս նվիրական հայր-կի տակ ի մի բերելու 1967—68 ուսումնական տարվա մեր արդյունքները:

Հոգևոր ճեմարանի վերատեսուչ հոգ. տ. Ներսես ծ. վրդ. Պողոսյանը, որը այս օրերին գտնվում է ազգիս Հայոց Հայրապետի՝ Տ. Տ. Վազգեն Ա կաթողիկոսի հետ հեռավոր Ամերիկայի հայաշատ գաղութներում՝ մեր քույրերին ու եղբայրներին բաշխելու համար ու Էջմիածնի և հայրենիքի սերն ու լույսը, իմ վրա է դրել այս ուսումնական տարվա արդյունքները ամփոփելու պարտականությունը:

Էջմիածինը հալ եկեղեցու պատմության մեջ և մեր ժողովրդի կյանքում ունեցել է և հավատում ենք, որ ունենալու է հետագայում հալ մեծ դեր: Այս շրջապատում է, որ շնչել են հիգիենայի դարի մատենագիրները, պատմիչներն ու թարգմանիչները, այս սրբազան միջավայրում է, որ մեր վարդապետները ներշնչվել, երկնել, տառապել են մեր ժողովրդի հետ: Մեր հայրապետների և ժողովրդի կյանքով ապրող իշխանների, թագավորների և ազնիվ մարդկանց հանդիպման վայր է եղել ու Էջմիածինը:

Սրբակոյթի և կրթական այս օջախը այսօր էլ իր համեստ ուժերով աշխատում է պատրաստել հայրենիքի և եկեղեցու սեղանների համար պատարագվող անձնակորություններ: Այս հաստատությունը միշտ կանգուն է մնացել յուրաքանչյուր հայ մարդու նյութական և քաղաքական զոհաբերությամբ և քաջալերանքով: Վա՛յ այն ուսանողին, որին չի հառնում այս ճեմարանությունը, և որը չունի այս հաստատության հանդեպ իր պարտքը հատուցելու գիտակցությունը:

Այնուհետև արծ. տ. Հովհաննես քհն. Մարությանը համառոտակի ներկայացնելով ճեմարանի ներքին կյանքի պատկերը՝ եզրակացրեց.

«Այս հաստատությունը, ինչպես գիտեք, սզգին է, և չմոռանա՞ք մեր շնորհակալական խոսքն ասելու մեր հայրենի կառավարությանը, որը իր կարելին է անում հոգևոր ճեմարանի գոյատևման համար պայմաններ ստեղծելով:

Ընդհակադրություն հալ հոգևոր ճեմարանի բարեխաղներից և մեր ժողովրդին, որոնց նյութական և քաղաքական աջակցությամբ է, որ միշտ կանգուն են մնացել և այսօր էլ գործում են մեր հոգևոր ճեմարանները:

Պարտք են գզում շնորհակալություն հայտնելու Մայր Աթոռի սիաքանությանը, Գերագույն հոգևոր խորհրդի, վանական խորհրդի անդամներին, որոնք իրենց կարելին անում են մեր երեխաների դաստիարակության և այս հաստատության հարատևման համար»:

Զեկուցադրի ավարտից հետո հրապարակվեցին այն ուսանողների առնունքներ, որոնք ուսման, վարքության և արտադասարանական աղօտակար աշխատանքների համար արժանացան առաջին և երկրորդ մրցանակների:

Հանդեսն ավարտվեց գեր. տ. Հայկազուն արքեպ. Աթրահամյանի շնորհավորական և խրատական կարճատև խոսքով, խմբովին երգված «Հայր մեր»-ով և «Պագհալսինի»-ով:



ՍԱՍՈՒՆ ՍՐԿ.
ՎԱՐՈՒՆԹԱՆ
(Գ յաբարմ)

ՀԱՎԻՏԵՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ՝ ԱԿՆԹԱՐԹԻ ՉԱՓ ԵՐԿԱՐ*

«...Իսկ ամենամ եթե մնա
Երկրի մեկ խորշն հողակույտն իմ,
Եվ հիշատակս այ թառամի
Ա՜հ, այն ատենն ես կմեռնիմ...»

Մարդը իր կամքով, համատությանը, հանճարով ու հմարամտությամբ կարողանում է փոխել գետերի ընթացքը: Անապատները մրգաստաններ դարձնել: Կարող է ծովեր դատարկել: Աստծու մոտ հյուր գնալ: Քարերից անշուշտ հրաշքներ կերտել:

Բողոքից պայթյունից կհուզվի: Հողից գինի կքամի ու քարից՝ հաց: Հնադարյան մի պապիրոսի կամ մագաղաթի չնչին պատառիկի համար կդողդողա՝ որդու նման կփափայլի: Համով ասվող մեկ տողից, սրտով երգված մի երգից սիրահարվածի նման կըզմայլվի...

Արարիչ է մարդը:

Նաև կքանդի արձաններ անձեռակերտ: Կավերի շենքեր խաղաղ, ուստաններ մարդաշատ: Մոխրակույտների կվերածի գոքեր ձեռագիր, նկարներ կենդանի և ապարանքներ շքեղագարդ: Կսպանի մարդուն: Կխելի երազը պայծառ: Կկեղծի հեքիաթը կյանքի: Ինչը դարերով եղել է սրբություն, մի ակընթարթում ոտնակոխ կանի, կդառնա փոշի: Կզրկի իր նմանին: Կխլի հողը, տունը հարեւանի: Մի պատառ հացի համար ընկերոջ կոկորդից կթոնի: Շահի համար կծախի սեփական պատիվը, հողը, հայրենիքը, լեզուն: Շապիկի նման կփոխի դավանանքը, սկըգրուները—

Գազան է մարդը:

Թե ուզենա զվարթնոցներ կերկնի և թե կքանդի պալատներ: Թե մանուկների ողջակեզ կանի և թե կծնի լուսագեղ մանկիկներ— Կիսագազան, կիսաաստված է մարդը: Հնարավոր կամ անհնարին քաներ չկամ մարդու համար—

Ամենակարող է մարդը:

Բայց կա մի թշնամի գորեղ, բրի առջև ծունկ է իջնում մարդը:

Մահ—

Ահա մարդու հավիտենական, անպարտ թշնամին:

Ջենքով, գործությամբ, ինքքով, հանճարով չես կարող կովել նրա դեմ: Նա ամենագոր է: Ամենակալ: Նա տեր է ու իշխան: Նա կյանք չէ, որ սպանես: Կանաչ չէ, որ տրորես: Ծառ չէ, որ արմատախիլ անես: Լույս չէ, որ մարես: Խավար չէ, որ լույսով գրես: Նա ինքը անհունությունն է: Անսահմանությունը, դատարկությունը, անգթությունը, անզգայությունը, անվախճանը: Նա հենց հատված արմատն է: Տրորված կանաչը: Կարծրացած խավարը...

Բայց իմ ժողովուրդը չսոսկաց մահվանից: Գտավ զաղտնիքը նրա դեմ կովելու:

Մահով հաղթեց մահին: Քրքջաց, ծիծաղեց մահվան աչքերին մայելով: Մահվան հետ թաղվեց, բայց և հուճկի պես հարյավ...:

* Մեր ընթերցողներին ենք ներկայացնում հոգևոր ճեմարանի ամսագրից հանդիսություններից առաջ ինքնագիր-շարադրությունների մրցույթում լավագույն գնահատանքների արժանացած ուսանողական երեք շարադրություններ:

Այդպես և նա՝

Այն պատահեցիկը:

Պարզապես Պետրոս: Աղքատ, կարոտյալ մանուկ: Զրկանքներից, հոգսերից՝ բարեկամ: Լացից, հառաչից՝ մտերիմ: Վշտից, տառապանքից՝ ընկեր: Ցավից, հիվանդությանց՝ ծանոթ...:

Ծով կարիքի, ցավի ու անտարբերության հոգեմաշ մոռուչի միջից աղաղակեց պատանին մի օր.

— Ո՛հ, կայծ տըվեք ինձ, կա՛յծ տըվեք, ապրի՛մ...

Բայց մահը չար էր Սադայելի նման, անգութ ու անաստված: Չխղճաց: Չնահանջեց: Տղան տասնյոթ-տասնութ գարուն հագիլ էր բոլորել, երբ զգաց մահվան մոտիկությունը. Ցնցվեց:

Սարսուռաց:

Սարսափեց:

Եվ մի օր էլ, երբ Այգեգլխում, մեռության մեջ շրջում էր, հանկարծ, հանդիպեց մահվան:

— Դու իմն ես, — ասաց մահը ցուրտ քրքրանքով ու սառցե ձեռքերով փորձեց գրկել պատանուն:

— Ո՛հ, տվե՛ք հոգվոյս կրակի մի կաթիլ, սիրե՛լ կուզեմ դեռ, վ՛ապրիլ ու ապրիլ, — սըրտապատառ հեծեծաց տղան:

Ծառերն օրորվեցին վշտահար...

Ի՛նչ անել:

Մահվան դեմ կռվել անհնարին է: Չկա՞ մի ելք, ճանապարհ: Եվ ի՛նչ բան է մահը: Ի՛նչ է կյանքը: Ինչո՞ւ եմ ծնվում: Ինչո՞ւ եմ ապրում: Հաստատում ոչ ի՛նչ չկա: Անցավոր է ամեն բան: Հնարավոր չէ՞ արդյոք, ապրել այնպես, որ հավիտենականը ակնթարթով չափվի: Որ հավերժի և վայրկյանի սահմանները ջնջվեն: Որ մահը սոսկալի չդառնա: Որ կյանքը հաղթող, հարատևող լինի:

Տղան սկսեց առանձնություն փնտրել:

Մեռության մեջ հաճախ խոկում էր անվախճանի, առեղծվածի, անհայտի լուծման մասին: Պատասխան, պատասխան էր

փնտրում, որ բախասան լինի իր ցաված սրտի համար: Եվ այդ առանձնության մեջ, ցավից ու հառաչանքից, տառապանքից ու անստանալից, կենսասեր տեսիլներից ու հուսաբեկ անգործությունից, սիրտ անաղարտ անըջանքներից ու մանկատենչ խոկումներից, միամիտ, մաքրափրփուր երազներից ու գողտրիկ, անհաս վայելքներից ծնվում էին երգերը, ինչպես գարնանը ձմեռադիկը կծնվի. ցաված սրտին իբրև արձագանք՝ աչքից արցունքը կթափվի: Այդ երգերը զարմանալիորեն կենդանի էին, գունեղ, մտերմիկ, շնչող, թրթռուն: Հառաչող, թախծող: Կաղկալից, թեթև:

Այդ երգերում շաղ էին եկել բանաստեղծի սրտի պատանդկները, հոգու քեկորները, արցունքի շիթերը, երազների կտորտանքները, հառաչանքների հևքը, անպատասխան մնացած հարցումները, կասկածներն ու տարակուսանքները, հիվանդ մարմնի տաք մըրմունջները...: Այդ ամենի ամբողջությունը կենդանի մի կյանք էր՝ թրթռուն, իրական:

Մահվան և կյանքի սահմանները ասես ջնջվեցին:

Մահը դադարեց ահաբեկիչ լինելուց: Մահը սոսկաց իր գոհից: Բեռը ծանր էր: Հաղթանակը՝ պարտություն: Հակառակորդը՝ անաչառ: Սիրտը ճնշելու չափ անվճառ, միամիտ, դողդոջուն, ինչպես թևավորը ագռավի ճանկերում: Մահը կծկվեց, սուս ու փուս, կապտեց ու հեռացավ ամոթահար: Եվ պատանին զգաց իր հաղթանակի վիթխարիությունը: Հասկացավ, որ ինքը մահից, մահացումից, մոռացումից կարողացել է խել իր ոգու, երազների, հեքիաթների, ապրումների, սրտաբեկ թրթիռների, հոգսերի, տառապանքների ու տեսիլների ցան ու գիր քեկորները և հանձնել հավիտենության: Եվ քանի ծպտում է արև՝ քացվում է գարուն: Ապրում են մարդիկ: Սիրում են մարդիկ: Ծնվում են մարդիկ, կարողում են իրեն, հիշում՝ ինքը շնչում է նրանց հետ: Եվ կարող է համարձակ ասել ժամանակին, մահից, մարդուն, Աստծուն ու հավերժին.

— Գիտցե՛ք, որ դեռ կենդանի եմ...:





ՀՈՎՀԱՆՆԵՍ ՍՐԿ. ԳԸՎԸԳՅԱՆ

(Բ լսարան)

ԽՈԿՈՒՄ ԱՂՈԹՔԻ ՄԱՍԻՆ

Համատարած մութ է: Ամեն ինչ ծածկվել է խավարի ծովում:

Աղքատության միջից ամարկու ոգիների նման իրենց բարձրաքերձ հասակով ու վիթխարի կազմով, ուրվականային սևությամբ երևում են Մայր տաճարի գմբեթները:

Երկնքում լուսնի երեսը տեղ-տեղ ծածկված է մութ ամպերով:

Սուրալով փչում է հյուսիսային քամին:

Ժամը 9.30 է: Սովորությունն է հոգևոր ճեմարանի սաներին, ամեն չորեքշաբթի իրիկուն հավաքվել տաճարում, խոկումի պահեր անցկացնելու: Այս միստիկ պահին մասնակցում են միայն ճեմարանի սաները: Առանձնացած, մի անկյունում քարացած, ինքնամփոփ ու երկյուղածությամբ յուրաքանչյուր ապրում է իր խոկումի պահը:

Գիշերվա այս խաղաղ պահին, **Իջման սանդակի** պլալացող մոմի ցուրիները ցրված ու մտածում են: Այստեղ ամեն ինչ ոգեկան է, այստեղ նյութը պատյան չէ, ոգին, գաղափարը զարման հույսի ծիլերի նման նյութը ճեղքելով հորդել են, վարարել, և ինձ թվում է, թե այստեղ, այս փոքրիկ տաճարում ջնջվում են սահմանները անսահմանի, ու հավերժի, վայրկյանի, ժամանակի և տարածքի միջև անհանում են տարբերությունները և անհացած, աղոթքով զորացած ինքնամոռաց մարդիկ ապրում են այս հազվագյուտ գերերջանիկ կյանքի պահերից մեկը:

Աղոթքը սրտի մեջ վառված մի լույս է, կարդալու համար գերազույց իմաստության օրենքը՝ Աստուծո կամքը: Աղոթողի համար Աստված սպիտակափառ ամպերի վրա չէ նստած երկնքում, Նա միայն տիեզերքի անհունության մեջ չէ, այլ ամենուր, ամեն թփի ու շուղի, բնության մեջ տրոփող ամեն մի մասնիկի, այլև մեր հոգու մեջ: Պետք է բաց

անել այն թանձր քողը, որ հաճախ փակում է մեր հոգու աչքերը: Աղոթքը հոգու քույագերծումն է՝ բացահայտելու համար ճշմարտության և գեղեցկի անդրագույն լույսը: Աղոթքը հոգու տեղն է դեպի ճշմարիտը, սուրբը, գեղեցիկը, դեպի Աստված:

Մարդկային կյանքը լի է նեղություններով, փորձություններով, և մեր հոգին տառապում է մարդկային ներքին հավիտենական հակասությունների մեջ, և մարդու կյանքը տարուքերվում է անվերջ պայքարի, ներհակ ապրումների ոլորտում մինչև իր վախճանը: Ինչպես կողմնացույցի սլաքը միշտ հակված է դեպի հյուսիս, այնպես էլ մարդկային եսը հակված է դեպի աշխարհայինը, փառքն ու վայելքը:

Այս խորհրդավոր պահին, հեռու աշխարհային բոլոր հոգսերից ու ժխտից, մեզմիջ յուրաքանչյուրը կամենում է սրբվել, թեթեվանալ ու խաղաղություն գտնել:

Աղոթքի պահը սրբազան մի վայրկյան է մարդու կյանքում, երբ նա իր ամենաթանկարժեք ունեցվածքը՝ սիրտը, պատարագում է Աստծուն: Հպատակվել ուրիշի կամքին՝ նշանակում է կորցնել ներքին անկախությունը, այնինչ այստեղ աղոթքով հոգին ոչ միայն չի կորցնում, այլև սրբվում, մաքրվում է: Ջերմեռանդ աղոթքի ազդեցության տակ մարդկային հոգին, ինչպես ամպ, լցվում է սիրտ ցողով, ծարաված, բանավոր տունկերի վրա անձրևելու, քաշիվելու համար: Աղոթքը կենարար ալմ լույսն է, որ փարատում է մեր հոգու վրա նստած մեզր, այն քանալից, որով լուծվում է կյանքի առեղծվածը: Աղոթքով ու հավատքով լցված ու ներշնչված անհատներ շատ են եղել մեր ժողովրդի մեջ, որոնց հոգիները թափ ու թոփչք են ստացել, սավառնել երկնքի ոլորտ-

ներում և ստեղծել հոգեպարար, մարգար-տաշար աղոթքներ, որոնք մոտեցրել են մարդուն հավիտենականության և ժամանակի խորհրդին: Այդ հավատքով են գործել ու աղոթել մարեկացիներն ու շնորհալիները, որոնց ցանցներն ու տաթևացիները, որոնք որպես հայ ժողովրդի մեծ աղոթարարներ, լուսավոր աստղերի մահաց փայլում են հայոց պատմության երկնակամարում:

Աղոթքը սեր է, անձնվիրություն դեպի մեր երկնավոր Հայրը և երկրավոր որդիները, ու մարդկությունն է: Աղոթքը ավելի ուխտ է Աստուծո հետ, քան խնդրանք: Ի՞նչ արժեք պիտի ունենային այս մեծակառույց սյուներն ու կամարները, եթե նրանց գմբեթների տակ

չլսվեին աղոթքի վրձնույններ: Մարդ աղոթքով միշտ վերածնվում է և մոտենում Աստծուն՝ ծուլվելու համար Նրա մաքրամաքուր էությունը:

Եվ ահա այս խորհրդավոր պահին, այս պատմական կամարների տակ, բոլորի սրբությունը իբրև երգեհոն, միաձայն, դանդաղ և կերկեր՝ լսելի է դառնում Նարեկագու «Բարձրի՛նէ՛ն ողորմած, զանքերելի ծանրութիւն...» հոգեզմայլ ու հուզիչ աղոթքը:

Ու ականա աչքերս փակվում են, և ես շնջում եմ. «Ողիղ եղիցին աղօթքն իմ, որպէս խումկ առաջի քո Տէր: Ողիղ եղիցին...»:





**ՀԱՎՈՐԱ ՍՐԿ.
ՆԱԼԲԱՆԴՅԱՆ**
(Բ յարամ)

ԾՆՆԴՅԱՆ ՄԻ ԱՌԱՎՈՏ

Ծճճճի առավոտ մըն է. ձյուն ձմեռ. գա-
վառի խորունկ ձմեռներից մին:

Խթման գիշերների անբացատրելի խռով-
քը սրտիս, ավետիսի վերջին հեռավոր ար-
ձագանքները ականջիս մեջ, ես ու մայրս
պատրաստվում ենք եկեղեցի գնալու: Լսվում
են եկեղեցու զանգերի քաղցրալուր դողաճ-
ներ. դուրս ենք գալիս տնից:

Դրսում ծառերը մերկացած իրենց կանա-
չագեղ և երփներանգ զգեստներից, կքվել
էին ճերմակ ձյունի ծանրության տակ:

Ես՝ ինը տարեկան նորափեստուր տիրա-
ցու, որ անգուսպ սիրով կապված էի եկեղե-
ցուն, իսկ մայրս՝ ջերմեռանդորեն ավանդա-
պաշտ հայ կնոջ տիպար մը, ձեռք-ձեռքի
քոնած քայլում ենք ձյունին մեջ, լուռ ու ա-
մայի ճամփով: Մութ է չորս կողմ. ձյունին
ճերմակն է, որ լուսավորում է գետինը:

Եկեղեցին, ուր առկածում են քաղմաթիվ
սովեղեն բոլքեր, պաշտամունքը սկսել է ար-
դեն: Ու լուսավառ, խնկալետ մթնոլորտի մեջ
ծփացող մշուշի միջից ծամվողներն, իրենց
բազմոցների վրա կանգնած, երկրպագում են
ու խաչակնքում իրարից ոգևորվելով: Երբ
դպիրները տոնական օրերի իրենց թավջից
պատրաստված շապիկներով պճնված
«խորհուրդ մեծ»-ը կերգեն, փոքրերի սուր
ձայները, խառնված մեծերի թավ ձայնին,
օդը կայեկոծի:

Պահարանի մեջ, պատից կախված, ու
հատկապես ինձ համար մորս կարած շապի-
կը հագնելով, կերթամ խառնվի դպիրներ
հոծ շարքին, զիլ ձայնս էլ խառնելով նրանց
երգին:

Պահ մը ուշադրությունս կգրավե անծանոթ
մի եկեղեցականի կիսադեմքը, որ վեղու
ստվերի մեջ էլ ավելի խորհրդավոր կդառ-
նա:

Աշուկներս խոշոր կբանամ՝ ավելի լավ
տեսնելու համար այդ անծանոթ վեղարավո-
րին, որ երբեք չի նմանիր ճերմակ մեր թեմի

առաջնորդին. իրավ որ նրա պես հաղթա-
հասակ է ու քաջակամ: Բայց մորուքը ավե-
լի կարճ ու սև և ճիշտ մեջտեղից մի քիչ
սպիտակած: Աչքերն իրենց մեղուշ ու քաղցր
հանդարտությամբ անմիջապես կգրավեն
քեզ ու կհամակեն հոգիդ իրենց ազնվական
շնորհով:


Վսեմ ու անբացատրելի քան մը կծուրի ի-
րովանդակ անձից. կլանված, խորին մի
հիացմունքով կդիտեմ այդ մարդուն, իրա-
պես պատկերի մը չափ առինքնող ու ներ-
դաշնակ: Կզգամ, որ անսովոր մեկն է, երբ
մանավանդ կլսեմ նրա ձայնը խորունկից ե-
կող արձագանքի մը պես տպավորիչ: Քիչ
հետո խորան կբարձրանա, այս անգամ ճեր-
մակ շուրջառի մը մեջ պարուրված, կարդա-
լու համար «իդաքերից» Ավետարանը: Այդ
պահին կատարյալ վայելք մը կլինի զինք դի-
տել այդ դիրքի մեջ, վեղարի փայլուն սևը
ընկած շուրջառին ձյունափայլ ճերմակին
վրա՝ ակնախտիտ և գեղեցիկ մի հակասու-
թյամբ, վեղարին, որ կզգաս, թե խորհրդա-
վոր դարձնելու համար ստեղծված միակ գըլ-
խանոցն է:


Տրտմանուշ ձայնով կկարդա անծանոթ
վարդապետը սրտայի ու անուշ մի պատմու-
թյուն:

Ահա և այդպես, հոգով, մտքով ու արտա-
քինով իսկապես վայելուչ եկեղեցականը առ-
ծանոթ մնաց ինձ:

Օհ, որքան պիտի ուզեի վերապրիլ ծննդի
այդ անմոռանալի առաւիտտը, նորից տեսնե-
լու խորից պլպլացող լուսեղ ու քաղցր նայ-
վածքով սխրայի վանականը իր ձյունափայլ
շուրջառով:

Մերթ ընդ մերթ կհիշեմ նրան, և արցունքի
անանուն մի հուզմունք կողողի իմ հոգին: Իմ
կյանքի ճանապարհին որպես ուղեցույց՝
կատարելագույն քաղձանք միշտ նա է եղել,
ու ես ձգտել եմ շարունակ նմանվել նրան, որ
իմ երազն է դարձել...





ՀԱԿՈՒ ՄԻՍԻԹԱՐՅԱՆ

(Դոցենտ)

ՍԻՄԵՈՆ ՎԱՐԴԱՊԵՏ ԶՈՒՂԱՅԵՑՈՒ ՄԱՏԵՆԱԳՐԱԿԱՆ ԵՎ ՔԵՐԱԿԱՆԱԳԻՏԱԿԱՆ ՎԱՍՏԱԿԸ

Սիմեոն Զուղայեցիի հայ մշակութային կյանքում մեծ դեր է խաղացել: Զերականության և տրամաբանության վերաբերյալ նրա երկասիրությունները մի քանի տասնամյակ զգտագործվել են մեր քոլոր դպրոցներում որպես լավագույն ձեռնարկներ, դրանցով կրթվել ու դաստիարակվել են բազմաթիվ սերունդներ: «Ցուցակ ձեռագրաց Մաշտոցի աճվան Մատենադարանի» աշխատության մեջ, ուր այժմ ընդգրկված է ընդամենը 5000 ձեռագիր, նշված 205 քերականական գրչագրերից 52-ը պատկանում են Զուղայեցուն: Նույն ցուցակում Զուղայեցու աճումով մնացել են նաև 38 գրչագիր փոխուփայական և տրամաբանական աշխատություններ: Հավանաբար Զուղայեցու աճումով մեծ քանակությամբ ձեռագրեր կլինեն նաև դեռևս չհրապարակված մյուս գրչագրերում: Այս փաստը ցույց է տալիս Զուղայեցու աշխատությունների նկատմամբ եղած մեծ հետաքրքրությունը, որն, անշուշտ, բխել է նրա արժեքավորությունից: Զուղայեցու քերականությունն ու տրամաբանությունը ամենավաղ շրջանում թարգմանել են մեր հարևան վրացիները՝ առաջինի հիման վրա կազմել են վրաց քերականությունը, իսկ երկրորդը դարձրել են վրաց դպրոցներում որպես տրամաբանության ձեռնարկ¹:

Սակայն պետք է ասել, որ Սիմեոն Զուղայեցու քերականագիտական ժառանգության զնախաժան հարցում մեր բանասերները ցուցաբերել են սխալ մոտեցում: Մինչև այժմ, գրեթե քոլոր ուսումնասիրողները, նրա քերականության սկիզբը համարել են 1225

թվականը, այսինքն այն տարեթիվը, երբ Կոստանդնուպոլսում տպագրվել է նրա գիրքը: Այսպիսի սխալ մոտեցման հետևանքն այն է եղել, որ Զուղայեցին շուրջ մեկ դար ետ է տարվել և նոր տիպի քերականություն կազմելու պատիվը ուրիշներին է վերագրվել: Այսպես՝ Զուղայեցին դրվել է Կոնստանդնուպոլսի, Հովհաննես Հոյով Կոստանդնուպոլսեցու, Ոսկան Երևանցու և ուրիշներից հետո, մինչևև նրա քերականության ձեռագիր գրիչակները վերոհիշյալ հեղինակների երկասիրություններից շատ ու շատ առաջ գոյություն են ունեցել և գործածության մեջ են դրված եղել հայկական դպրոցներում:

Խնդիրն այն է, որ մույն քերականի հայ մեկնիչները շատ չեն հետաքննել սկզբնաղբյուրից, միայն կատարել են առանձին ճշտումներ, արել են որոշ հավելումներ՝ նյութը շարադրելով գրեթե նույնությամբ: Միայն Վարդան Արևելցին է, որ շարահյուսական համակարգին վերաբերող որոշ հարցերում շեղվել է սկզբնաղբյուրից և նոր խոսք է առել:

Գոյություն ունեցող ավանդական քերականության քարացած սկզբունքներից որոշ չափով շեղվելու և նոր դրույթներով քերականություն կազմելու առաջին համարձակ քայլը արել է Սիմեոն Զուղայեցին: Ի՞նչ հիմքեր ու փաստեր կան այս հարցն ապացուցելու համար:

¹ Տե՛ս Պ. Մ. Մուրադյան, Հայ-վրացական մատենագրական փոխհարաբերությունները XVIII դարում, ռուսերեն լեզվով, Երևան, 1966, էջ 112 և 189:

² Այս հարցի առաջնության պատիվը պատկանում է երիտասարդ ուսումնասիրող Հ. Միրզոյանին: Տե՛ս նրա «Սիմեոն Զուղայեցու կյանքը և գործունեությունը» հոդվածները, «Պատմա-բանասիրական հանդես», Երևան, 1966, № 2, էջ 189—198 և «Սովետական Հայաստան», Երևան, 1966, № 8, էջ 95—98:

Անվանի հայագետ Հ. Հակոբոս վարդ. Տաշյանը իր «Յուդեական հայերեն ձեռագրաց մատենագրարանին Միխայելյանի Վիեննա աշխատության մեջ նշում է, որ «այս քերականությունը (խոսքը Ջուդայեցու ձեռագրերից մեկի մասին է—Հ. Մ.) չի նմանի հնագույն քերականությանը: Ավելի նոր քերականությանն անմատչելի ունի կազմությանը»¹: «Նոր քերականություն» ասելով Տաշյանը, անշուշտ, հասկանում է հետագա, իր օրերի քերականությունները: Տաշյանի նշած ձեռագիրը ընդօրինակված է 1721 թվականին, դրանից առաջ գրված մի այլ ձեռագրից:

Իսկ Մեարուպ Մաշտոցի անվան մատենադարանում պահվող № 2880 ձեռագիրը ընդօրինակված է 1850 թվականին իրենից առաջ գոյություն ունեցող մեկ այլ ձեռագրից: Նշված ձեռագրի վրա գրված է. «Սիմեոն վարդապետի Ջուդայեցու՝ արարեալ քերականությանը ըստ լեզուի մերում հայկազանց»:

Տաշյանի նշած (1721 թ.) ձեռագրի քովանդակությունը համընկնում է 1850 թվականի ձեռագրի քովանդակությանը: Այդ՝ քանի որ 1850 թվականի ձեռագիրը պահվում է Մ. Մաշտոցի անվան Մատենադարանում, մինչ փորձեցինք համեմատել 1725 թվականի տպագիր օրինակի հետ: Համեմատությունը ցույց տվեց, որ այդ ձեռագիրը քառացիորեն նույնն է, ինչ որ տպագիրն է: Ուրեմն՝ 1725 թվականի գիրքը տպագրվել է 1850 թվականի ձեռագրի հիման վրա, իսկ դա էլ արտագրվել է իրենց առաջ գոյություն ունեցող մեկ այլ ձեռագրից: Տպագիր գրքում կատարվել են սրբագրական ու խմբագրական շատ աննշան փոփոխություններ: Այսպես՝ գրչագիր օրինակում (էջ 88ա) «Էն ապա զխնդիրս ըստ հոլովմանց տալ» նախադասությունը տպագիր գրքում խմբագրվել է. «Էն ապա զխնդիրս հոլովմանց տալ» (էջ 154—155), այսինքն՝ հանվել է ըստ նախորդի:

Որոշ չափով տարբերություն կա «Ճաղագա համաձայնությանն անուան ընդ դերանուանս» ենթագլուխների միջև: Նշված հարցը մի փոքր ավելի մանրամասն է շարադրված գրչագրում (էջ 88բ), իսկ տպագիր գրքում այն տրված է աննշան կրճատումներով (էջ 157): Սա միանգամայն քննական ենթադրություն է: Որ 1725 թվականին Պոլսում տպագրված գիրքը քառացիորեն նման է 1850 թվականի գրչագրին, ապացուցվում է նաև հետևյալով: Գրչագրի 87բ էջի լուսանցքում գրիչը ավելացրել է արտագրության ընթացքում սխալմամբ բաց թողած անուան քառորդ, որը նշված է քաջ թողման նշանով, և վերջապես նշանակալից համաձայնից քառերը, որոնք տպագիր գրքում գրավել են իրենց տեղերը:

Գրչագրի օրինակում (էջ 88ա) «Ջի ո՛ր հետ և մախամն է՝ անդ է անկարգություն» նախադասության ուր քառի վրա, միանգամայն անտեղի, արտագրող գրիչը հարցական նշան է դրել, իսկ տպագիր գրքում հրատարակիչը իրավացիորեն հանել է այդ նշանը:

¹ Հ. Տաշյան, նշված աշխատությունը, Վիեննա, 1886, էջ 809:

Ահա այն ամենը փոփոխությունները, որոնք կան գրչագիր և տպագիր օրինակներում: Այսպիսով, վերագրելով առ վերագիր համեմատելով գրչագիր և տպագիր օրինակները, մենք համոզվեցինք, որ դրանք քառացիորեն նույնն են: Արանից հետևում է, որ Ջուդայեցու գրքի տպագրությունից (1725 թ.) դեռ շատ ու շատ առաջ գոյություն են ունեցել նրա երկրապարհային ձեռագիր օրինակները, որոնք հայկական դարձվել են իրեն ձեռնարկներ:

Խոսելով Ջուդայեցու մասին՝ ժամանակի պատմիչ Առ. Դավրիժեցին գրում է. «Էն յաղագս անկիրք և անհմուտ մանկանց և քառմիտ արանց, արար ճոր քերականությանն դիրաւ հասկանալի, իբրև զհնարձութիւն հոյ քերականութեանց որ ի թարգմանչացն թարգմանեալ է. զի տվաւ դիրաւ հասցին հոյն զիտութեան, որոյ օրինակն բազմացաւ, քանզի քառուք զաղափարեցին»²:

Դավրիժեցին, իհարկե, չէր կարող Ջուդայեցու գիրքը համեմատել քերականի՝ մեկնիչների թողած երկասիրությունների հետ և ընթերցել այն նորը, որ կա Ջուդայեցու գրքում: Որ իրոք Ջուդայեցին օգտագործել է հին քերականների մի շարք դրույթները, անհերքելի փաստ է: Սակայն մա վերահայել է նախորդների շատ դրույթներ, շատ քան փոփոխել ու նոր ձևով է շարադրել, ապա արել է նաև նոր գյուտեր, որոնք չկային իր նախորդների մոտ: Ինքնին հասկանալի է, որ Ջուդայեցին այդ ամենը արել է եղևնով մեր լեզվի զարգացման տվյալ աստիճանից ու նրա ներքին օրինաչափություններից, ինչպես նաև օգտվել է նախորդ քերականների դրական ժառանգությունից:

Մեկ ուրիշ փաստ: Մի ձեռագիր հիշատակարանում պատվիրատու Մովսեսը, որը աշակերտել է Միմեոն Ջուդայեցուն, գրում է, որ Ջուդայեցին 1641 թվականին շարադրել է քրդերովից մի նոր քերականություն, որ մինչ այդ չի եղել մեր ազգային մատենագրության մեջ³:

Բացի այս, Դավրիժեցու վկայությունից երևում է, որ Ջուդայեցին հրավիրվել է Էջմիածին՝ դասավանդելու տեղի վանական դպրոցում: Պատմագիրը նշում է, որ ուսուցումն սկսվել է քերականության դասընթացի ավանդույտով: «Նախ սկիզբն արարին ի քերականութենէն»—գրում է Դավրիժեցին⁴:

Բնական է, որ քերականության արվեստի մեջ արդեն հստակաբար Ջուդայեցին դասավանդման ընթացքում պետք է օգտագործեր իր հորինած ձեռագիր նոր

² Առ. Դավրիժեցի, Պատմություն Առաքել վարդապետի Դավրիժեցու, Վաղարշապատ, 1886, էջ 405:

³ ա) Ա. Տեր-Ավետիսյան, Յուդեական հայերեն ձեռագրաց Նոր Ջուդայի, Մատենադարան, գործ № 188, էջ 1902 և 1408:

բ) Պատմա-քառասիրական հանգես. 1886, № 2, տեխ Հ. Միրզայանի հոդվածը, էջ 188—182:

⁴ Ա. Դավրիժեցի, նույն տեղում, էջ 406:

քերականությունը: Ասածներից պարզ հետևում է, որ Ջուղայեցու ձևագիր կրկասիրությունը ինչպես իր (1725 թ.), այնպես էլ Կ. Գալանուսի տպագիր գրքից (1845 թ.) դեռ շատ առաջ գոյություն է ունեցել և սգտազորվել է հայկական դպրոցներում որպես հեղինակ: Ի դեպ, Ջուղայեցու գիրքը տպագրվել է Ռեդիկանի մահից (1837 թ.) հետո, ուստի նա այդ տպագիր գիրքը չի տեսել:

Սրանից կարելի է ամեն մի հետևություն, այն է, որ Ջուղայեցու գրչագիր քերականությունը հայ իրականության մեջ որպես մեր տիպի քերականություն ամենավաղ գրված գիրքն է, որից հետագայում հետևել են Գալանուսը, Հով. Հովով Կոստանդնուպոլսիցի, Ոսկան Կրեանցի և ուրիշներ, ե ոչ թե ընդհանրապես, ինչպես մինչև այժմ սխալմամբ ընդունվել է մեր բանասիրության մեջ: Հանի որ շատ ուսումնասիրողներ, հենվելով միայն՝ 1725 թվականին տպագրված գրքի վրա, Ջուղայեցուն սխալմամբ դասել են Գալանուսից, Կոստանդնուպոլսեցուց և ուրիշներից հետո և կարծել են, որ նա տեսական հարցերում հիմնականում մնացել է իրենց նախորդող քերականների դիրքերի վրա, ապա անհրաժեշտ ենք համարում ասելու քոլորովին հակասակը, այն է՝ Գալանուսը, Կոստանդնուպոլսեցին և ուրիշները տեսական բազմաթիվ հարցերում հետևել են Ջուղայեցուն և կրկին նրա նորությունները:

Հայտնի է, որ Գալանուսի հայերեն-լատիններեն լեզուներից գրված քերականությունը՝ 1642 թվականին հեղինակի կողմից ներկայացվել է Կոստանդնուպոլսի հայ հոգևոր առաջնորդների՝ տպագրության թույլտվություն ստանալու համար: Երեք հայ հոգևորականների գրավոր թույլտվությունը ստանալուց հետո միայն հեղինակը ձեռագիրը տանում է Հռոմ և հանձնում տպագրության. գիրքը լույս է տեսնում 1645 թվականին:

Հաշվի առնելով ժամանակաշրջանի հաղորդակցության պայմաններն ու զարգացման աստիճանը, կարելի է ենթադրել, որ Գալանուսի գիրքը 1648—1647 թվականներին հագել հազ Հայաստան քերվել: Սակայն հարց է, թե Գալանուսի գիրքը Հայաստան քերվելուց հետո էլ Ջուղայեցու ձեռքը և՛րք է ընկել, կամ արդյո՞ք Ջուղայեցին տեսել է այդ գիրքը: Այս հարցերը դեռևս չեն լուսաբանված մեր մատենագրության մեջ, հատկապես քերականությունների հիշատակարաններում որևէ ակնարկ չկա այդ մասին:

Մինչև Ս. Ջուղայեցու քերականության հրապարակվելուց հետո քերականի հայ մեկնիչները, սկսած 5-րդ դարից մինչև 16-րդ դարը, ավանդաբար ճանաչել են հայտնի՝ ուղղական, սեռական, տրական, առաջական, հայցական, հոշական (կոչական), միջնորդ մեր քերականագիտության պատմության մեջ առաջին անգամ Ս. Ջուղայեցին է, որ թի-ի փոխարեն ընդունում

է 10 հոլով. նա եղածի վրա ավելացնում է սկզբնականը (բացառական), պատմականը, ներգոյականը և արտագոյականը, ապա առաջական անվանումի փոխարեն գործածում է գործիական, որը ճիշտ էր և մեկընդմիջտ մտնում է մեր քերականության պատմության մեջ ու իր գոյությունը շարունակում է մինչև մեր օրերը:

Գալանուսն իր վերոհիշյալ քերականության մեջ, հետևելով Ջուղայեցուն, նույնպես ընդունում է 10 հոլով՝ անվանական, սեռական, տրական, կողական, կոչական, առողական, գործիական, սլառական, կացողական և պարառական:

Հենկան է, որ Գալանուսը հայ մեկնիչներից չէր կարող օգտվել, քանի որ նրանք միայն վեց հոլով են ճանաչել: Իր մայրենի լեզվի քերականությունից ու հունարենից էլ չէր կարող օգտվել, որովհետև այդ լեզուներում հոլովների թիվն ավելի պակաս է, քան հայերենում:

Գալով առանձին հոլովների անվանումների տարբերությամբ, պետք է ասել, որ Գալանուսը որոշ չափով ինքնատիպ երևալու համար է արել այդ բանը: Օրինակ՝ ուղղականի փոխարեն նա փորձել է գործածել անվանական, սակայն իր աշխատության մեջ մի քանի անգամ, հակառակ իր կամքի, հետևել է հայ քերականին և նույն հոլովը անվանել է ուղղական (տես նշված աշխատությունը, էջ 28, 112, 118):

Ինչպես ասացինք, քերականի մեկնիչների մոտ, մինչև Ջուղայեցին, գործիականի փոխարեն գործ էր ածվում առաջական բառը: Արդ՝ կասկածից վեր է, որ Գալանուսը գործիական անվանումը վերցրել է Ջուղայեցուց և ոչ թե ուրիշներից: Ջուղայեցու մոտ գործածված ներգոյական անվանումը, որ ավելի ճիշտ է, Գալանուսի մոտ դարձել է կացողական, իսկ արտագոյականի փոխարեն Գալանուսը գործածել է պարառական, որն ընդունել ու գործածել են հետագայի հայ քերականները:

Այսպիսով, ըստ էության Գալանուսը տասը հոլով ճանաչելու հարցում ամբողջովին հետևել է Ջուղայեցուն:

Գալանուսի գրքի ձևաբանության վերաբերող մասում շատ սահմանումներ ու ձևակերպումներ (անուն, ածական, բայ, ընդունելություն, գոյական, անվան և ածականի, անվան և բայի համաձայնություն և այլն) նման են Ջուղայեցու գրչագիր քերականության մեջ եղած սահմանումներին: Հոդվածը չճանրաբեռնելու համար օրինակներ չենք բերում. ցանկացողները կարող են համեմատել Գալանուսի գրքի 29, 101, 112, 119, 114 և 115 էջերը Ջուղայեցու գրքի 29, 111, 155, 180, 181, 184 և 185 էջերի հետ:

Որ իրոք Կղեմես Գալանուսը իր աշխատությունը գրելիս օգտվել է հայերեն քերականություններից, կա նաև այլ վկայություն: Հովհաննես Նոյսացի արքեպիսկոպոսը գրախոսության համար ներկայացված Գալանուսի գրքի վրա գրել է. «Ներում կատարելապես պարունակին արհեստք չորք. այսինքն՝ ուղղագրություն, ճանաստեղծություն, արտաբերություն և շա-

* Գալանուս, Ջերական և տրամաբանական ներածությունն առ լիմաստասիրությունն շահելով, Հռոմ, 1845:

րադիոլսին, արտահանագ ի քերականությանց հայոց, լուծաց և լաթինացոց. ի խնդրոյ Յովհաննէս յնշէաացոյ, քաջ րաբունապետի և աստուածաբան արքեպիսկոպոսի միջագետաց աշխարհի»։

Մեջ քերած հատվածից պարզ երևում է, որ հայ հոգևորականները խնդրել են Գալաճոսին, որպեսզի նա հայերենի համար քերականության մի ձեռնարկ գրի հայերեն լեզվով։ Հավանաբար խնդրողը և մյուսները վաղորդ խորհրդակցել են հեղինակի հետ, նշել օգտագործվելիք աղբյուրները և տվել խորհուրդներ՝ հայերեն քերականություններից օգտվելու մասին։ Եվ սա քննական է ու այլ կերպ էլ լինել չէր կարող։ Օտար քաղաքացիներ հայերի համար քերականության ձեռնարկ գրելիս առաջին հերթին պետք է հետևեր հայերեն լեզվով եղած քերականություններին, հենվել նրա լեզվական օրենքների և օրինաչափությունների վրա, օգտվել նրա քերականական անվանումներից, այլապես հայերեն քերականությունը չէր ստացվի։ Հենց այս պարզ պատճառով էլ Հովհաննէս արքեպիսկոպոսը Գալաճոսի օգտագործած աղբյուրներից առաջինը շեշտել է թի քերականությանց հայոց»-ը։

Որ Գալաճոսը իր քերականությունը գրելիս օգտվել է նաև հույն ու լատին լեզուների քերականություններից, նշեմք մի փաստ։ Խոսելով Գալաճոսի քերականության մասին՝ քանասիրական գիտությունների դոկտոր Աշ. Արքրահայանը գտնում է, որ այն «կառուցված է լատիներենի քերականության սկզբունքներով. հենց այդ իսկ պատճառով էլ այստեղ գրաբարի դերբայների բուն էությունը չի բացահայտված և դերբայները ենթակառուցված են լատիներենի նմանողությամբ»⁶։

Հայտնի է, որ Գալաճոսը որպես կրոնական քարոզիչ եղել է Անդրկովկասում ու Հայաստանում։ Խիստ հավանական է, որ հայերեն լեզվով քերականություն գրելու հրավեր ստանալով նա Հայաստանում եղած ժամանակ պետք է որոներ գրչագիր քերականություններ (այդ ժամանակ տպագիր քերականություններ չկային) և ծանոթանար դրանց կառուցվածքին ու բովանդակությանը։ Եվ քանի որ, Առ. Դավրիժեցու տվյալների համաձայն, այդ ժամանակ Սիմ. Ջուղայեցու ձեռագիր գիրքն էր գտնվում հրապարակի վրա և օգտագործվում էր հայկական դպրոցներում, ապա շատ հավանական է, որ Գալաճոսը իր գործակից հայ հոգևորականների միջոցով ձեռք է բերել այդ ձեռագիրը և ծանոթացել նրա կառուցվածքին ու բովանդակությանը, այլապես այդքան հարազատ նմանություններ չէին լինի երկու հեղինակների գրքերում։ Ի դեպ, ասեմք, որ Գալաճոսը մասնագիտությամբ բժիշկ էր, ուստի քերականական գիտությանը ծանոթանում է Անդրկովկասում կրոնական քարոզչությամբ զբաղվելու ժամանակ։

հացի այս, որոշ աղբյուրներից հայտնի է դառնում, որ Գալաճոսը Կոստանդնուպոլսում անձամբ հանդիպել է Սիմեոն Ջուղայեցու հետ և վեճի բովանդակական առանձին հարցերի շուրջ։

Ինչպես երևում է Գալաճոսի լիերոմիշյալ գրքի վերնագրից, նա ծանոթ է եղել հայ լուսավարչի մտավորական գործիչների մտքերին. այդ գործիչներին նա հորջորջում է «Հռչակագրոյն հայրապետնոր և վարդապետնոր», որոնց բաժանում է երկու բանակի՝ համախոհների և հակառակորդների։ «Չարափառք, զորս յանդիմանեմք, ողղափառք, զորս զովաբանեմք»,—գրում է Գալաճոսը (նույն տեղում, էջ 747)։

«Սիմեոն Ջուղայեցի,—գրում է Գալաճոսը։—Ընդ սմա մեջ տրամաբանեցաք յաղագս սուրբ հուսատոց ի Կոստանդնուպոլսիս և գտաք զնա լի մոլորական կարծիք. և քանզի ունէր համբաւ ամենիմաստ վարդապետի առ ժողովուրդոց, քաղում աշակերտս մոլորեցուցանէր»⁷։

Այս նույն միտքը Գալաճոսը կրկնում է իր մի այլ հրատարակության մեջ։ «Եւ մեջ ոչ գտաք,—գրում է նա,—զայլ ոչ ի նույն ազգէն ուսուցանել այժմիկ զայդպիսի մոլորություն, քաց ի միտջէ Սիմեոնէ, զորմէ ի վերոյ ճանեցաք յառաջին վիճարանութեան ի թիւն Ե երորդ»⁸։

Այս մեջբերումներից պարզ երևում է, որ Գալաճոսը Ջուղայեցուն հանդիպել է Ա. Պոլսում և նրա հետ բանավեճի է քննվել։ Պարզվում է նաև այն, որ Ջուղայեցին ժողովրդի մեջ մեծ համբավ ու համարում է ունենել, որ Գալաճոսը Ջուղայեցուց քացի այլ վտանգավոր հակառակորդ չի ճանաչել։ Հակառակորդի այսպիսի անկողմնակա խոստովանությունը, անշուշտ, ընդգծում է Ջուղայեցու ուժն ու մեծությունը։ Ա. Ջուղայեցու գիտական մտքի մեծ ուժի, համբավի մասին դրվատական խոսքեր են ասել նաև ժամանակակից հայ պատմիչները։ Դժպիտաբար Գալաճոսը չի նշում, թե Ջուղայեցու հետ բանավեճիս քերականության հարցերին անդրադարձնել է, թե՛ ոչ։ Շատ հավանական է, որ նրանք բանավեճն են նաև քերականությանը վերաբերող հարցերի շուրջ, սակայն այս մասին Գալաճոսը լռում է։

Ի դեպ, ասեմք, որ Գալաճոսի մի ակնարկից երևում է, որ Սիմեոն Ջուղայեցին ավելի առաջադեմ, գիտական և քարձր աստիճանի վրա կանգնած փիլիսոփա է եղել և, հավանաբար, հակառակորդին քավական մեղք է գցել։

Քանի որ մեր մյուսը շարահյուսությունն է, ապա Ջուղայեցու փիլիսոփայական հայացքների քննության հարցը թողնում ենք այդ առարկայի մասնագետներին։ Սակայն չենք կարող չնշել այն հանգամանքը, որ Ջուղայեցին գիտական տեսակետից Գալաճոսից քարձր կանգնած, համեմատաբար ավելի

⁶ Աշ. Արքրահայան, Հայերենի դերբայները և նրանց ձևաբանական նշանակությունը, Նրևան, 1958, էջ 17։

⁷ Կ. Գալաճոս, Միաբանություն հայոց սուրբ եկեղեցւոյն ընդ մեծի սուրբ եկեղեցւոյն Հռովմայ, Հռոմ, 1858, էջ 747։

⁸ Նույն տեղում։

առաջադեմ հայացքներ ունեցող մտածող է, և անհրաժեշտ է, որ փիլիսոփաները զբաղվեն այլ իրենդիրների լուսաբանությամբ: Ջուղայեցուն սկսած է քարձրացնել և իր արժանի տեղը տալ մեր պատմության մեջ:

Ջուղայեցու քերականությունը տպագրվել է 1725 թվականին, Կոստանդնուպոլսում¹¹: Գրքարարի վաղ շրջանի քերականների նման, Ջուղայեցին ձևաբանական և շարահյուսական համակարգերի որոշակի տարրերակում դեռևս չուցի, չնայած շարահյուսական մի շարք իրողությունների ու կրկնությունների բազմաթիվ առկայությանը նրա գրքում: Նա ևս, ինչպես և վաղ շրջանի ու հետագայի քերականները, շարահյուսական շատ իրողություններ քաջատրում է ձևաբանության հասկացություններից կոնկրետ կամ ձևաբանության վրա խարսխելով: Նա ճանաչում է անուն (ենթակայի իմաստով), բայ (ստորոգյալի իմաստով), խնդիրներ, քացահայտիչ, հատկացուցիչ, բան (նախադասության և խոսքի առումներով), մակբայ (որոշ դեպքերում ձևի պարագայի առումով), հոգ և ընդունելություն անվանումները:

Իրենցից առաջ նշած քերականների ստեղծած մշակույթին հետևելով՝ Ջուղայեցին սկզբում իրսում է քերականության ընդհանուր նշանակության մասին և տալիս է այսպիսի բնորոշում. «Երբականություն է գիտություն տառից և ասությանց և կիրառությանց սոցին, այսինքն շարագրությանց քերթողացն»¹²: Հերթականությամբ քննության է առնում ձևաբանությունը, ապա անցնում է շարահյուսությանը, որն իր ձևավորված առանձնապես մեծ տեղ չի բռնում վերոհիշյալ գրքում: Ինչպես նախորդների, այնպես էլ Ջուղայեցու մոտ «բան» և «նախադասություն» հասկացություններն այս աշխատության մեջ դեռևս որոշակի չեն տարբերակված: Անդրադառնալով նախադասությանը՝ նա գրում է. «Բան է շարամանությունը քստից յայտնող տրամախոսության»:

«Գիրք տրամաբանության» (Կ. Պոլիս, 1784 թ.) աշխատության մեջ «Յադագս շարամանության» գլխում Ջուղայեցին այլ կերպ է բնորոշում նախադասությունը: Քերականը գտնում է, որ մարդ նախ իր մեջ մտածում է, դատողություն է անում, ապա այդ մտածածը, դատողությունը, որ մարդու ներաշխարհում է կատարվում, արտահայտում է քառերի շարահյուսությամբ (շարամանությամբ քառից), այսինքն՝ ձայնով հաղորդում է ուրիշներին: «Շարամանություն է քառիստությունը պարզ ձայնից առ ի յարտաբերել զհրաբարմարդիցեպն», գրում է քերականը: «Քանզի քանին կրկին է տեսակ՝ ներարամադրեայն արտաբերեալ»¹³:

Ահա նրա մեկնաբանությունը այդ երկու տեսակի մասին. «Ջի որ ի ներքս է՝ յիմացման միայն գոյով՝ ասի ներտրամադրեալ, և որ շարամանութեամբ քառից յարագայի՝ ասի արտաբերեալ: Այլ քանզի արտաբերութիւն ձայնի լինի»¹⁴:

Դանի որ հեղինակը ձևաբանության բաժնում ըմդունում է հիմնականում չորս ենթաբաժին՝ տառ, վանկ, բառ, բան, ուստի և կիրառությունն էլ ըստ այս բաժինների նույնպես չորս ենթամասի է բաժանում: Անգ այստեղ հետաքրքրում է քառերի կապակցության հարցը: Խոսելով քառերի կիրառության մասին՝ քերականը քննում է կապակցման օրինակներ և ցույց է տալիս, թե շարահյուսորեն որ կիրառությունն է ճիշտ, որը՝ սխալ: Այսպես՝ Ոչ վնասեաց ինքեան քառակապակցությունը ճիշտ է. վնասեաց քառը կիրառվել է ինքեան դերանվան հետ, և միտքը ճիշտ է ստացվել: Մինչդեռ՝ ոչ վնասեաց իր քառակապակցության մեջ ինքեան դերանվան փոխարեն գործածվել է իր դերանունը, որը սխալ է և միտքը ճիշտ չի արտահայտում: Այսպիսով, քառերի ճիշտ կիրառությունները և քառակապակցություններ կազմելը նախադասության իմաստ են ստանում, միտք են արտահայտում և դառնում են հաղորդակցման միջոց:

Շարահյուսության ուսմունքը վերնագրված է «Յադագս շարահրություն»: Ջուղայեցին գտնում է, որ քառերն ըստ շարահրության կիրառելու համար նախ և առաջ անհրաժեշտ է դրանց համաձայնությունը, ապա՝ հոլովադրությունը (ժամանակակից տերմինով՝ խնդրադրությունը): «Ի կիր առնուլ զբառս ըստ շարահրության, — գրում է քերականը, — պարտ է նախ համաձայնել զնոսա. որզոն, Յիսուս կոչեաց: Ապա նա բերում է անհամաձայնության օրինակ («Յիսուս կոչեցին») և ցույց է տալիս, որ ենթակայի ու ստորոգյալի միջև համաձայնություն չկա, ուստի այդպես չի կարելի ասել կամ գրել: Ջուղայեցին նշում է, որ ենթակայի ու ստորոգյալի համաձայնությունից հետո պետք է անդրադառնալ խնդրադրությանը, այսինքն՝ տալ «զխնդիրս հոլովմանց», այլ կերպ ասած՝ ուսուցանել, թե խնդրադրության ինչ հոլովով խնդիր պետք է առնի: Սրա համար բերում է «Յիսուս կոչեց զաշակերտսն» օրինակը և ավելացնում, որ «նախ է համաձայնություն և ապա հոլովադրություն»: Ըիշտ նույն սկզբունքը, ինչ որ արդի քերականություններում է ձևակերպված. տարբերությունը միայն անվանումների մեջ է: Այսօր ասում ենք «համահայնություն» և «հոլովադրություն» կամ խնդրադրություն, իսկ Ջուղայեցին ասել է «համաձայնություն» և «հոլովադրություն», առանց «խնդրադրություն» անվանման:

Ինչպես նկատում ենք, այս քերականն էլ պարզ ու որոշակի ակնարկում է այն մասին, որ նախադասություն կազմելու համար անհրաժեշտ է, որ նախադասություն կազմող քառերը նախ համաձայնեն, այսինքն՝ եզակի ենթակայի հետ դրվի եզակի ստորոգյալ, և հոգնակի ենթակայի հետ՝ հոգնակի ստորոգյալ:

¹¹ Ս. Ջուղայեցի, Գիրք, որ կոչի քերականություն, Կ. Պոլիս, 1725:

¹² Սիմեոն Ջուղայեցի, Քերականություն, էջ 15—16:

¹³ Ս. Ջուղայեցի, տրամաբանություն, էջ 81:

¹⁴ Ս. Ջուղայեցի, նույն տեղում:

յալ, և ոչ թե ընդհանրապես: Սրանից հետո դրվեց երկրորդական անդամները՝ խնդիրները, որպեսզի նախադասությունը դառնա անթերի, լիարժեք: Եւրահայտությունը վերաբերող «Թաղազս կիրառություն» ենթագլուխը քերականը բաժանում է երկու ենթամասի՝ ստուգաբանության և շարադրության: «Կիրառություն» բառի կրկին է,—գրում է նա,—ստուգաբանություն և շարադրություն. զի ի կիր առնուլ ըզբառս նախ պարտ է ստուգաբանել և ապա շարադրել:

Ջուղայեցի ճանաչել է համաձայնության չորս տեսակ. պսպես՝ անունը համաձայնում է մակադրական անվան, այսինքն՝ անականի, դերանվան, հոգի և քայի հետ¹⁴:

Հեղինակը չնայած այստեղ չի ցեյք հարցման և պատասխանի համաձայնության մասին, սակայն ընդհանուր շարադրանքում անդրադարձել է դրան: Այսպիսով, փաստորեն նա ճանաչել է համաձայնության հինգ տեսակ:

Ջուղայեցի ատաքին հաջ քերականն է, որ նկատել է հարցական նախադասությունների կրած փոփոխությունները և փորձել է բացահայտել դրանց արտահայտչական նորոգումները: Ըստ Ջուղայեցու կան հարցական նախադասություններ, որոնց նպատակն է խոսողի համար պարզել անհայտն ու չիմացածը, բայց կան նաև այնպիսի հարցական նախադասություններ էլ, որոնց մեջ առարկայի կամ երևույթի վերաբերյալ որոշ բան հայտնի է, սակայն պետք է պարզել անհայտ մասը կամ, նրան ընդհանուրը հայտնի է, պետք է պարզել մասնակին և ընդհանրապես:

Ահա այս միտքը պարզելու համար քերականը տալիս է մի հետաքրքրական բացատրություն և բերում է դրան համապատասխան օրինակ: Այդ հատվածն ամբողջությամբ մեջ ենք բերում և կարծում ենք, որ մեկնաբանություններն այլևս ավելորդ են:

«Քանզի ի հարցանել» զի՞նչ է, կամ ո՞րպիսի ինչ է, յայտ առնէ, թէ գիտեմ զգոյն, բայց ոչ գիտեմ թէ ի՞նչ է կամ որպիսի ինչ է: Եւ գաճազանից այստեղի միմեաց. քանզի՞ զինչէն հարցանէ զոչ գիտեցեալն, իսկ որպիսի ինչէն՝ հարցանէ զգաճազանութիւնս գիտեցեալ իրին: Զոր օրինակ՝ թէ հարցանէ ոք, զի՞նչ է ի մաղախիդ, պատասխանի՞ միրզ, կամ խնձոր. որոց զոյ գաճազանութիւն, բայց չն ևս է յայտ: Իսկ ի հարցանելն թէ ո՞րպիսի ինչ միրզ ինչ, պատասխանի՞ այսպիսի ինչ միրզ, այսինքն՝ նույն, կամ այլ ինչ միրզ¹⁵:

Ջուղայեցի ճանաչում է հոլովառության երեք դեպք՝ անվան, քայի և նախադրության: Այս առթիվ նա բերում է քառեր և ցույց է տալիս, որ դրանք իրար հետ պետք է կապակցվեն կա՛մ շաղկապներով, կա՛մ հոլովների կիրառմամբ. այսպես՝ ծնունդը քուրթեան, կա՛մ քուրթեամբ ծնունդ:

Երբ կապակցվող քառերից մեկը լինում է մյուսի «չալոցիչը», ըստ քերականի այդ դեպքում դրանք, այսինքն՝ կապակցվող քառերը շարադրվում են (այն է՝ կապակցվում են) առանց շաղկապի կամ որևէ հոլովի. օրինակ՝ Յիսուս Քրիստոս, Սիմէոն Պիլատոս, սրբույ Յակոբայ, մարեմա մարք իւրով և այլն:

Ինչպես նկատում ենք, սա արդեն արդի ըմբռնմամբ բացահայտչի նախադասությամբ է: Հետաքրքրական է հատկացուցչի գաղափարը: Ջուղայեցին, իհարկե, «հատկացուցիչ» անվանումը չի գործածել, սակայն նրա բացատրությունից հասկանալի է դառնում, որ քերականական այդ իրողության հատկացությունը առկա է. «ենթակայական ուղղականը,—գրում է քերականը,—լուստ զսեռականն առնու»¹⁷ և բերում է այսպիսի օրինակներ. հոգի մարդոյ, երկիդ տեառն, սկիզբն իմաստութեան: Հեղինակի անվանումով ենթակայական ուղղականը (հատկացյալը) անփոփոխ ձևով միշտ սեռական հոլովով լրացում է պահանջում: Սա էլ հատկացուցչի նախադասությամբ է: Հեղինակը միանգամայն ճիշտ է նկատել, որ հատկացուցիչը պարտադիր կարգով և մշտապես դրվում է սեռական հոլովով, և չի համաձայնում իր հատկացյալի հետ:

Ջուղայեցու մոտ կա խնդրի և պարագաների ընդհանուր, սակայն դեռևս աղտոտ ու չտարրորոշված հասկացությունը: Սակայն ուղիղ խնդրի մասին նա ունի որոշակի և պարզ պատկերացում: Սուսելով անվան և քայի համաձայնության մասին՝ նա գրում է. «Յիսուս կոչեաց. ալ ոչ եթէ կոչեցին և ապա զխնդիրս հոլովմանց տալ. որար. Յիսուս կոչեաց զաշակերտսն»¹⁸:

Ինչպես նկատում ենք, քերականը որոշակի գաղափար ունի ուղիղ խնդրի մասին: Ուրեմն համաձայնում ենք անույն ու քայլը, որպես նախադասության երկու գլխավոր անդամներ, ապա քայլը համապատասխան հոլովով խնդիր է առնում, տվյալ դեպքում, զաշակերտսն, կամ՝ «Հայր սիրե գորդի» նախադասությամբ մեջ գորդի քառը¹⁹, նույնը չի կարելի ասել անուղղակի խնդրի մասին: Եւրահայտական այս իրողությունը քերականի մոտ աղտոտ է և դեռ անվանումը չունի, այլ կոչվում է ըստ հոլովների կիրառության: Այս գաղափարը նա բացատրում է «Թաղազս առման տրականին», «Թաղազս առման գործիականին», «Թաղազս առման հայցականին» և այլն վերնագրերի տակ: Նշված վերնագրերի տակ եղած բացատրություններից կտահում ենք, որ հեղինակը, չնայած որ շարահյուսական անվանումներ (տերմիններ) չի տեղեցրել, բայց անուղղակի խնդրի ընդհանուր գաղափարը գիտակցել է: Այսպես՝ «Թաղազս առման գործիականին» վերնագրից հետո բերում է «Որդեգրություն» որդի» օրինակը և ավելացնում է, որ «ոմանք գործածում են տրականան հանդերձ, ըստ նախա-

¹⁴ Ջուղայեցի, քերականություն, էջ 155:

¹⁵ Ջուղայեցի, Գիրք տրամաբանության, Կոստանդնուպոլիս, 1794, էջ 2:

¹⁶ Ջուղայեցի, նույն տեղում, էջ 177:

¹⁷ Ջուղայեցի, նույն տեղում, էջ 155:

¹⁸ Ջուղայեցի, նույն տեղում, էջ 177:

դրութեամբն. օրինակ՝ որդի ըստ որդեգրութեան»²⁰:

Ձևի պարագա հասկացությունը Ջուդայեցիները տվել է ձևաբանության բաժնում՝ մակերային մասին խոսելիս: Քերականը կարծում է, թե մակերային «առաջդրում է» քայի, ընդունելության և մակադրական անվանը (ածականի) և դրանց «որակություն» է ցույց տալիս, այսինքն՝ ցույց է տալիս գործողության ձևը, որպիսությունը. օրինակ՝ վաղվաղ ընթանան. վաղվաղ-ը այստեղ դրված է քայի վրա և ցույց է տալիս գործողության կատարման ձևը: Թոյժ ուսեալ. յոյժ-ը դրված է դերբայի վրա (ընդունելության) և ցույց է տալիս կրթվելու, սովորելու ձևը: Կարի գեղեցիկ, կարի-ն դրված է ածականի վրա և ցույց է տալիս գեղեցկության որակի ստորությունը, չափը²¹: Հնդկականը նշում է մակերայինների բազմաթիվ տարատեսակներ, սակայն քիչ օրինակներ է բերում: Ձևային Ջուդայեցիներ շատ թուղիկ է անդրադառնում շարահյուսության հարցին, քայց այնուամենայնիվ նրա մտահղացումը քայականին հետաքրքրական է: Քերականը, «Յադագս դա-նագան շարահյուսության միտք դիտարկության» վեր-նագրի տակ տալիս է միևնույն նախադասության տարբեր արտահայտությունները՝ առանձին բառերի և կամ կապերի գործածությամբ: Այսպես՝

- ա) Քրիստոս եկն յաշխարհ փրկել զմեզաւորս:
- բ) Քրիստոս եկն յաշխարհ առ փրկել զմեզաւորս:
- գ) Քրիստոս եկն յաշխարհ ի փրկել զմեզաւորս:
- դ) Քրիստոս եկն յաշխարհ վասն փրկելու զմեզաւորս:
- ե) Քրիստոս եկն յաշխարհ առ ի փրկելու զմեզաւորս:
- զ) Քրիստոս եկն յաշխարհ վասն փրկութեան մեզաւորս:
- է) Քրիստոս եկն յաշխարհ զի փրկեսցէ զմեզաւորս:
- ը) Քրիստոս եկն յաշխարհ որպեսզի փրկեսցէ զմեզաւորս:

Աս ցույց է տալիս մեր լեզվի զարգացումն ու ճկունությունը, ինչպես նաև անհատ ստեղծագործողների դերը լեզվի շարահյուսության հղկման ու մշակման գործում: Այնուհետև՝ քերականը «բան»-ը (այսինքն՝ նախադասությունը—2. Մ.) բաժանում է եւս երկու ենթատեսակի՝ «ի կատարեալ» և «յանկատար»:
«Կատարեալ բան» ասելով նա հասկանում է լրիվ, ամբողջական միտք արտահայտող նախադասությունները, այն է՝ սահմանափակ (պատմողական), հրամայական և ընթական բնույթի նախադասությունները²², սահմանականի մեջ հասկանալով պարզ, անթերի և քարդ համադասական նախադասությունները: Անկատար բան ասելով նա հասկանում է ստորադասական նախադասությունները, այն է՝ թեականը, մակերայականը, աներևութականը, ընդունելականը,

կոչականը ու հարցականը, այսինքն՝ այնպիսի նախադասությունները, որոնք կամ երկրորդական են, կամ թերի, ունեն գեղեցկած անդամներ և ամբողջական ու ավարտուն միտք չեն արտահայտում:

Այնուամենայնիվ ամենաուշագրավն այն է, որ Ջուդայեցիներ հայ շարահյուսագիտության պատմության մեջ առաջին քերականն է, որ մկատել է կոչական—նախադասության իրողության փաստը:

«Կատարյալ» և «անկատար» նախադասության հասկացությունը հեղինակն ավելի որոշակի է արտահայտել «Յադագս կիտի» ենթագլխում: Խոսելով ստորականի գործածության մասին՝ քերականը գրում է. «Ստորատն»²³ է, որ գլխի անկատար բանիդ դնի, առ ի նշանակելու զանկատարություն տրամախոսության. որկն. եթե սիրէք զիս, զպատուիրանս իմ պահեսքիք»²⁴: Օրինակից և բացատրությունից պարզ հասկացվում է, որ հեղինակը շարահյուսական առումով անկատար բան ասելով հասկացել է երկրորդական նախադասությունները, որոնք գլխավորից տրոհվել են ստորականով: Եթե ասածն ապացուցելու համար նույն հեղինակից մեկ այլ փաստ բերենք:

«Իսկ միջակետն ի մեջ կատարեալ բանից լինի,— գրում է քերականը,— որպակ. Ստեփանոս այր լի շնորհօք և իմաստութեամբ առնէր նշանս. և արուեստըս մեծամեծս ի ժողովրդեանն»²⁵: Այս ամենից հետո պարզ է, որ Ջուդայեցիներ կատարյալ նախադասություն է համարել այնպիսիները, որոնք լրիվ, ավարտուն միտք են արտահայտել, իսկ անկատարները՝ թերի, ոչ ավարտուն միտք:

Խղճի մտքը պետք է ասել, որ շարահյուսության վերաբերող այս մասը այնքան էլ հարուստ չէ ու մեծ մասամբ նախորդների ասածների կրկնությունն է: Սակայն Ջուդայեցիներ իր մեկ ուրիշ աշխատության մեջ, որ կոչվում է «Կիրք տրամաբանութեան», յուրք քայլ է արել շարահյուսական իրողությունների մեկնաբանության և շարահյուսական հստակ ու տարրորշված անվանումներ ստեղծելու ուղղությամբ: Ըիշտ է, այս աշխատությունը վերաբերում է տրամաբանությանը և գրված է Պորփյուրի ու Արիստոտելի տրամաբանական երկասիրությունների հիման վրա, սակայն շատ արժեքավոր ու շահեկան է մեր շարա-

²⁰ Ջուդայեցիներ ստորականի իմաստով գործածել է ստորատն տերմինը. ստորատնը գրաբարի շրջանի քերականները դասել են առողանության խմբի մեջ: Առողանության այս նշանը գրեթե խորթ է եղել դասական հայերենի ոգուն, որի հետևանքով ունեցել է աննշան գործածություն և շատ շուտով դուրս է ընկել կամ ձուլվել է ստորականի հետ: Ստորականը բոլոր քերականները դասել են տրոհության նշանների խմբում: Այս կետը սկզբից մինչև մեր օրերը գործածվել ու գործածվում է որպես կետադրական նշան:

²⁴ Ջուդայեցի. նույն տեղում (քերականություն). էջ 220:

²⁵ Նույն տեղում, էջ 220:

²⁰ Ջուդայեցի. նույն տեղում, էջ 185:

²¹ Նույն տեղում, էջ 128:

²² Ջուդայեցի. Գիրք որ կոչի քերականություն, Կ. Պոլիս, 1725. էջ 210:

հյուսագիտության զարգացման և նրա պատմության ուսումնասիրության տեսակետից:

Ջուղայեցուն մենք պետք է պատշաճը մատուցենք հայերենի շարահյուսական համակարգի մշակման գործում կատարած լուրջ ծառայությունների համար:

Վերը նշված աշխատության մեջ քերականը գործածել է շարահյուսական մի շարք անվանումներ, որոնք հետագայում մտել են մեր քերականությունների մեջ: Ամենից առաջ Ջուղայեցին նշված աշխատության մեջ տարբերակում է խոսք և նախադասություն հասկացությունները, նախադասությունը համարում է խոսքի ամենապարզ ու փոքր միավորը, Արիստոտելի և Դավթի ուսմունքին հետևելով՝ նա ենթակա և ստորոգյալ անվանումներն ու հասկացությունները վերականգնում է և դրանք համարում է նախադասության սահմանը, եզրերը. տարբերակում է նախադասության երկու տեսակ՝ պարզ և բաղադրյալ: Հետևելով Արիստոտելին՝ քերականը, թեև առանց անունը տալու, ճանաչում է ըստ բնույթի նախադասության մի քանի տարատեսակ՝ բացերևական (այժմ՝ պատմական), հրամայական, ըղձական, ստորադասական և հարցական:

Նախ ենթակայի և ստորոգյալի մասին:

Նախորդ շարադրանքից մեզ արդեն հայտնի է, որ «ենթական» և «ստորոգյալ» շարահյուսական հասկացությունները գալիս են տրամաբանական և փիլիսոփայական աշխատություններից: Արիստոտելը, ապա նրան հետևելով հայ փիլիսոփա և քերական Դավիթը ենթական ու ստորոգյալը ճանաչել են որպես նախադասության գլխավոր անդամներ: Ջուղայեցին ահա համարձակ քալ է անում, վերականգնում է այդ երկու հասկացությունը, որ որոշ քերականների կողմից անտեսվել էր: Այս գրքում հեղինակը սկզբում խոսում է շարահյուսության մասին. այսպես՝ «Շարամանությունը և զստորոգելին ստորոգել զենթական է», — գրում է նա և քերում այսպիսի օրինակ՝ «Մարդ յաղթե, ձին ընթանայ»: Սրանից հետո նա անդրադարձնում է նախադասության երկու գլխավոր անդամներին: «Բայց է, զի ենթական է անուն, իսկ ստորոգեալը՝ բայ, — գրում է քերականը: Որպակ. մարդն և ձին որք են անուանք, եղեն ենթականք: Իսկ յաղթեն և ընթանայն՝ որք են բայք՝ եղեն ստորոգեալք»:

Այսպիսով, Ջուղայեցին առաջին անգամ տալիս է պարզ նախադասության հստակ և ճիշտ սահմանումը:

Քերականն այն միտքն է զարգացնում, որ հայերենի նախադասության անդամների վիճակը քարացած ու անփոփոխ մի հավերժական կարգ չէ. այսինքն՝ նախադասության անդամները, հատկապես ենթական ու ստորոգյալը կարող են արտահայտվել տարբեր բառերով և փոփոխել իրենց տեղերը: Այսպես՝ ստորոգյալը կարող է արտահայտվել ոչ միայն բայով, այլև անունով, այն է՝ գոյականով և անականով: Բերենք հեղինակի օրինակը. «Եւ է՝ զի ենթական և ստորոգեալն են անուանք որկէն. մարդն քնական է, ձին սմբական է: Ահա մարդն և ձին որք են անուանք՝ են ենթական և ստորոգեալն են

անուանք, որկէն. մարդն բանական է, ձին սմբական է: Ահա մարդն և ձին որք են անուանք՝ են ենթականք. և բանականն և սմբականն ևս են անուանք, բայք են ստորոգեալք»²⁶:

Ասածից պետք է ասել երկու հետևություն.

ա) Նախադասության անդամները պետք է ճանաչել ոչ թե ըստ ձևաբանական հատկանիշների, այլ՝ ըստ շարահյուսական հատկանիշների, ըստ նախադասության մեջ ունեցած նրանց պաշտոնի.

բ) Անունները կարող են բաղադրյալ ստորոգյալ կազմել՝ միանալով էական բայի հետ:

Բացի այս, քերականը ենթական համարում է նյութը, իսկ ստորոգյալը՝ գործողությունը: «Ջանգի, — գրում է նա, — ենթակայ է, գորմէ ասի իր իմն և ստորոգեալ է, որ զայմէ ասի»²⁷:

Քերականը նշում է, որ աներևույթ բայերը նախադասության մեջ նույնպես կարող են հանդես գալ ենթականների դերով, այսինքն՝ ենթական կարող է արտահայտվել նաև աներևույթ բայերով: Այսպես՝ «իսկ եղանական է, յորում բայն լինի ևնթական. որգոն. Մարդոյ գոյն հարկաւոր է. մարդոյ գոյն՝ ոչ է հարկաւոր: Մարդոյ ընթանայն կարելի է, մարդոյ ընթանայն ոչ է կարելի»:

Եւ աստ թեպէտ գոյ ևս՝ գոյ ստորոգեալ, սակայն գոյն և ընթանայն, որք են բայք աներևույթն՝ են ենթականք, իսկ հարկաւորն և՛ կարելին ստորոգեալք»²⁸:

Ասացինք, որ Ջուղայեցին ըստ կազմության ճանաչում է նախադասության երկու տեսակ՝ ստորոգական (պարզ) և ստորադրական (բարդ): Ստորոգական ասելով Ջուղայեցին հասկանում է պարզ համառոտ նախադասությունը: «Ստորոգական է, — գրում է նա, — յորում է մի ենթական և մի ստորոգեալ» և քերում է այսպիսի օրինակ. «Արեգակն ծագեալ է. արեգակն է ենթական և ծագեալն՝ ստորոգեալք»²⁹:

Դավիթ փիլիսոփայից հետո Ջուղայեցին առաջին քերականն է հայ քերականագիտության պատմության մեջ, որ այսքան պարզ, գիտական ու տեղի ձևով բնորոշում է պարզ համառոտ նախադասությունը, և այդ սկզբունքն անցնում է հետագա քերականներին ու մտնում մեր շարահյուսության համակարգի մեջ և անփոփոխ ձևով շարունակվում մինչև մեր օրերը:

Ստորադրական ասելով, քերականը հասկանում է բարդ նախադասությունը, սակայն բարդ ստորադասականը: Նա լավ է ըմբռնել պարզ նախադասությունների կապակցությունը, բարդ նախադասության գոյացումը և նրա բաղադրամասը կազմող պարզ նախադասությունների կապակցական փոխհարաբերությունը: «Ստորադրական է, — գրում է նա, — յորում է երկու ստորոգական նախադասություն», — ասում է նա և քերում այսպիսի օրինակ. «Երբ արեգակն ծագ-

²⁶ Ջուղայեցի, Գիրք տրամաբանության, էջ 88:

²⁷ Նույն տեղում, էջ 88:

²⁸ Նույն տեղում, էջ 71:

²⁹ Նույն տեղում, էջ 88:

եալ է, տիւն է: Եւ այս կոչի ստորադրական ճախարհաստիւթիւն, զի մին ստորագրական ճախարհաստիւթիւն է, միւսը՝ ստորադրեալ, քանզի արեւակն ծագեալ է՝ ստորադրի այնմ, որ ասէ, թէ տիւն է»⁶⁰:

Ինչպէս նկատուած ենք, նա այսօրվա մեր քերականների մասն շատ որոշակի, միանգամայն ճիշտ ու խելոք այնպիսի բնորոշումներ ու սահմանումներ է տվել, որոնք արդիական են մնում:

Նախադասության այսքան որոշակի տարբերակումը քան և խոսք հասկացություններին, զիսկվոր և նրան լրացող, երկրորդական նախադասությունների սահմանումը և դրանց շարափյուսական կապակցությունն ու փոխարարելությունը, պարզ համառոտ երևող նախադասության տեսակների ճանաչումն ու հաստատումը այսքան զիտականորեն և մանկավարժական տեսակետից այսքան պարզ ու հասկանալի սահմանելը առաջինն է մեր շարափյուսական մասնավարում, ուստի և պատիվ է բերում Ջուղայեցուն:

Նախորդ փոխառվածներին ու տրամաբաններին հետևելով՝ Ջուղայեցին ենթական ու ստորոգյալը համարում է նախադասության սահմանները, եզերքը: «Քանզի ենթական և ստորոգյալը,—գրում է քերականը,—ասին սահմանը նախադասութեան, այսինքն՝ եզերք նախադասութեան, քանզի նախադասութիւն յայսոսիկ քաժանցի»⁶¹:

Հետաքրքրական է հեղինակի նաև այն կարծիքը, որ նախադասության սահմանները (այսինքն՝ ենթական ու ստորոգյալը—Հ. Մ.) բոլոր դեպքում նույնը չեն մնում, միևնույն պաշտոնը չեն կատարում, այլ, ընդհանրական, կարող են փոփոխել իրենց դերերը, այն է՝ ենթական կարող է համոզու գալ ստորոգյալի դերով, իսկ ստորոգյալը՝ ենթական: Եվ ըստ այսմ էլ նա նախադասությունը քաժանում է երկու ենթատեսակի՝ որոշակի և անորոշակի: Որոշակի է համարում այն, երբ տվյալ նախադասության մեջ չկան անորոշակի ենթակա ու ստորոգյալ: Անորոշակին այն է, որ կամ ենթական է անորոշ, կամ ստորոգյալը, կամ երկուսը միասին վերցրած: Ուստի հեղինակը երկու նախադասություն է համարում, երբ երկու տարբեր ենթականեր ու ստորոգյալներ են գործածվում, իսկ երբ միևնույն ենթական ու ստորոգյալն են, սակայն շրջուն շարադասությամբ գործածված, ապա դրանով նախադասության էությունը չի փոփոխվում, այլ, ընդհանրական, մնում է նույնը: Ուրեմն, ըստ քերականի, նախադասության էությունը փոխվում է այն ժամանակ, երբ շարադասությամբ այդ անդամները շարափյուսական մոր դեր ու պաշտոն են ստանձնում: Այսպես՝ կենդանի է մարդն և մարդն է կենդանի «առաւ պսոսիկ,—գրում է հեղինակը,—ոչ են երկու նախադասութիւնք, զի իցեն հաղորդք իրեանց, այլ միևնույն է. զի երկուսեանց մարդն է ենթակայ, իսկ կենդանին՝ ստորոգեալ. քանզի ոչինչ զանազանութիւն է ասել՝ Սոկրատես ճեմի և ճեմի Սոկրատես»:

Բերած օրինակներից վերջինը շարափյուսական ըմբռնումներին համընկնում է, որովհետև երկու դեպքում էլ Սոկրատեսը ենթական է, իսկ ճեմի-ն՝ ստորոգյալը: Ինչ վերաբերում է առաջին օրինակին, պետք է ասել, որ նա տրամաբանական առումով միևնույն է, տարբերություն չկա շրջուն ձևի երկու տարբերակների միջև, քանի որ տրամաբանական ենթական ու ստորոգյալը տարբերվում են շարափյուսական ենթակայից ու ստորոգյալից: Այստեղ հետևական արդեն դրսևորում է իր շարափյուսագիտական հմտությունն ու խորաթափանցությունը. նա նախադասության անդամների շարաքան վիճակ չի ճանաչում, այլ ելնում է նրանց գործածության ձևից և նախադասության մեջ ունեցած դերից, ըստ որում ամեն մի անդամ կարող է նոր դեր ու պաշտոն ստանձնել և ըստ այսմ էլ անվանակոչվել: Ահա նրա բնորոշումը. «Այլ յորում ի փոխադրեալ նախադասութիւն ենթական լինի ստորոգեալ և ստորոգեալն՝ ենթակայ, յայնժամ լինից կրկն նախադասութիւնք հաղորդք իրեանց ըստ երկուս սահմանաց. օրինակ՝ ամեն մարդ կենդանի է. ոչ ամեն կենդանի մարդ է: Ահա այսոցիկ են երկու նախադասութիւնք ունելով հալորդութիւն ըստ երկուս սահմանաց. զի մարդն յառաջնումն է ենթակայ, իսկ երկրորդումն է ստորոգեալ, քայց ոչ են նույն ըստ որակին, զի միցն է ստորադասական և միւսն քացասական»:

Սի կողմ թողնելով քերականի «զի մինն է ստորադասական և միւսն քացասական» արտահայտությունը, մենք անդրադառնալով ընդ մյուսին, այսինքն՝ այն բանին, թե ինչպես տարբեր շարադասություններում միևնույն բառը կարող է համոզու գալ մի դեպքում ենթականի, մյուս դեպքում՝ ստորոգյալի դերերում: Ջուղայեցին պարզ ու որոշակի ցույց է տալիս, որ շարափյուսության մեջ քարաքան վիճակներ չկան, որ բառի պաշտոնը որոշվում է ըստ այն շարափյուսական դերի, որ նա կատարում է տվյալ նախադասության մեջ: Ըստ այսմ մարդ բառը մի դեպքում հանդես է եկել որպես ենթակա, մյուս դեպքում՝ որպես բաղադրյալ ստորոգյալ կազմող բառ, այսինքն՝ ստորոգեպիական վերադիր: Հանգույցը (է օժանդակ քայք) քերականի մոտ շարափյուսական առանձին ըմբռնում չէ: Ի դեպ, ասենք, որ այդ հարցին նույն կերպ է մոտեցել նաև Դավիթ փիլիսոփան:

Ջուղայեցուն հետո հրապարակ եկած առանձին քերականների մոտ էական բայը համարվել է կապումն, որ կապել է նախադասության երկու եզրերը՝ ենթական ու ստորոգյալը միմյանց, այսինքն՝ ստորոգում է կատարել (այսպիսի անվանում նրանք չեն գործածել):

Այստանհետևիվ Ջուղայեցու մոտ ստկա է նաև բաղադրյալ ստորոգյալի գաղափարը, չնայած որ նա այդ մասին որևէ ակնարկ չի անում: Ինչպես, Ջուղայեցին ազատ և լայնախոհ մտքի տեր մի հեղինակ է, շարափյուսական կաշկանդումներ չի սիրում: Եթե հզորախակներ այս քերականի վերջին ատույթը, ապա

⁶⁰ Ջուղայեցի, Գիրք տրամաբանութեան, էջ 98:

⁶¹ Նույն տեղում, էջ 77:

կարող ենք հանգել նման եզրակացության՝ մի ստորագրում մի միտք, երկու ստորագրում՝ երկու միտք:

Ինչպես նախադասության անդամներից ջարացած, անփոփոխ միննույն պաշտոնը չհատկացնելը, այն տարրեր դերերով գործածությունը ճանաչելը, այնպես էլ ստորագելիական վերադիրն ու օժանդակ բայը ստորագայի դերով հանդես բերելը նոր ու համարձակ մտահղացում է և հետագա հպ քերականների համար այդ կարգի շարահյուսական հասկացությունները մշակելու համար մի պայծառ կանխագուշակում է, որ պատիվ է բերում Զուղայեցուն: Վերջում սխտք է նշենք հեղինակի ազնվությունն ու գիտակցությունը: Նա պարզ ու անկեղծ խոստովանում է, որ այդ աշխատությունը ոչ թե իր սեփական ստեղծագործությունն է, այլ «մեկնություն և դուռն գրոցն Պարփիրի և Արիստոտելի»:

Եզրափակելով Զուղայեցու մասին ասելիքը, պետք է նշենք, որ նա.

ա) Վաղ շրջանի և միջնադարի համեմատությամբ առաջին քերականն է, որ հեղաշրջում է մտքերը շարահյուսական համակարգի մեջ և կազմել է բոլորովին նոր բնույթի քերականական ձեռնարկ:

բ) Առաջինն է, որ հստակ ու որոշակի տարբերակել է նախադասությունը բանից՝ խոսքից:

գ) Առաջինն է, որ ճանաչել է պարզ համահոտ և բարդ նախադասություն հասկացությունները:

դ) Հետևողական կերպով գործածել է ենթակա և ստորոգյալ անվանումները որպես շարահյուսական իրողություններ արտահայտող բառեր, որոնք գործածել էին Արիստոտելի հայ մետոդները՝ «խալիթ» և «մյուսները»:

ե) Հալատարիմ մնալով մի կողմից Արիստոտելին, մյուս կողմից վաղ շրջանի հայ քերականների՝ Զուղայեցին ավանդապատրոնն նշել է նախադասություններն ըստ բնույթի:


զ) Թեև ոչ լիովին տարրորոշված ձևով, այնուամենայնիվ կուսակ է բացահայտել, հատկացուցել և խնդրի գաղափարը և այդ առթիվ իր կարծիքը հայտնել:

է) Հետագա քերականների համար ուղի է հարթել բաղադրյալ ստորոգյալը ճանաչելու հարցում:

ը) Տվել է նախադասության անդամներն ըստ շարահյուսական դերի ու վարած պաշտոնի ճանաչելու և անվանելու բանալին:

Այսպիսով, Զուղայեցու շարահյուսական մտքերը մեր շարահյուսագիտության պատմության համար շատ կարևոր են և ենթակա՝ լուրջ ու մանրամասն ուսումնասիրության:





Հ. Ս. ԲԱՆԱԼՅԱՆ

ՀԱՅՈՑ ՀԻՆ ՏՈՄԱՐԻ ԱՄՍԱՆՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԱՄՍՕՐԵՐԻ ՍՏՈՒԳԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Հայոց հիմ տոմարի ամիսների անունները հետևյալն են, սկսած տարվա առաջին ամսից՝ Ծավասարդի, հոռի, սահմի, տրե, քաղոց, արաց, մեհեկան, արեգ, ահեկան, մարերի, մարգաց, հոռտից և ավելեաց: Հայոց ամսանունները ունեն հետևյալ ստուգաբանությունը. Ծավասարդի՝ կազմված է «նոր» և «սարդ» բառերից՝ նոր տարի: (գնդերեն nova նշանակում է նոր և sareda՝ տարի): «Հիմ ժամանակ Ծավասարդը տոնում էին մեծ հանդեսով, որի հիշատակը մնացել է Արտաշես թագավորին վերագրած այս խոսքերում՝ Ո՛ տայր ինձ... զառաօտն նառաայդի, զվազելն եղանց և զվարգելն եղջերուաց, Մեք փող հարուաք և թմբկի հարկանեաք»: Հոռի—տունկի, այգեստանի ամիս: Հայոց տոմարի երկրորդ ամիսն է, համապատասխանում է սեպտեմբերի 10-ից մինչև հոկտեմբերի 9-ը:

Այս ամսվա անվան ստուգաբանության վերաբերյալ գոյություն ունեն տարբեր կարծիքներ. առաջին, ենթադրվում է, որ այս ամսվա անունը առաջացել է վրացերեն «օրի», այսինքն՝ «երկու» բառից, երկրորդ, այս ամսվա անվան ստուգաբանությունը ըստ միջնադարի վանական մականունով հեղինակի առնչված է «հոր» բառի հետ, տարվա այն ժամանակի հետ, երբ մարդիկ իրենց հավաքած բերքը՝ ցորենը, գարին, գինին և այլն, ամբարում էին հորերի մեջ: Ահա այդ առթիվ ինչ է գրել Վանակյանը իր «Յաղագս տարեմտին...» աշխատությունում. «Հոռի գի հորեն երկրագործք և մշակք գցորենն և գինը յըշտենադան ժողովելով»:

Սահմի—հայոց տոմարի երրորդ ամիսն է, համապատասխանում է հոկտեմբերի 10-ից մինչև նոյեմբերի 8-ը: Ենթադրվում է, որ այս ամսանունը կապված է վրացերեն «սամի»

(երեք) բառի հետ:

Հոռի և սամի ամիսների անունների աղելի հավանական ստուգաբանությունը տվել է ակադեմիկոս Ստ. Մալխասյանցը: Նա գրում է, որ «Սահմի-ի, ինչպես և Հոռի-ի ստուգաբանությունները, իբրև փոխառություն վրացերեն օրի, სამი բառերից՝ անհավանական են: Վրացերենում օրի, სამი ուղղական հոլովներ են, այնինչ Հոռի, Սահմի անվանած սեռական հոլովներ են, որոնք ենթադրել են տալիս Հոռ, Սահմ ուղղ. հոլովներ: Օրի, სამი հայերեն պետք է տալին Որի, Սամի, բայց ոչ Հոռի, Սահմի: Վրացերենում օրի, სამი պարզ թվական անուններ են և նշանակում են «երկու», «երեք» և երբեք չեն գործածվել իբրև ամիսներ նշանակող բառեր: Հայերը «երկու», «երեք» նշանակելու համար կարիք չէին ունենա փոխառության դիմելու, քանի որ այդ բառերն իրանց լեզվում գոյություն ունեին: Նկատի առնելով, որ հայկական մյուս ամիսների նշանակությունները կապված են տարվա եղանակների և այս եղանակներում տեղի ունեցող կենցաղական երևույթների հետ՝ հավանական եմ համարում, որ հոռի ամիսը նշանակելիս է եղել Ուռի ամիս, այսինքն՝ որթատունկի՝ այգեստանի ամիս..., իսկ սահմի ամիս՝ Սեբմանց ամիս...»:

Տրե—այս բառը ստուգաբանվում է առնչված հեթանոսական շրջանում հայերի կողմից պաշտված գրի և արվեստների աստված Տիրի (Tir) անվան հետ: Տիրը հայերի սիրած աստվածներից մեկն է եղել, հանդիսացել է Արամազդի գրագիրը, և համապատասխանել է Մերկուրիոսին, հունական Ապոլոնին, եգիպտական Թոթին և այլն:

Ըստ Ստ. Մալխասյանցի ստուգաբանության Տրե պահլավերեն նշանակում է Ծնիկ աստղ, պարսկական արեգակնային օրացույցի չորրորդ ամիսը: Այդ ամիսը համապատասխանում է նոյեմբերի 8-ից մինչև դեկտեմբերի 8-ը:

Քաղոց—այս ամսանունը հայկական ծագում ունի, սակայն գոյություն ունի տարա-

¹ Լ. Խաչիկյան, «Յաղագս տարեմտին ի Վանական վարդապետե աստեղայ», Մատենադարանի գիտական նյութերի ժողովածու, № 1, էջ 160, Երևան, 1941 թ.:

կարծիք ստուգաբանություն: Ըստ Ք. Պատկանյանի առնչվում է «քաղել» բառի հետ, սակայն այս մեկնությունը ենթադրվում է, որ ճիշտ չէ, որովհետև հնագույն ժամանակներում քաղել բայը հնձելու նշանակություն չի ունեցել:

Ըստ ֆրանսիացի բանասեր Ե. Դյուրորիենի կատարած ստուգաբանության, ենթադրվում է, որ քաղողը առնչված է «քաղել» բայի հետ, որ հիշեցնում է հունձը, այսինքն՝ համընկնում է Ք. Պատկանյանի կարծիքի հետ: Քաղոց ամիսը համապատասխանում է դեկտեմբերի 9-ից մինչև հունվարի 7-ը:

Ըստ ակադեմիկոս Հ. Աճառյանի ստուգաբանության. «Քաղոց» կազմված է «քաղ» (անասնոց խառնք) բառից, որ տարբեր չէ «քաղ» (նոխազ, արու այծ) բառից: Ըստ այսմ «քաղոց» նշանակում է «անասնոց», «խառնից ամիս», այսինքն՝ կապված է անասունների զուգավորման ամսի հետ: Նման կարծիքի է նաև ակադեմիկոս Ստ. Մալխասյանցը: Նա գրում է. «Քաղոց (քացից, այսինքն անասունների զուգավորության ամիս) ... գործ է ածված ն՝ իբրև սեռ. հոլով, ն՝ իբրև ուղղ., սեռ. քաղոցի:—Ոմանք բառը համարում են քաղեց՝ հնձեց, ինչպես ժողովրդական քաղողը քաղելու ամիսը, սակայն ուղիղ չէ այս ստուգաբանությունը, որովհետև հիմ լեզվում «քաղել» բայը հնձելու նշանակություն չուներ և ոչ էլ քաղ՝ հունձի»:

Արաց—կարելի է ասել դեռևս մյուս ամսանունների նման՝ ստուգաբանված չէ: Սակայն Վանակյանի մոտ արաց-ի փոխարեն գրված է արան և ստուգաբանում է հետևյալ կերպ՝ «Եւ Արանց ի յանել ձեան գլերինս և գթուրս, ասեն արանց է այս ճանապարհ և ոչ կանանց. արի մարդոց է այս և ոչ թուզից և վատաց»¹: Արացը սկսվում է հունվարի 8-ից մինչև փետրվարի 6-ը: Հուլիանոսն Իմաստասերը նույնպես «արացի» փոխարեն գրել է «արանց» ձևով:

Մեհեկան—այս ամիսը գործածվել է նախ «Մեհեկի» ձևով: Մեհեկան անունը առնչված է պարսկական Միհր արեգակի աստծու անվան հետ, որը մեծ հռչակ էր վայելում նաև հայերի մոտ:

Հին պարսիկների մոտ ևս Միհր—մեհե-

կանը օրացույցի 7-րդ ամիսն է, երբ մեծ տոն էր կատարվում Միհր աստծու պատվին: Մեհեկանի 1-ը համապատասխանում է փետրվարի 7-ին, իսկ 30-ը՝ մարտի 8-ին (հասարակ տարի):

Իսկ Վանակյանը տվել է հակառակ բացատրություն, որ «Մեհեկի գի տունկը և բույսը որպես զմեռեալ լինի»՝ եղեմնապատ և ձիւնաթաղ. մեհեկի այսինքն ածի»²:

Վանակյանի բացատրությունն ավելի հավանական է, որովհետև այդ ամսին իրոք որ բնությունը, բույսերը, ծառերը մեռնալ վիճակ են ունենում:

Արեգ—ստաջացել է «արեգակ» բառից, այսինքն՝ «Արեգ»—«արեգակ» բառի արմատըն է, Արեգը եղել է հայերի հնագույն ցեղական աստվածը: Ըստ Վանակյանի Արեգ անունը նույնպես կապված է արեգակի հետ, որ այդ ամսին արեգակի զորությամբ արթնանում է բնությունը:

Մեհեկան—ըստ Ք. Պատկանյանի, Մեհեկան ամսվա անունը կապված է կրակային, հրային նշանակություն ունեցող բառերի հետ, հավանաբար նշած ստուգաբանությունը կապված է տարվա եղանակների ժամանակի, զարեան զարթոցքի հետ, որը համապատասխանում է ապրիլ, մայիս ամիսներին:

Մարերի—պահլավերենում սրան համապատասխանում է «ազարական» և նշանակում է տարեմեջ, այսինքն՝ տարվա հինգերորդ ամիսը: Ըստ Վանակյանի ստուգաբանության մարերի անունը առնչված է անտառների տերևածածկման հասկացողության հետ, երբ այսպես կոչված մայրիք ծառերը կանաչում են ու տերևակալում: Վանակյանը գրում է. որ «Մարերի, որպես թե բառական մայրիք տերևովք և ուտաք և լինին մայր թռչնոց և զազանաց»: Այս բացատրությունը ժամանակի տեսակետից քավարարում է, որովհետև Մարերին համապատասխանում է մայիս հունիս ամիսներից: Գրեթե նման բացատրություն է տալիս Ք. Պատկանյանը, ըստ երևույթին նա հիմնվել է Վանակյանի բացատրության վրա:

Մարգաց—ըստ Ստ. Մալխասյանցի ստուգաբանության նշանակում է թռչունների թխսի ամիս: Ըստ Ք. Պատկանյանի՝ կապված է «մարգ» բառի, այսինքն՝ խոտհարքի և խոտհունձի հասկացողության հետ: Նման կարծիքի է նաև Դյուրորիեն: Մարգաց ամիսը սկսվում է հունիս ամսում և վերջանում հուլիսին: Վերջին բացատրությունը մեր

¹ Ստ. Մալխասյանց, «Հայերեն բացատրական բառարան», 4-րդ հատոր, էջ 178:

² Հ. Աճառյան, Արմատական բառարան:

³ Լ. Խաչիկյան, «Թագազ տարևմտին ի Վանակյան վարդապետի առաջնալ, Մատենադարանի գիտ. նյութերի ժողովածու № 1, Երևան, 1941, էջ 180:

⁴ Ստ. Մալխասյանց, Հայերեն բացատրական բառարան, Երևան, 1945, էջ 538:

⁵ Նույն տեղում, էջ 180:

իմաստասիրից ստուգաբանություն մեզ հայտնի չէ: Այդ անունները որոշ հեղինակների կողմից փորձ է արված ստուգաբանել, սակայն որպես ամսվա օրերի անունների ստուգաբանություն քավարար չէ և մնում է դեռևս բաց: Այս անունների ստուգաբանությունն արժանի է առանձին հետազոտության: Նրանք հավանաբար կարող են նույնպես կապված լինել պաշտամունքի հետ: Մնացած 29 օրերի անունների հավանական ստուգաբանությունը ընդհանուր է ստորև՝

1. Արեգ—տես հայոց տոմարի արեգ ամսը կա ստուգաբանությունը:

2. Արամ—ըստ ակադեմիկոս Հ. Աճառյանի ստուգաբանվում է հետևյալ կերպ. «Արամ—խաղիների Արամն թագավորի անունն է: Սա իշխում էր Ն. Բ. 860—849 թթ. կազմեց Ուրարտյան մեծ դաշնակցությունը և իր ամբողջ կյանքում կռվեց Ասորեստանց պետության դեմ՝ քաջությամբ վանելով հզոր Սալմանասարի բոլոր հարձակումները: Նրա հիշատակը ավանդաբար մնացել է հայ ժողովրդի մեջ, որից և քաղելով Խորենացին կազմեց Հայկազանց Արամ ճառագետի պատմությունը... Արամի անունով օտարները կոչել են մեզ Արմեն, իսկ մեր երկիրը՝ Արմենիա: Ըստ Չամչյանի, Արամը իշխել է Ն. Բ. 1827—1880 թթ.»⁹:

6. Մազդեզ կամ Մազդե—կարող է առաջացած լինի պահլավերեն «mazdes» բառից, որը նշանակում է Ահուրա—Մազդաին: Ահուրա—Մազդե հին պարսկական գրչավոր աստվածն էր, որ մոտավորապես համապատասխանում էր հայոց Արամազդին, հունական Զևսին և հռոմեական Յուպիտերին: Մազդեզականությունը նշանակում է պարսկական գրադաշտական կրոն:

Բառացի մազդեզ—կամ մազդել նշանակում է գիտակ, իմաստուն, պարսկական կրոնի ուսուցիչ, վարդապետ:

7. Աստղիկ¹⁰—այս անունը կապված է հայոց Աստղիկ դիցուհու անվան հետ:

⁹ Հ. Աճառյան, Հայոց անձնանունների բառարան, Երևան, 1942:

¹⁰ Աստղիկը համարվում էր գեղեցկության և սիրո աստվածուհին, Արամազդի դուստրն էր և համապատասխանում էր հունական Աֆրոդիտին և հռոմեական Վեներային: Աֆրոդիտեն Զևսի դուստրն էր, իսկ Վեներան՝ Թուրիստերի, Աստղիկը եղել է հայոց ուժի և քաջության աստծու՝ Վահագնի կինը: Աստղիկ դիցուհու պաշտամունքի համար Հայաստանում կառուցվել է մի շարք մեհյանքներ, որոնցից երկուսը Տարոնի գավառում: Այս երկուսից մեկը գտնվել է Աշտիշատ ավանում, որտեղ գտնվել է նաև Վահագնի մեհյանքը: Նրա մեհյանքներից մեկը Տարոնում կոչվել է Վա-

8. Միհր¹¹—կապված է Միհր՝ կրակի աստծու պաշտամունքի հետ, որը մեծ հռչակ էր վայելում նաև հայերի մոտ:

10. Մուրց—հավանաբար մրցությունը բառից է առաջացել առնչված մրցախաղերի հետ (տես Հ. Աճառյան, Արամազդյան բառարան, հատ. 4, էջ 118):

11. Երեզկան—կապվում է Անահիտի պաշտամունքի հետ, որի գլխավոր տուճարը՝ մեհյանք, գտնվում է Երիզա (այժմյա Երզնկա քաղաքում) Անահիտական կամ Եկեղյաց գավառում:

12. Անի—առնչված է Կամախ Դարանադաղի գավառում կառուցված Անի ամրոցի անվան հետ, որտեղ գտնվում է Արամազդ աստծու գլխավոր տաճարը:

13. Պարխար—ծագել է հայկական Պարխար լեռան անունից, այդ լեռնաշղթայից փչող ցուրտ հյուսիսային քամին նույնպես կոչվում էր պարխարական քամիներ:

14. Վանատուր—անվաճ 14-րդ օրվա այս անունը հավանաբար առնչված է ամանորի հետ, որովհետև Ամանոր անվանը գուգակրցված է և Վանատուրը¹²:

հագնի սեղան: Աստղիկ դիցուհու պաշտամունքի տեղը կատարել են մեծ հանդիսավորությամբ, որը ժողովրդի մեջ պահպանվել է մինչև մեր օրերը, որպես Վարդավառի տոն: Վարդավառի տոնի օրը ջուր են ցանում իրար վրա, որ տեղի է ունենում հայոց ճավասարդ ամսի սկզբներին: Դիցուհու պաշտամունքին նվիրված տոնը վարդավառ է կոչվում այն րանի համար, որ Աստղիկ դիցուհուն որպես ընծա նվիրել են վարդ: Այս առթիվ հետաքրքրական է ակադեմիկոս Մ. Արեղյանի մեջբերումը. «և կոչեցին գնա վարդամատն և ոսկեծղի, և գվարդն, ճման մատուցանեին. վառն այտորիկ անվանեին զսոճն զայս վարդավառ» (Մ. Արեղյան, «Վիշապենք», Երևան, 1941, էջ 77):

¹¹ Նշանակում է հայոց մեհենի ամսի 8-ը հանդիսացել է Միհր աստծու պաշտամունքի տոնակատարության օրը: Հայոց Միհր աստվածը Արամազդի որդին է, որին իրանում համապատասխանում է Միթրան, Հռոմում՝ Վուլկանը, Հնդկաստանում՝ Ագնին, այլ երկրներում նույնպես եղել են կրակի պաշտամունքի աստվածներ: Միհր աստծու համար կառուցված տաճարը՝ մեհյանք, գտնվել է Բազադիճ ավանում, որը գտնվում էր Դերձան գավառում:

¹² Նշանակում է հայոց մեհենի ամսի 8-ը հանդիսավոր ձևով. «Այս քաջատրությամբ Ամանորի տոնակատարության ծամանակ, որին մատակցել է Հայաստանի բազմազան կողմերից հազարավոր հավաքված խումբ քաղմություն, հայոց Տիգրան Գ թագավորը որպես թե հրամայում էր հյուրանոց կառուցել և տոնի մասնակիցներին կերակրել Ամանորից մատուցած զոհերով: Դրա հետևանքով ժողովուրդը Ամանորին անվանեց Վանատուր, որ նշանակում է հյուր-

15. Արամազդ—առնչված է հին հայոց աստված, աստվածներից մեծագույնը և հայրը՝ Արամազդի անվան հետ¹³:

16. Մանի—հավանաբար կապված է Մանի աստվածության հետ, որի մեհյանը պետք է գտնվեր Թորդան գյուղի մոտ, իսկ ըստ Քաջունու առնչված է Մանի լեռան անվան հետ:

18. Մասիս—առնչված է Մասիս լեռան անվան հետ:

19. Անահիտ¹⁴—ամսվա այս օրը առնչված է հայոց դիցուհի Անահիտի անվան հետ: Անահիտ դիցուհին համապատասխանում է հունական Արտեմիս դիցուհուն, հռոմեական Իհաննա աստվածուհուն և այլն:

20. Արագած—առնչված է Արագած լեռուն անվան հետ:

21. Գրգուռ—հայկական լեռան անուն է:

22. Կորդուիք—կապված է Կորդուիք լեռան անվան հետ:

24. Լուսնակ—կապված է լուսնի անվան հետ:

26. Նպատ—հայկական լեռան անուն է:

ընկալ» (Ա. Առաքելյան, «Հայ ժողովրդի մտավոր մշակույթի զարգացման պատմություն», (էջ 88, Երևան, 1968):

¹³ Հայոց Արամազդը իր կրոնական և տիեզերական ֆունկցիաներով համապատասխանում էր պարսկական Ահուրամազդային, հունական Զևսին և հռոմեական Ժուպիտերին: Նա պարզևում էր նրկրին լիություն: Հայերի համար Արամազդն այնքան ճշմարիտ ու պաշտելի աստված է եղել, որ նրա անվամբ կառուցվել են շատ բազիլիկներ (հեթանոսական գոհի սեղան կամ տաճար), որոնց տեղերը հայտնի չեն. միայն հայտնի է, որ Արամազդի գլխավոր բազիլը գտնվում էր Դարամաշյաց գավառի Անի ամրոցում (Երզնկայի մոտ), որը հանդիսացել է պաշտամունքի վայր: (Քաջունի, «Բառգիրք արուեստից և գիտությանց և գեղեցիկ դպրութեան», էջ 101, Վենետիկ, 1892:

¹⁴ Բացի հայերից, որպես դիցուհի Անահիտին պաշտել են նաև ուրիշ շատ ժողովուրդներ: Նա եղել է Արամազդի դուստրը: Հայերի համար հանդիսացել է չափազանց սիրված ու պաշտված դիցուհի և համարվել է ամենայն զգաստության մայր: Անահիտ դիցուհու համար Հայաստանում կառուցվել են մի քանի մեհյան և արձաններ: Նրա արձաններին տվել են հետեվյալ անունները՝ Ոսկեմայր, Ոսկեհատ, Ոսկեծին և այլն: Անահիտի համար կառուցված առաջին մեհյանը գտնվել է Երիզան ավանում (Երզնկան), որը հանդիսացել է հայ ժողովրդի ճշմանվոր պաշտամունքի վայրերից մեկը: Երկրորդ մեհյանը գտնվել է Արտաշատում և երրորդը՝ Աշտիշատի ավանում (Տարոնի գավառում):

27. Վահագն¹⁵—առնչված է հին հայոց դիցաբանության մեջ պատկերած ուժի և քաջության աստված Վահագնի անվան հետ:

28. Սին—լեռան անուն է:

29. Վարագ—լեռան անուն է:

30. Գիշերավար—գիշերով ընթացող, գիշերը ճանապարհորդող, առնչված է Արուսյակ—Վեներա մոլորակի հետ: Արուսյակ մոլորակը տարվա վեց ամսում կոչվել է գիշերավար, որովհետև մոտ այդքան ժամանակ նրան կարելի է տեսնել գիշերը (արևմուտքում՝ երեկոյան, և արևելքում՝ առավոտյան կողմը, այլ կերպ ասած՝ արեգակից հետո և առաջ), իսկ տարվա մնացած ժամանակում կոչվել է Արուսյակ (տես «Հայկազեան լեզուի» քառարանը):

Հայոց տոմարի ավելեաց ամսի հինգ օրերը նույնպես շատ հին ծագում ունեն, որոնց անվանել են հնուց հայտնի հինգ մոլորակների՝ Փայլածուի, Արուսյակի, Հրանտի, Լուսնթագի և Երեակի անուններով:

Ցանկալի է, որ հայազետները ավելի հանգամանորեն լուսաբանեն ինչպես ամբարվա օրանունների, այնպես էլ ամսանունների ստուգաբանությունը:

Հայոց հին տոմարի ամսօրերին առանձին-առանձին անուններ տալու փաստը վկայում է այն մասին, որ ամսօրերին անուններ տա-

¹⁵ Նա հանդիսացել է քաջություն պարզևող աստված, այդ առթիվ ավելորդ չենք համարում բերել հայ մատենագրությունից Ագաթանգեղոսի երկտողը «Քաջութին հասցե ձեզ ի քաջէն Վահագն ամենայն հայոց աշխարհիս»: (Ագաթանգեղոս «Պատմություն հայոց», էջ 78, Թիֆլիս, 1814:

Հայոց Տրդատ թագավորն այդպես է մաղթել քաջություն քաջաց Վահագնից իր ժողովրդին: Վահագնի քաջության վերաբերյալ հետաքրքրական է նաև մեզ հասած Անանիա Շիրակացու պատկերած առասպելը, ըստ որի Վահագնը երկնքում կոչվել է ասորաց Բարշամ թագավորի հետ ու նրանից փախչելի հարդը և երկնքով տեղափոխելիս ճանապարհին այն թափում է ու առաջացնում Միր Վաթինը, որին ժողովուրդը, որպես առասպել, անվանում է «Հարդագողի ճանապարհ»: Ըստ Ղ. Ալիշանի, Վահագնի պաշտամունքը կապվում է նաև արեգակի պաշտամունքի հետ, այդ կապակցությամբ նա գրում է. «Ոմանք գԱրեգակն պաշտեցին և Վահագն կոչեցին» (Ղ. Ալիշան, «Հին հավատք...», էջ 88, 1810): Գոյություն ունի նաև այն կարծիքը, որ Վահագնը համարվել է ամպրոպայից ատուված:

Վահագնի համար կառուցած մեհյանը գտնվել է Աշտիշատ ավանում (Տարոնի գավառ), որը հանդիսացել է պաշտամունքի վայր և հավանաբար պաշտամունքի տոն օրը եղել է հայոց հին ամիսներից մեկի 27-ր, նվիրված Վահագն աստծու պաշտամունքին:

յու ժամանակաշրջանում հայերի մոտ, ըստ երևույթին, սովորությունն չի եղել յոթնօրյա շաբաթվա գործածությունը:

Ըստ երևույթին, ամսօրերի միջոցով հաշիվներ կատարելն ավելի դյուրին դարձնելու նպատակով են ամսօրերին տվել առանձին անուններ: Այստեղից կարելի է կռահել, որ հավանաբար հայերի մոտ ամսվա 30 օրերին առանձին անուններ տալու գործածությունն ավելի հին ծագում ունի, քան յոթնօրյա շաբաթվա կիրառությունը:

Նման կարծիք գոյություն ունի նաև պարսկական ամսօրերը առանձին անուններով կոչելու վերաբերյալ:

Անհրաժեշտ ենք համարում մի քանի խոսք ասել նաև Ազարիա Զուղայեցու քարեփոխած տոմարի ամսանունների ստուգաբանության շուրջը:

Ծամս—արաբական բառ է, նշանակում է Արեգակ:

Ադամ—հավանաբար նախամարդու անունն է ըստ Աստվածաշնչի, որով կոչվել է Ազարիա Զուղայեցու տոմարի երկրորդ ամիսը:

Ղամար—արաբերեն նշանակում է Լուսին: Համիրայ—կամ համերայ—հավանաբար արաբերեն Ամիր բառից է առաջացել:

Արամ—տե՛ս ամսվա 9-րդ օրվա ստուգաբանությունը:

Մնացած ամիսների Ծրաթ, Նախայ, Նահար, Ուլդան և Նիրհան անունների ստուգաբանությունը մեզ հայտնի չէ:

Անհրաժեշտ է արձանագրել նաև այն հետաքրքրական փաստը, որ 1870 թվականի սկզբներում Ն. Ռուսիյանը փորձ է արել փոխել ամսանունները: Նրա կողմից առաջարկված ամիսների նոր անունները հիմնականում առնչված են տարվա եղանակների ժամանակի փոփոխությունների հետ:

Այդ անունները, սկսած տարվա սկզբից, հերթականությամբ հետևյալն են.

1. Սառներ—սառնաբեր ամիս,
2. Մրկեր—մրրկաբեր ամիս,
3. Ջարթին—վարդային ամիս
4. Ծաղկին—ծաղկային ամիս
5. Մարգին—մարգային ամիս
6. Հնձար—հնձի ամիս,
7. Տոթար—տոթարար ամիս
8. Մրգար—մրգարար ամիս,
9. Կթոն—այգեկության ամիս,
10. Թառմոն—թառամության ամիս,
11. Միզոն—միզամածության ամիս,
12. Զյուներ—ձյունաբեր ամիս:

Այս ամսանունները չափազանց լավ կերպով են առնչված տարվա տվյալ ժամանակում կատարվող աշխատանքների և օդերկաթաքանակի երևույթների հետ: Սակայն, հավանաբար կյանքում գործնական կիրառության բնավ չեն արժանացել: Անտարակույս Ն. Ռուսիյանի առաջարկած ամսանուններն ավելի բնական ու հարմար են հղել, քան ներկայումս գործածվող հռափուկ օրացույցի ամսանունները:

Օրվա ժամանակները

Հետաքրքրական է նաև այն փաստը, որ հայերը շատ վաղ ժամանակից օրվա 24 ժամերին տվել են առանձին անուններ, որից 12-ը համարելով ցերեկվա ժամեր և 12-ը գիշերվա¹⁶:

Օրվա ժամանունները համապատասխանում են Արեգակի տեսանելի շարժման դիրքի ընթացքին:

Ցերեկվա ժամանուններն են

1. Այգ
2. Ծայգ
3. Զօրացեալ
4. Ծառագայթեալ
5. Ծառափղեալ
6. Երկրատես
7. Ծանթարկող
8. Հրակաթ
9. Հորափայլեալ (հորաթափեալ)
10. Թաղանթեալ
11. Արագտոն
12. Արփող

Գիշերվա ժամանուններն են

1. Խաւարակ
2. Աղջամողջ
3. Մթացեալ
4. Ծաղաւոտ
5. Կամաւոտ
6. Բաւական
7. Խորթափեալ (հաւաթափեալ)
8. Գիգակ
9. Լուսական
10. Առաւոտ
11. Լուսափայլ
12. Փայլածո

¹⁶ Ներկա աշխատությունում քերված օրվա ժամանունները քաղել ենք Ղ. Ալիշանի «Հին հատաղ...» աշխատությունից, Կենետիկ, 1910:



Օ. ԵԳԱՆՑԱՆ

(Բանասիրական գիտությունների թեկնածու)

ԱՎԵՏԻՔ ԵՎ ՀԱՄԱՐՁՈՒՄ ԷՆՖԻԱՃՅԱՆ ԳՐԱՎԱՌԱՌ ԵՂԱՅՐՆԵՐԻ ԶԵՌԱԳՐԱԿԱՆ ՀԱՎԱՔԱԾՈՒՆ

1847 թվականին Կալկաթայի «Ազգասեր» հանդեսի 4-րդ հաստիքում հրապարակվեց Ավետիք և Համբարձում Էնֆիանյան գրավաճառ եղբայրների հայերեն ձեռագրերի ցուցակը՝ հետևյալ խորագրով.

«Ցուցակ ձեռագիր մատենից եղելոց ի գրատան գրավաճառ եղբայրց Անտիկայ և Համբարձումայ Էնֆիանյանց Կարենցոց»¹:

Նշված ցուցակում, 1—45 թվահամարների տակ, համառոտակի թվարկված են 47 ձեռագրեր: Թվահամարների և ձեռագրերի իրական քանակի միջև եղած անհամապատասխանությունը հետևանք է այն բանի, որ ցուցակում № 1-ի տակ նշված է 2 «Մաշոց» (+1), իսկ № 20-ի տակ՝ 2 «Քարոզգիրք» (+1): Այդ ձեռագրերը, պարզության համար, հետագա շարադրանքում կ'ընշվեն 1ա, 1բ և 20ա, 20բ թվահամարներով:

Հաջորդ տարի՝ 1848 թվականին, Պոլսի «Հայաստան» լրագրում լույս է տեսնում նույն գրավաճառ եղբայրների ձեռագրերի մի նոր ցուցակ՝ հետևյալ խորագրով.

«Ցուցակ ձեռագիր մատենից գտելոց ի Տփլիս ի գրատան երկուց եղբայրց Անտիքայ և Համբարձումայ Էնֆիանյանց»²:

Այստեղ, 1—60 թվահամարների տակ, նույնպես համառոտակի, թվարկված են 55 ձեռագրեր: Թվահամարների և ձեռագրերի փաստական քանակի միջև եղած անհամա-

պատասխանությունը բխում է այն բանից, որ ցուցակում, նախ՝ № 18-ի տակ նշված է 2 «Մաշոց» (+1), իսկ № 60-ի տակ՝ 2 «Քարոզգիրք» (+1), ապա՝ 4 ժողովածուներ, փոխանակ 4-ի, ներկայացված են 11 տարբեր թվահամարների տակ՝ ըստ բաղկացուցիչ մասերի, որոնցից յուրաքանչյուրը դիտված է որպես առանձին միավոր (—7), այսպես. 2, 22 և 51 թվահամարների տակ արձանագրված նյութերը գտնվում են մեկ ձեռագրի մեջ, 8 և 37 թվահամարների տակ արձանագրվածները՝ մեկ, 25 և 39 թվահամարների տակ արձանագրվածները՝ մեկ, 15, 48, 49 և 50 թվահամարների տակ արձանագրվածները՝ նույնպես մեկ: Պարզության համար, հետագա շարադրանքում այդ ձեռագրերից առաջինները կ'ընշվեն 19ա, 19բ և 60ա, 60բ թվահամարներով, իսկ վերջինները՝ 2 (22, 51), 8 (37) և 15 (48, 49, 50) ձևով:

«Ազգասեր»-ում (1847) հրապարակված ցուցակի 47 ձեռագրերից 39-ը մտել են «Հայաստան»-ում (1848) հրապարակված ցուցակի մեջ, իսկ 8-ը (№№ 8, 25, 26, 39, 40, 41, 49, 44)՝ ոչ: Միաժամանակ 1847 թվականի ցուցակի 2 ձեռագրեր (№№ 4, 38), 1848 թվականի ցուցակում նշված են 4 տարբեր թվահամարների տակ (համապատասխանորեն՝ №№ 25, 39 և 8, 37):

1847 և 1848 թվականների ցուցակներում նկարագրված ձեռագրերի թվահամարների ստորև բերվող համեմատական տախտակը պարզորեն ցույց է տալիս այդ տեղաշարժը (տե՛ս տախտակ Ա):

¹ «Ազգասեր», 1847, հատոր Դ, էջ 396—399:

² «Հայաստան», 1848, երրորդ տարի, №№ 6(111), 7(112), 15(120):

SUNSUU U

MM 1847 p.	MM 1848 p.	MM 1847 p.	MM 1848 p.	MM 1847 p.	MM 1848 p.	MM 1847 p.	MM 1848 p.
1w	19w	12	13	23	14	35	53
1p	19p	13	26	24	6	36	16
2	33	14	10	25	—	37	4
3	54	15	59	26	—	38	8(37)
4	25(39)	16	3	27	57	39	—
5	9	17	44	28	47	40	—
6	46	18	29	29	35	41	—
7	32	19	58	30	11	42	31
8	40	20m	60m	31	41	43	—
9	—	20p	60p	32	52	44	—
10	12	21	23	33	5	45	30
11	34	22	27	34	7	—	—

Ինչպես տեսանք, ընդամենը մեկ տարվա ընթացքում, Էնֆիաճյան եղբայրների ձեռագրական հավաքածուն 16 նոր ձեռագրերի հավելում է ունեցել: Ավելացած ձեռագրերը 1848 թվականի ցուցակում արձանագրված են 1, 2 (22, 51), 15 (48, 49, 50), 17,

18, 20, 21, 24, 28, 36, 38, 42, 43, 55, 56 թվահամարների տակ:

1848 և 1847 թվականների ցուցակներում նկարագրված ձեռագրերի թվահամարների՝ ստորև բերվող համեմատական տախտակը պարզ կերպով ցույց է տալիս այդ տեղաշարժը (տե՛ս տախտակ Բ):

SUNSUU A

MM 1848 p.	MM 1847 p.	MM 1848 p.	MM 1847 p.	MM 1848 p.	MM 1847 p.	MM 1848 p.	MM 1847 p.
1	—	17	—	32	7	48	—
2	—	18	—	33	2	49	—
3	16	19w	1w	34	11	50	—
4	37	19p	1p	35	29	51	—
5	33	20	—	36	—	52	32
6	24	21	—	37	38	53	35
7	34	22	—	38	—	54	3
8	38	23	21	39	4	55	—
9	5	24	—	40	8	56	—
10	14	25	4	41	31	57	27
11	30	26	13	42	—	58	19
12	10	27	22	43	—	59	15
13	12	28	—	44	17	60m	20w
14	23	29	18	45	—	60p	20p
15	—	30	45	46	6	—	—
16	36	31	42	47	28	—	—

Այսպիսով, այս երկու ցուցակներում (1847 և 1848) միասին, ընդհանուր առմամբ նկարագրված են 69 ձեռագրեր, առաջին ցուցակում 47 աճում, որոնցից 39-ը մտել են երկրորդ ցուցակի մեջ, իսկ 8-ը՝ ոչ, հավանաբար արդեն վաճառված լինելու հետևանքով, իսկ երկրորդ ցուցակում՝ 16 (55—59), որոնք չեն արտագրված առաջին ցուցակում:

Վերոհիշյալ երկու ցուցակներն էլ հրապարակված էին ձեռագրերի համար գնորդ գտնելու նպատակով: Թեև «Ազգասեր»-ում (1847) հրապարակված ցուցակում այդ առթիվ ոչինչ չի ասված, սակայն Պոլսի «Հայաստան»-ը նախքան Էնֆիաճյան եղբայրների ձեռագրերի նոր ցուցակը (1848) հրապարակելը, թերթի «Ազգային» բաժնում գե-

տեղում է Թիֆլիսի իր թղթակցի մի նամակը, ուր ասված է հետևյալը.

«...Այս գիրքերս ժողովողները (իմա՝ Էնֆիաճյան եղբայրներ—Օ. Ե.) ետքը մտածե՛ր ե՛ն՝ ավելի աղեկ կլլա իրենց այս գործույն պաշտպան գտնել ազգային ընկերությանը կամ հայրենասեր իշխաններեն մեկը, որ խոսք տա ամոճը չէ թե միայն ցուցակին մեջ նշանակված գիրքերը ծախու առնել, այլև քաջալերություն տա, որ ուրիշ ձեռագիրներ այ գտնելու աշխատին»³:

Արդ, ի՞նչ եղան Էնֆիաճյան եղբայրների այդ 69 ձեռագրերը:

Անցյալ դարի հիսնական թվականներին Ռուսաստանում միակ հայկական հաստա-

³ «Հայաստան», 1848, երկրորդ տարի, № 50 (103):

տությունը, որը կարող էր ձեռագրեր գնել, Մոսկվայի Լազարյան ճեմարանն էր: Էջմիածինը բացառվում է, որովհետև Էջմիածինը ձեռագրեր ձեռք բերելու համար երբեք գումար չի տրամադրել և իր գրատան ֆոնդերը միշտ էլ համարել է նվիրատվություններով:

Այս ենթադրությունը հաստատվեց, երբ ըզված ձեռագրերի տվյալները մեկ առ մեկ համեմատվեցին Լազարյան ճեմարանի՝ 1861 և 1888 թվականներին Մոսկվայում լույս տեսած ձեռագրագույցակների մեջ նրկարագրված ձեռագրերի տվյալների հետ:

Համեմատությունը ցույց է տալիս, որ 1847 թվականին «Ազգասեր»-ում հրապարակված ցուցակի 47 ձեռագրերից 37-ը 1888 թվականին, արդեն, գտնվում էին Լազարյան ճեմարանի ձեռագրական ֆոնդերում և իրենց արտացոլումն էին գտել նույն ճեմարանի 1861

և 1888 թվականներին Մոսկվայում հրատարակված ձեռագրագույցակներում, այդ թվում 2-ը (№№ 35, 37) միայն 1861 թվականի ցուցակում (№№ 54, 71)⁴, 1-ը (№ 25) միայն 1888 թվականի ցուցակում (№ 1174)⁵, իսկ մնացած 34-ը՝ երկուսում միասին: Լազարյան ճեմարանի 1861 և 1888 թվականների ցուցակներում չեն արտահայտված Էնֆիանյան եղբայրների 1847 թվականի ցուցակի հետևյալ 10 ձեռագրերը՝ №№ 10, 20բ, 22, 34, 38, 40, 41, 42, 43, 44:

Պատկերը ավելի պարզ դարձնելու համար՝ դիտենք հետևյալ տախտակը, ուր 1847 թվականի ցուցակի 47 ձեռագրերի թվահամարները համեմատության մեջ են դրված Լազարյան ճեմարանի 1861 և 1888 թվականների ցուցակների տվյալների հետ (տե՛ս տախտակ Գ):

Տ Ա Ն Տ Ա Վ Գ

Ա.Ն. 1847 թ.	Լազարյան ճեմարան		Ա.Ն. 1847 թ.	Լազարյան ճեմարան		Ա.Ն. 1847 թ.	Լազարյան ճեմարան	
	Ա.Ն. 1861 թ.	Ա.Ն. 1888 թ.		Ա.Ն. 1861 թ.	Ա.Ն. 1888 թ.		Ա.Ն. 1861 թ.	Ա.Ն. 1888 թ.
1ա	18	1159	16	55	1246	31	38	1160
1բ	49	1158	17	53	1203	32	5	1110
2	13	1225	18	14	1179	33	59	1112
3	6	1168	19	21	1189	34	—	—
4	17	1187	20ա	51	1221	35	54	—
5	28	1197	20բ	—	—	36	10	1176
6	44	1125	21	32	1199	37	71	—
7	2	1249	22	—	—	38	64	1215ա
8	57	1163	23	12	1178	39	—	—
9	129	1143	24	16	1186	40	—	—
10	—	—	25	—	1174	41	—	—
11	3	1248	26	40	1152	42	—	—
12	20	1188	27	56	1170	43	—	—
13	11	1177	28	33	1213	44	—	—
14	7	1169	29	34	1229	45	1	1219
15	41	1245	30	29	1198	—	—	—

Այժմ անդրադառնա՞նք Պուշի «Հայաստան» լրագրի մեջ 1848 թվականին հրապարակված ցուցակի 55 ձեռագրերին:

Համեմատությունը ցույց է տալիս, որ 1848 թվականին «Հայաստան»-ում հրապարակված ցուցակի 55 ձեռագրերից 46-ը 1888 թվականին, արդեն, գտնվում էին Լազարյան ճեմարանի ձեռագրական ֆոնդերում և իրենց արտացոլումն են գտել նույն ճեմարանի 1861 և 1888 թվականներին Մոսկվայում հրատարակված ձեռագրագույցակներում, այդ թվում 3-ը (№№ 4, 38, 53)՝ միայն 1861 թվականի ցուցակում (№№ 71, 8, 54), 1-ը (№ 21)՝ միայն 1888 թվականի ցուցակում (№ 1128), իսկ մնացած 42-ը՝ երկուսում միասին: Լազարյան ճեմարանի 1861 և 1888 թվականների ցուցակներում չեն արտա-

հայտված Էնֆիանյան եղբայրների 1848 թվականի ցուցակի հետևյալ 9 ձեռագրերը՝ №№ 1, 7, 12, 17, 20, 27, 31, 56, 80բ:

Պատկերը ավելի պարզ դարձնելու համար, դիտենք ստորև բերվող տախտակը, ուր 1848 թվականի ցուցակի 55 ձեռագրերի թվահամարները համեմատության մեջ են դրված Լազարյան ճեմարանի 1861 և 1888 թվականների ցուցակներում նկարագրված ձեռագրերի թվահամարների հետ (տե՛ս տախտակ Դ):

⁴ Catalogue des livres de la Bibliothèque fondamentale de l'Institut Lazareff des langues orientales, Moscou, 1861.

⁵ Каталог книг и рукописей библиотек Лазаревского института восточных языков, Москва, 1888.

ՏԱՆՏԱԿ Դ.

1848 թ.	Լազարյան ճեմարան		1848 թ.	Լազարյան ճեմարան		1848 թ.	Լազարյան ճեմարան	
	Ն.Ն. 1861 թ.	Ն.Ն. 1868 թ.		Ն.Ն. 1861 թ.	Ն.Ն. 1868 թ.		Ն.Ն. 1861 թ.	Ն.Ն. 1868 թ.
1	—	—	22	27	1190	44	53	1203
3	27	1190	23	32	1199	45	137	1137
4	55	1246	24	39	1201	46	44	1225
5	71	—	25	17	1187	47	33	1213
6	59	1112	26	11	1177	48	4	1167
7	16	1186	27	—	—	49	4	1167
8	—	—	28	9	1175	50	4	1167
9	64	1215 ^ա	29	14	1179	51	27	1190
0	28	1197	30	1	1219	52	5	1110
11	7	1169	31	—	—	53	54	—
12	29	1198	32	2	1249	54	6	1168
13	—	—	33	13	1225	55	131	1243
14	20	1188	34	3	1248	56	—	—
15	12	1178	35	34	1229	57	56	1170
16	4	1167	36	8	—	58	21	1189
17	10	1176	37	64	1215 ^ա	59	41	1245
18	—	—	38	36	1241	60 ^ա	51	1221
19	46	1240	39	17	1187	60 ^բ	—	—
19 ^ա	48	1159	40	57	1163			
10 ^բ	49	1158	41	38	1160			
21	—	—	42	23	1231			
22	—	1126	43	24	1161			

Ամփոփելով, կարելի է հանգել հետևյալ եզրակացության.

ա. Էնֆիանյան եղբայրների 1847 և 1848 թվականների ցուցակներում արտահայտված 68 ձեռագրերից 49-ը 1888 թվականին արդեն զտնվում էին Լազարյան ճեմարանի ֆոնդերում և իրենց արտացոլումն են գտել 1861 և 1888 թվականների ձեռագրացուցակներում, այդ թվում 3-ը (ըստ 1847 թ. ցուցակի ՆՆՆ 35, 37, ըստ 1848 թ. ցուցակի համապատասխանորեն ՆՆՆ 53, 4 և ըստ 1848 թ. ցուցակի ՆՆ 36) միայն 1861 թվականի ցուցակում (ՆՆՆ 54, 71, 8), 1-ը (ըստ 1848 թ. ցուցակի ՆՆ 21)՝ միայն 1888 թվականի ցուցակում (ՆՆ 1126), իսկ 45-ը՝ 1861 և 1888 թվականների ցուցակներում միասին:

բ. Էնֆիանյան եղբայրների 68 ձեռագրերից 1888 թվականին բացակայում էին 14-ը, այդ թվում միայն 1847 թվականի ցուցակում արտահայտվածներից՝ 5-ը (ՆՆՆ 39, 40, 41, 43, 44), միայն 1848 թվականի ցուցակում արտահայտվածներից՝ 4-ը (ՆՆՆ 1, 17, 20, 56), 1847 և 1848 թվականների ցուցակներում միասին արտահայտվածներից՝ 5-ը (ՆՆՆ 10/12, 20բ/60բ, 22/27, 34/7, 42/31):

Երբ արդեն պարզ դարձավ, որ Էնֆիանյան եղբայրների ձեռագրերը մտել են Լազարյան ճեմարանի ֆոնդի մեջ, իսկ այդ

ֆոնդը, ինչպես հայտնի է, դեռևս 1925 թվականին փոխադրվել է Հայաստան և այժմ գտնվում է Մաշտոցյան Մատենադարանում, ինքնին հասկանալի է դառնում, որ Էնֆիանյան եղբայրների ձեռագրերը պետք է փյունորել ոչ այլուր, քան Մաշտոցյան Մատենադարանում:

Այդ ուղղությամբ կատարված ուսուցումները թույլ տվեցին ոչ միայն ճշտել այդ ձեռագրերի Մաշտոցյան Մատենադարանում գրադեցրած թվահամարները, այլև հայտնաբերել Լազարյան ֆոնդի մեջ չմտած 14 ձեռագրերից 6-ը, որոնց դառնալով մասնավոր աճանց սեփականություն, Մատենադարան են մուտք գործել տարբեր ժամանակներում և տարբեր ուղիներով:

Այսպես.

1847 թվականի ցուցակի ՆՆ 39 ձեռագիրը դարձել է Գր. Խաչաթյանի սեփականությունը (ՆՆ 15) և Մատենադարան է մուտք գործել 1925 թվականին (արդի ՆՆ 6266):

Նույն ցուցակի ՆՆ 20բ (1848 թ. ցուցակի ՆՆ 80բ) և ՆՆ 41 ձեռագրերը դարձել են Տալքի և Տփլիսի առաջնորդ Կարապետ արքեպ. Բագրատունու սեփականությունը (ՆՆՆ 32, 86), վերջինիս մահից հետո մինչև 1868 թվականը մնացել Ախալցխայում, ապա հանգուցյալի հավաքածուի մյուս ձեռագրերի հետ տեղափոխվել Էջմիածին և 1881 թվականին մտել «Գևորգյան հավաքածու»-ի մեջ՝ 241, 303 թվահամարների ներքո (արդի ՆՆՆ 3070, 3725):

Նույն ցուցակի № 22 (1848 թ. ցուցակի № 27) ձեռագիրը դարձել է Թիֆլիսի Ներսիսյան դպրոցի սեփականությունը (№ 180/505), Եկարագրվել Ստ. Կանաչյանի կազմած ցուցակում (№ 18)¹, ապա 20-ական թվականներին Ներսիսյան դպրոցի հավաքածուի կազմում մուտք գործել Երևանի գրական թանգարանի ֆոնդը (№ 546) և միայն 1938 թվականին հանգրվանել Սատենադարանում (արդի № 7584):

Նույն ցուցակի № 10 (1848 թ. ցուցակի № 12) ձեռագիրը Սատենադարանը ձեռք է բերել 1938 թվականին Թիֆլիսում մասնավոր անձից, որի անունը, սակայն, հայտնի չէ (արդի № 8727):

1848 թվականի ցուցակի № 17 ձեռագիրը ընկել է Արևմտահայաստան, 1915 թվականին՝ Վասպուրականի գաղթի ժամանակ վերադարձել Անդրկովկաս, դարձել Եախ Կարապետ Միսկինյանի, ապա Ստ. Կանաչյանի սեփականությունը (№ 5), 30-ական թվականներին մուտք գործել Երևանի գրական թանգարան (№ 1047), որտեղից է 1938 թվականին փոխանցվել է Սատենադարանին (արդի № 8245):

Այժմ անդրադառնանք Էնֆիանյան եղբայրների այն 3 ձեռագրերին, որոնք թեև արտահայտված են Լազարյան ճեմարանի 1861 թվականի ցուցակում (№№ 8, 54, 71). բայց բացակայում են 1888 թվականի ցուցակից:

Ստուգումները ցույց տվեցին, որ այդ ձեռագրերը, նախքան 1888 թվականը, դուրս են եկել Լազարյան ճեմարանի ֆոնդերից և դարձել մասնավոր անձանց սեփականություն:

Առաջին ձեռագիրը (№ 8) դարձել է Մսեր Մսերյանի սեփականությունը, փոխանցվել է Լեոն Սմելյանին և Սատենադարան մուտք գործել 1925 թվականին՝ վերջինիս մի շարք ձեռագրերի հետ մեկտեղ (արդի № 6502):

Հաջորդ ձեռագիրը (№ 54) ընկել է Թիֆլիս և Սատենադարան է մուտք գործել 1939 թվականին, ոմգ գրավաճառի միջոցով (արդի № 8682):

Վերջին ձեռագիրը (№ 71). Լազարյան ճեմարանի ֆոնդերից դուրս գալուց հետո, ինչ-ինչ հանգամանքներում կիսվել է, առաջին մասը ընկել Կարապետ Կոստանյանի ձեռքը, ապա 1938 թվականին մուտք գործել Երևանի գրական թանգարանի ֆոնդը (№ 1152), որտեղից է 1938 թվականին փոխանցվել է Սատենադարանին (արդի № 8537), իսկ երկրորդ մասը, նախ, դարձել է Մկրտիչ Էմինի սեփականությունը (№ 5), ապա անցել Գր. Նսալայանի ձեռքը (№ 34), 30-ական թվականներին մուտք գործել Երևանի գրական թանգարանի ֆոնդը (№ 1108), որտեղից է 1938 թվականին փոխանցվել Լատենադարանին (արդի № 8563):

Կրկին անդրադառնանք 1847 և 1848 թվականների ցուցակներին:

Էնֆիանյան եղբայրների 1847 թվականի ցուցակի 47 ձեռագրերից 42-ը մուտք են գործել Մաշտոցյան Սատենադարան, իսկ 5-ը՝ ոչ (№№ 34, 40, 42, 43, 44): Համոզվելու համար, դիտենք հետևյալ տախտակը, ուր 1847 թվականի ցուցակի 47 ձեռագրերի թվահամարները համեմատության մեջ են դրված Սատենադարանի ձեռագրերի թվահամարների հետ (տե՛ս տախտակ Ե):

ՏԱԽՏԱԿ Ե

№№ 1847 թ.	Մատենագրա-րան	№№ 1847 թ.	Մատենագրա-րան	№№ 1847 թ.	Մատենագրա-րան	№№ 1847 թ.	Մատենագրա-րան
1ա	6272	12	7077	23	6573	35	8682
1բ	6260	13	6906	24	6995	36	7097
2	6595	14	6610	25	7119	37	8537
3	6385	15	6946	26	6584	38	6847
4	6596	16	6478	27	7014	39	6266
5	6832	17	6876	28	6734	40	—
6	6718	18	7071	29	6392	41	3070
7	6399	19	7141	30	6952	42	—
8	6801	20ա	6254	31	6943	43	—
9	7172	20բ	3725	32	6457	44	—
10	8727	21	6574	33	6413	45	6890
11	6932	22	7564	34	—		

¹ Ստ. Կանաչյան, Ծուցակ ՈսկերԼԵ ձեռագրերի Թիֆլիսի Ներսիսյան և Ողևոր դպրոցի, Թիֆլիս, 1938:

Էնֆիանյան եղբայրների 1848 թվականի ցուցակի 55 ձեռագրերից 50-ը մոտոք են գործել Մաշտոցյան Մատենադարան, իսկ 5-ը՝ ոչ (№№ 1, 7, 20, 31, 58): Համոզվելու համար դիտենք հետևյալ տախտակը, ուր

1848 թվականի ցուցակի 55 ձեռագրերի թվահամարները համեմատության մեջ են դրված Մատենադարանի ձեռագրերի թվահամարների հետ (տե՛ս տախտակ 2):

Տ Ա Խ Տ Ա Կ 2

Ֆ.Ֆ. 1848 թ.	Մատենադարան	Ֆ.Ֆ. 1848 թ.	Մատենադարան	Ֆ.Ֆ. 1848 թ.	Մատենադարան	Ֆ.Ֆ. 1848 թ.	Մատենադարան
1	—	17	8245	32	6399	48	6354
2	7261	18	6577	33	6595	49	6354
3	6478	19ա	6272	34	6932	50	6354
4	8537	19բ	6260	35	6392	51	7261
	18563	20	—	36	6502	52	6457
5	6413	21	6833	37	6847	53	8682
6	6995	22	7261	38	6576	54	6385
7	—	23	6574	39	6596	55	7124
8	6847	24	6742	40	6801	56	—
9	6832	25	6596	41	6943	57	7014
10	6610	26	6906	42	7099	58	7141
11	6952	27	7564	43	7125	59	6964
12	8727	28	7013	44	6876	60ա	6254
13	7077	29	7071	45	7095	60բ	3725
14	6573	30	6990	46	6718		
15	6354	31	—	47	6734		
16	7097						

Այսպիսով, Էնֆիանյան եղբայրների 1847 և 1848 թվականների ցուցակներում նկարագրված 69 ձեռագրերից, այսօր Մաշտոցյան Մատենադարանի ֆոնդերում են գտնվում 55-ը: Բացակայում են հետևյալ 8 ձեռագրերը, որոնց նկարագրությունը թերում ենք անփոփոխ կերպով, քաղելով վերոհիշյալ ցուցակներից:

№ 1 (1848 թ. ցուցակ) — Աստուածաշունչ մաքուր և ամսիսով գրչութեամբ ի վերայ մագաղաթի գրեալ հանդերձ իւրաքանչիւր գրոցը նախադրութեամբք և թուհամարովք, գարդարեալ սքանչելանկար գլխազրովք և ոսկեգօծ պատկերօք, փոխազրեալ ի Լեհաստան լընտիր գաղափարէ, ի թուականնիս մերոյ ՌԱ:

№ 7 (1848 թ. ցուցակ, համապատասխանորեն 1847 թ. ցուցակ № 34) — Բանք կանոնականք և խրատականք. ի վերջոյ ունի գտօնացոյց և զինչ ինչ քան աշխարհագրական և ժամանակագրական:

№ 20 (1848 թ. ցուցակ) — Երանելոյն Գր. Նիսացոյ ասացեալ Տաղազս բնութեան մարդոյ: Նորին Գիրք մարդակազմութեան, և պատմութիւն բնական: Գրչութիւն ճօտըրգիր և ժամանակն անյայտ:

№ 31 (1848 թ. ցուցակ, համապատասխանորեն 1847 թ. ցուցակ № 42) — Մովսիսի խորենացոյ միւս այլ պատմութիւն, բոլորգիր, գաղափարեալ յօրհանկէ սեփականելոյ Ներսիսի Լամբրոնացոյ: Բաց ի մերոյն-

նէն և երկու օրինակք մատենիս առ վիճակաւոր արքեպիսկոպոսն Կարապետ, զորս քաղդատեալ ընդ մերոյն՝ ունիմք զանագաւորութիւնս նշանակել ի յուսանցսն մերոյն:

№ 40 (1847 թ. ցուցակ) — Պատմութիւն հայոց Յովհաննու կաթողիկոսի, բոլորգիր և հնագոյն:

№ 48 (1847 թ. ցուցակ) — Պատմութիւն հայոց Յովհաննու կաթողիկոսի, բոլորգիր, և հնագոյն:

№ 44 (1847 թ. ցուցակ) — Պիտոյից Մովսիսի խորենացոյ:

№ 58 (1848 թ. ցուցակ) — Սահմանք Դաւթի Անյաղթ փիլիսոփայի, իմաստասիրութիւնք, տաղք և երգք, Աշխարհացոյց Մովսիսի խորենացոյ և հանելուկք Ներսիսի Շնորհալոյ:

Վերոհիշյալ ձեռագրերից երկուսը (№№ 20, 58) այժմ գտնվում են Տյուքինգհեմի համալսարանի գրադարանում (№№ 75, 88), իսկ մնացած վեցի հետագա ճակատագիրը մեզ անհայտ է:

1847 թվականի ցուցակի 47 ձեռագրերի շարժումը ավելի պարզ պատկերացնելու համար՝ այդ ձեռագրերի 1847 թվականի թվահամարները համեմատության մեջ դնենք նույն ձեռագրերի հետագայում ստացած բոլոր կարգի թվահամարների հետ՝ ընդհուպ մինչև Մաշտոցյան Մատենադարան մոտոք գործելը (տե՛ս տախտակ Է):

ՏԱՆՏԱԿ Է

Հնգֆիտայան		Հաղարյան		Հնգֆիտայան հաղարյան	Հաղարյան հաղարյան	Միգրացիոն հաղարյան	Հաղարյան հաղարյան	Հաղարյան հաղարյան	Հաղարյան հաղարյան	Հաղարյան հաղարյան	Հաղարյան հաղարյան	Հաղարյան հաղարյան
1847 թ.	1848 թ.	1861 թ.	1868 թ.									
1	19	48	1159									6272
1 _F	19 _F	49	1158									6260
2	33	13	1225									6595
3	54	6	1168									6385
4	25 (34)	17	1187									6596
5	9	28	1197									8832
6	46	44	1125									6718
7	32	2	1240									6399
8	40	57	1163									6801
9			1143									7172
10	12											8727
11	34	3	1248									6932
12	13	20	1188									7077
13	26	11	1177									6906
14	10	7	1169									6610
15	59	41	1245									6946
16	3	55	1246									6478
17	44	53	1203									6876
18	29	14	1179									7071
19	58	21	1189									7141
20 _m	60 _m	51	1221									6254
20 _p	60 _p											3725
21	23	32	1199								303	6574
22	27			18								7564
23	14	12	1178							546		6573
24	6	16	1186									6995
25			1174									7119
26		40	1152									6584
27	57	56	1170									7014
28	47	33	1213									6734
29	35	34	1229									6392
30	11	29	1198									6952
31	41	38	1160									6443
32	52	5	1110									6457
33	5	59	1112									6413
34	7											
35	53	54										8682
36	16	10	1176									7097
37	4											8563
38												
39	8 (37)	64	1215 _m									8537
40												6847
41												6266
42	31											
43												3070
44												
45	30	1	1819									6890

Նույնպիսի համեմատական տախտակով
ցույց տանք ըստ 1848 թվականի ցուցակի
55 ձեռագրերի շարժումը՝ ընդհուպ մինչև

դրանց Մաշտոցյան Մատենադարանում
հանգրվանելը (տե՛ս ծանոթանալ Ը)։

517554

[illegible]

Բացի 1847 և 1848 թվականների ցուցակներում նկարագրված 63 ձեռագրերից, Էնֆիանյան եղբայրները հավաքել են բազմաթիվ այլ ձեռագրեր ևս, որոնց մի զգալի մասը, ինչպես հայտնի է, 1904 թվականին վաճառվել է Տյուրինգենի համալսարանի գրադարանին¹։ Դրանց անդրադառնալը, սա-

կայն, սույն հոդվածի նպատակներից դուրս է։

Ամփոփելով, կարելի է հանգել հետևյալ եզրակացության.

ա. Էնֆիանյան գրավաճառ եղբայրների 1847 և 1848 թվականների ցուցակներում նկարագրված 63 ձեռագրերից այսօր Մաշտոցյան Մատենադարանում են գտնվում 55-ը, որոնցից 46-ը Մատենադարան են մուտք գործել Լազարյան ճեմարանի հավաքածուի կազմում, իսկ 9-ը՝ տարբեր ժամանակներում և տարբեր ուղիներով։

բ. Բացակայող 8 ձեռագրերից 2-ը գրվում են Տյուրինգենի համալսարանի գրադարանի հայերեն ձեռագրերի մեջ, իսկ մնացած 6-ի ճակատագիրն անհայտ է։

¹ Systematisch-Alphabetischer Hauptkatalog der Königlichen Universitätsbibliothek zu Tübingen. M. Handschriften. a) Orientalische. XIII. Verzeichnis der armenischen Handschriften von Franz Nikolaus Finck und Levon Gjandschezian. Tübingen, 1907.





ՅՈՒՅԱԿ ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷԶՄԻԱՇՆԻ ՆՈՐ ՍՏԱՅՎԱԾ ԶԵՌԱԳՐԵՐԻ*

№ 241

ՔԱՐՈՁԳԻՐՔ

Խեթերը՝ 327.—Պրակները՝ 30, յուրաքանչյուրը 12-ական թերթից, իրաց առյալ ժՔ՝ 2, Ա, ԺԴ և Լ՝ 11, ԻԳ՝ 13 թերթից։ Մեծալբյունը՝ 18,1X14,5X7,5 սմ.։—Նյութը՝ դեղնած ե կեղտոտած դիմացկուն, ողորկ թուղթ։—Կտվեր՝ կաշնպատ տախտակ, որի երկու երեսին ճնշումով գծեր են քաշված, դարդեր և ծաղիկներ նկարված։ Կազմի կոնակի կաշին պակվել և ընկել է։ Կազմի երկու երեսների եերքին մասում կպցված է տպածո կարմրավուն չորի նույն կտորը, որի վրա տպված է դանազան դարդերու Զնազիրը ժամանակին ունեցել է երկու բռնիչ, որոնք հետագայում ընկել են։ Սույն գրչագիրը դրված է հաստ և դիմացկուն ստվարաթղթից շինված մի տուփի մեջ, սրճագույն գույնի, որի լափերն են 20,8X18,2X8,7 սմ.։ Վրան գրված է 2 թիվը։—Պաշտպանները՝ ձեռագրի ակզրի պահպանակը ընկել է, իսկ վերջում կա մի թերթ խունացած մազաղաթ, որի տեղատեղից Ավետարան է։—Դիւր՝ ուղղադիմ երկաթագիր։—Ժամանակը՝ Ժ—ԺԴ դարերու վրան կա հետևյալ հիշատակագրութունը (բուլղոգրով) քեա Տէր Պօղոսս իս և (նորագրով) քատացաւ։—Վեճակը՝ բավարար, սակայն ժՔ պրակից պահասում է 10 թերթ։—Գրութիւնը՝ միասուն։—Պատուի յղբիւր՝ չկան։—Տողերը՝ անհամալար, 25—31.—Գծումները՝ ճշումով։—Գիրը՝ բուլղոգիր։—Զարդարութիւնը՝ ձեռագրի ունի մեկական սիրուն գլխազարդ, մեծ լուսանցազարդ, խաչ, երկու թուղև և երկու այլ թուղև մարդկային գլուխներով (թ. ճա)։ Կան

ևան րազմաթիվ թուղևագրի, դարդագրի և մի զարդագիր 2 մարդկային դիմաւորով (թ. 193ր)։—Գրիւր՝ անհայտ։—Պատվիրատուն՝ անհայտ։—Մաղկազը՝ անհայտ։—Ժամանակը՝ ԺԳ—ԺԴ դարերու վայրը՝ անհայտ։—Ստեղծութիւնը՝ սույն ձեռագիրը նկեր է ստացված Կահիրէի առաջնորդարանից, Վահագն Հայրապետի միջոցով, 1963 թվականի նոյեմբեր ամսին։

ԲԱՎԱՆԻԱԿՈՒԹՅՈՒՆ

Թ. ճա.—Գրիգորի եռամեծի քաջ հոնտորի և անյաղթ փիլիսոփայի, աշակերտի Յովհաննու Որոտնեցոյ, արարեալ բանս խրատականս ոգէշահս, տունից Տէրունականաց, ի պատիւ սրբոց, եւ ի պատճառ գիտութեան ախմարաց, Մանաւանդ ի յողթս արտասուաց անձանց թախծելոց, Յաւէտ ի ճշգրտութիւն կարգաց ուղղափառաց, և յեղծումն բարբառմանց լարափառաց, ի յիդձ մաղթանաց ումանց բանասիրաց, եղբարց հարադատաց, Նորին աշակերտաց, Աստուծոյ հոգի Աստուած, Վասն տարէմտին քարով, այլ և ի խորհուրդ ժամահարին, և թէ տարի է Քրիստոս, ի բանն որ ասէ։

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆ

Թ. 337ր.—Յիշեա և զիս Տէր դեղկեի գրիչս և քեզ։

ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Թ. 1ա.—Թիւ 2.

Թ. 5բ.—Մեծ վարձապետն ազդիս հայոց՝ երանե-

* Եւրոսկանված տեղիւնքն աւսագրի 1984 թվականի ՆՄ Ը—Թ-ից, ԺԲ-ից, 1985 թվականի ՆՄ Ը—Ժ-ից։

լին Գրիգոր, յաճախ քանի՜ր զայս յորինեաց՝ որպէս հմուտ հոհտար, ժրագ են քանք սուրբ մատենիս ի լինիլացան անմուր, քանզի սովաւ ուղիղ վարին վարդապետաց զասք բուրբ, Որպէս Պողոս հրեքտաւան յառաքելոցն զաստուց, (վնժ երկուս տող վերահիշյալի կրկնութիւնը)։

Ք. 153բ.—Ուրախաց յիշատակ և Աստուած որպէս կրին։

Ք. 154բ.—Տեա ի ներայ, զսիրուն օրինակն։

Ք. 222բ.—Քուին Ռկ (1612 թ.) ի Մարաշու սովտայ մի ելուա եկաւ ի մայրաքաղաքն Սիս և աւերեաց զքաղաքը քաղաքն և ամենայն քաղաքացիքն խնդն եղան ոմանք ի Կաֆայ և ոմանք ի Պուզտանու երկիրն և ոմանք ի Լէհ ի առայմանէ թէ ի Սիս և թէ ի Կաֆայ, կամ ի Պուզտան և Լէհ ամենեքեանն, որժամ որ քրտեցան ի Սրսու եկին զիրեաց մարդից տնսան, բազում ուրախութիւն եղն, այնչեւտե ի զնացին ի Սիս բազում ողակիւն սօրեց.պարգնեք։

Ք. 224ա.—Ուհանէս Գառնեցուն ղեկտեմերի ի՞նչ տնսիւն։

Ք. 244ա.—Աղամ եսխաճայր։

Ք. 326բ.—Ես ետաստ տառապեալ ողի Մկրտիչ վարդապետս ի լերկրէն Տարոնոյ, ի զեղլէն որ կոյի Բազու, ընդ հովանեաւ առ յոտս ի Յիննակնեայ վանացս, որ յայժմ կոյի Սուրբ Կարապետ, ի յազգէն Յոհնայ, որ զնեցի զքարոզգիրքս և ոսկի, և եղի յիշատակ ինձ և ձեռնաց իմաց, հօրս Միսթարին, և մօրս Մուրվաթին, և եղորս Տէր հաշաթրին, և Ինքնատիոսին, Յովասափին և Ղազարին, եղի ի սուրբ ուխտս, որ կոյի յԱստուածացի վանք։ Ի դուռն Սուրբ Աստուածածնին և Սուրբ Նիկողայոս սքանչելագործ հայրապետին, և Սուրբ Յակոբայ կենաց բարեխաւսին, և Սուրբ Բորոս նահատակին, և այլ սրբոցն որ աստ կան հայաքեայ։ Ի ժամանակս առաջեորդութեան իմոյ, և ի հայրապետութեան Տէր Անգոնին, և Տէր Եստե (թ. 330ա) փանսսին, և այլ ամենեցուն վանիցս միարանիցն մեծի և փոքու։ Ով ոք խնամք տանի ի սմայ, և յուսով, և սիրով, և հաւատով, պատուեն սմայ, արհնեալ յիցին յԱստուծոյ և ամենայն սրբոց ետրաւ, ոչ ոք լուսի իշխանութիւն զնելոյ կամ զրաւելոյ, կամ ծախելոյ, այլ խնամովք պահպանեալ արհնեալն ին ի յԱստուծոյ, Թուականին ՌԻ (1572)։ Յիշեցէք զՄկրտիչ վարդապետս, և լի սրտի ողորմիս ասէք իւր ամէն մերձաւորացն և թողութիւն խնդրեցէք։ Ով որ ողորմիսն լի սրտի ասէ Աստուած զիրեանց մեղքն թողու։ ամէն, Հայր մեր որ յերկինս։

Ք. 336բ.—(զրաւստ) ար զ զ և զ է։

Ք. 337բ.—Քրիստոս Աստուած ողորմեայ Կիրակոս վարդապետին և թող զմեղք նորին զմահու լափն և զնեքելին բարեխաւսութեամբ Սուրբ Աստուածածնին և կենսաբեր Սուրբ հաշին և Յովանու Կարապետին և Սրբոյն Ստանոսի նախապկաին և Սրբոյն Գրիգորի Լուսաւորին և ամենայն Սրբոց զնդին ողորմեացիս Կիրակոսին, ամէն, Թ. ՊԳ (1445)։

ՌՄՍԷ (1808)։

23 յուլիս 1915, Նազարէթ Շատուորեան։

Սարգիս Արզումանեան, Էվէրէզիցի։

№ 242

ՄԱՇՏՈՑ

Թերերը՝ 129.—Պրակեներ՝ 11, յորաքանչորսը 12.—ական թերթից, իրաց առայլ Բ պրակը 10 և Բ պրակը 11 թերթից են։—Մեծուրյունը՝ 17×13,5×2,3 սմ.—Նյութը՝ զեղնած և խուսնացած դիմացկուն թուղթ։—Կազմը՝ ժամանակին եղել է կաշեկազմ, սակայն հետագայում ընկել է Մեացնէ է միայն կոնակի կաշին։—Պաշտպանեցին՝ լուսիս—վիճակը՝ քայքայված, սկզբից մի ամբողջական պրակ պահպանում է, իսկ վերջից էլ թերի։ Տեղ-տեղ ցնցակներ է։—Գրույթը՝ միասյուն։—Դատարկ քղերը՝ լուսիս—Տողերը՝ անհամալար, 17—18։—Գծումները՝ ճշումով։—Գիրը՝ բոլորգիր։—Զարգացումը՝ ձեռագիրն ունի միայն ութ շատ հասարակ զարգացում, իսկ մնացյալ զիստատեղը և որոշ վերնագրեր էլ գրված են կարմիր թանաքով։—Գրիչը՝ անհայտ։—Պատկերատուն՝ անհայտ։—Սաղկոյղը՝ շատ հավանաբար ետյն ինքը ձեռագիրը գրողն է հանդիսանում։—Ժամանակը՝ ժէ—ժԸ դարեր։—Վայրը՝ անհայտ։—Մանրագրումն՝ սույն ձեռագիրը նվեր է ստացվել կահիրեական Արաւաշես Գարտաշյանից Վահագնա Հայրապետի միջոցով 1963 թվականի նոյեմբեր ամսին։

ՆԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ք. 7ա.—(Կանայ թանաքով կնիք)։

Հայաքառն Մարտաշես Գարտաշեանի, Դահիլ։

(Սույն կնիքը կրկնվում է 11 այլ տեղերում ևս՝ թ. թ. 26ա, 28ա, 29ա, 42ա, 58ա, 68ա, 90ա, 107ա, 117ա, 118ա և 128ա)։

Ք. 80.—4 Rey. 2. V. 19.

Ք. 80բ.—Ezech. 47.

Ք. 82բ.—1 Cor. 10.

Math. 4, 13.

Ք. 128բ.—کتاب ارمیئ (Կիսար արմանիս հանդիսները)։

(Նույնը և գրված է եղի, թ. 1ա-ում, որ սակայն անտաղալում ընշվել է)։

№ 243

ՔԱՐՈՉԳԻՐԸ

Թերերը՝ 33.—Պրակեներ՝ 3, անհամալար, Ա՝ 10, Բ՝ 12, և Գ՝ 11 թերթից են։—Մեծուրյունը՝ 16×10,6×0,8 սմ.—Նյութը՝ զեղնած և կեղտոտած հասարակ բարակ թուղթ։—Կազմը՝ լուսիս—Պաշտպանեցին՝ լուսիս—վիճակը՝ անբավարար, սկզբից և միջից թերի։—Գրույթը՝ միասյուն։—Դատարկ քղերը՝ 32 և 33.—Տողերը՝ 35—38։—Գծումները՝ ճշումով։—Գիրը՝ ետերգիր։—Զարգացումը՝ լուսիս—Գրիչը՝ անհայտ։—Պատկերատուն՝ անհայտ։—Ժամանակը՝ ժէ—ժԹ դարեր։—Վայրը՝ անհայտ։—Մանրագրումն՝ սույն ձեռագիրը նվեր է ստացված արտասահմանից, Վահագնա Հայրապետի միջոցով։

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆ

Թ. 30բ.— Խոստովանութիւն երանելոյն մեծին Աւարտի:

Գանկատ առնեմ զինչն առ քեզ, ով Աստուած Հայր ամենասուրբ Հանդերձ համայնիւք արտասուօք և արիւնային կաթնօք սիրելագունեղի Որդոյ քո առայս, զի զեռնս ոչ ժամանեցի առ սկիզբն միոյ ուրուք առաքինութեան այնու, կատարելութեամբ որպէս աստէն գրեցաւ, սակայն խնդամ, զի դամենայնս առաքինութիւնս կատարելագունարար ունեացուք. զոր մարդկային իմացումն գորիցէ ըմբռնել, Խոստովանիմ առաջի քո Տէր զի երանեալ է ի ներկայիս, և երանելագոյն եղիցի ի Հանդերձեւամնա, որ զայսոսիկ առաքինութիւնս ունի այնու կատարելութեամբ, որպէս աստեն գրեցեալք են, թէպէտ զուցէ նովազ բաւականք իցեն առ կեցութիւն: Նաև հայցեմ ի քէն, Տէր, Հանդերձ ամենայն բղծիւ Որդոյ քոյ և Հոգւոյն Սրբոյ, և ամենից ստեղծուածոց, որպէսզի տայցես ինձ զնորոգութիւն ի մէջ առաքինութեանց հաճոյականաց և բնականաց, և նմանութեանց առաքինութեանց: Եւ որ ոք ընթեռնոցու զայս նիւթ, կամ զայսմանէ լսիցէ, կամ խոկայցէ, դու ամենակարող Աստուած պարգեւա նմա գոնեայ զմիակ ճշմարիտ և զկատարեալ առաքինութիւն: Ստույգ եմ, զի որ ունի ի քէն, Տէր, զմինն ունի ի միասին զամենեւեան և որ աճի ի միում համանգամայն և յա(թ. 31ա)՝ մենեասին, և որ ոչ ունի զմինն, զոչ ոք ունի վասնզի ամենեքեանք միաւորեալք են ի շնորհս, ամէն, ամէն:

Եզերեցաւ գրգոյկ երանելոյն մեծի Աւարտի յաղագս ճշմարտից և կատարեցելոց առաքինութեանց հոգոյ, որ և Դրախտ Հոգւոյ որդորի, ի գովութիւն սրբագունեղեր Երրորդութեան, ամէն:

(Այստեղ տրվում է ձեռագրի 42 գլուխների ցուցակը):

Թ. 31բ.—

Գիրք այս Դրախտ Հոգւոյ կոչի,
Անուշահոտ ծաղկամբ է լի,
Մտադրարար ընթերցողաց,
Բուրէ ի քիմս զհոտ կենի,
Իսկ զիմացուածն ըմբռնողաց,
Այնուպէս զմայրողաց,
Աղղ է ընկճել զախտս մարմնոյ
Եւ հաղորդիլ անանցկանաց
Առաքինութեանց ի բով ոսկոյ,
Փորձիլ բնաւից նոցունց գործոյ,
Յորմէ արդեօք և առ որ շարժին.
Յայտ լանգիման առնէ հոգոյ,
Իսկ

Որք կեղծմամբ գործեն զբարին,
Եւ զախտ մարմնոյ ի ներքս ունին,
Սա ցուցանէ զոյ մոխրալից,

Սողոմական խնձոր զնոսին.
Սա է կրպակ ինչ հոգելից,
Յորում են զեղք վերաց բնաւից.
Միայն զանօթ տենչման խնդրէ.
Զրիարար տայ ամենից,
Արդ խնդրեսցուք մեք ի Տեսունէ.
Զշնորհ և սէր մեղ զայսմանէ,
Զի մի դուցէ արտաքսիցիմք,
Զդրախտն հոգու ի կոխմանէ,
Ամէն:

ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Թ. 32ա.— (Գրված է ձեռագրի առաջին հինգ գլուխների վերնագրերը):

Թ. 32բ.— Յիշատակ է այս գրագիր տիրացու Յակոբին Իսկանդերեան որդին:

Արգ...ի գրչագրածն:

Քաջութեան:

Թ. 33ա.— (Գրված են ձեռագրի առաջին երեք գլուխների վերնագրերը):

Յակոբ իր:

Թ. 33բ.— Մտերբիմ Պարոն Յովանէս:

№ 244

ՄԵԿՆՈՒԹԻՆ ԱՐԻՍՏՈՏԵԼԻ

Թերերի' 112.— Պրակներ' 9. զանազան յափսի' Ա, Զ և Թ' 10, Գ, Ե, Է և Ը' 12, Բ և Գ' 16 թերթի.— Մեծությունը' 16X11X2,7 սմ.— Նյութը' ղեղեւած և խուճաղած հասարակ թուղթ.— Կազմը' կաշեպատ տախտակ, որի առջևի երեսի ներքևի մասը պակասում է: Կաշվի վրա ճեղքումով դարդեր են եկարված երկու երեսների վրա: Պաճաղակները' սկզբում կա երկու թերթ հասարակ թուղթ.— Վիճակը' բազմաթիւ.— Գրությունը' միասնութիւն.— Դատարկ բլրեր' չկան.— Տողերը' 20.— Գծումները' ճշմարտութիւն.— Գիրը' Եռորդիւր.— Զարդագրությունը' չկա.— Գրիչը' անհայտ: Պատկերազարդութիւնը' անհայտ.— Ժամանակը' ԺԷ—ԺԸ դարեր: Վայրը' անհայտ.— Մեծությունը' նվեր է ստացված Հայաստանից, Վեհափառ Հայրապետի միջոցով:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Թ. 3ա.— Սկիզբն և նախադրութիւն գրոցն որ ասի ըստ յունաց Պէրիարմէնիաս, և հայերէն Յաղագս մեկնութեան, արտադրեալ ի մեծ իմաստնոյն Արիստոտէլէ, և թարգմանեալ և մեկնեալ ի Դաւթէ:

(Գիրքը բաղկացած է 33 գլուխներից):

ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Թ. 1ա.— Ватя армянски книга под поручник Эпхаров Антонов Захаров ботин арланов Прутеян.

Репорту мелик Вогошан, мелик Давутоян, гасподин Иеля Маркаряну на.

Книга армянски тая мия Хачатур Пону мапачов Назарян.

- Բ. 2ր.—Արմանար:
- Բ. 31ր.—Կրատկի:
- Բ. 42ա.—Կրատարկ:
- Բ. 41ր.—Ասենայան, Մարյան, Դառնայան, Խաչատրյան, Վորտիսյան, Խաչանյան, Արսև, Բազեյան, Կուսակալ, Բաշար Խաչատրյան.
- Բազեյան (4 անգամ):
- Բ. 88ա.—Աստղատյան (17 անգամ):
- Բ. 112ր.—Արարատյան Մատթեոս Արքեպիսկոպոս:
- Գրեյս Արարատյան Մատթեոս Արքեպիսկոպոս Կանոնիք:
- Այս առաջ Մատթեոսի վկայված:
- Եղիա Եանիկյանի վկայված:

№ 245
ՂՈՒՐԱՆ
(Արարեհե)

Բերեհեր՝ 304.—Պրակնե՛ր՝ 30. յուրաքանչյուր 10-ական թերթից, ի լսւց առյայ Ա՝ 11, և Է՝ 13 թերթից.—Մեծալրյունը՝ 16×11,6×3,1 սմ.—Նյութը՝ զննած և տեղ-տեղ կեղտոտած քարակ, զմանցնուն թուղթի.—Կազմը՝ կաշեպատ ստվարաթուղթի.—Վիճակը՝ յավի.—Գրույրյունը՝ միասուն.—Դատարկ քղերի՝ չկան.—Ցողերը՝ 15.—Գծումները՝ ճնշումով.—Գիրը՝ բնթանկի, մաքուր և զննեցիկ արարական նստիկ տառեր.—Ձարդագրութուն՝ ձեռագրի առաջին երկու էջերը ծագականարված են արարական ոճով, կան գոն-նազար երկու յուսանցագրից, ինչպես նաև ծագիկ-ներ, Գրությունը գրված է երկու շրջանակներում, որոշ քառեր բնագրված են ոսկեգույն զմեռով, Ձեռագրում կան նույն տեսակի քաղմաթիվ յուսանցագրից, Օգտագործված են ոսկեգույն, կապույտ և կարմիր գույնի շրջանակի մեջ, Բոլոր նախադասությունների վերջում կա մեկական ոսկեգույն մեծ կետ, Բոլոր էջերի վրա տեքստը գրված է 8,7×11,7 սմ. շափերով քաղ-ված մի կարմիր շրջանակում, Գլուխների վերնագրերը գրված են կարմիր գույնով.—Գրիչը՝ պատարի գրագիր Իսմայիլ էլ-Ջուհիի աշակերտ Իսմայիլ Քամիլ:—

Պատվիրատուն՝ անհայտ:—Մագիստր՝ յատ հավանա-րար նույն ինքն ձեռագրի գրիչը ծագիկ է այն:—Մամանակը՝ 1824 թ.—Վայրը՝ անհայտ:—Մանրու-յունը՝ սույն ձեռագրից երկու է ստացվել Բուխարեստից, պր. Հովհաննես Գալիպայանից, ձեռամբ պր. Մանաշի:

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆՆԵՐ

- Բ. 1ր.—Բի-իսմ-Ալլահ էլ-Ռահման էլ-Ռահիմ Ահմեդ լիլլահի ռար էլ-ալամիյա, էլ-Ռահման էլ-Ռահիմ, մալիքի յաումի էլ-դի-նի, իյաքա նաարուդու վախյաքա նաստալի-նու, ահդինա էլ-սիրատ էլ-մուսաաթիմա, սի-րատա էլ-դինա անամտա ալեյհիմ զալի էլ-մադդուրի ալալհիմ ուալա էլ-դալիհա:
- Բ. 2ա.—Բի-իսմ Ալլահ էլ-Ռահման էլ-Ռահիմ ալամա զալիքա էլ-քիթարու յա-ռար-րա ֆիհի հուդդալի լիլմուտաթին, էլ-դինա լիլլիմինուն բիլդալի վալիքիմունա էլ-սալա-նուտա ուամիմա ոադաքունա հում յունֆի-քունա, ուալդինա յուլմիմունա բիմա ունդի-լա իյաքա ուամա ունդիլա քարիքա ուարի-լախիրատի հում յուքիմունա:
- Բ. 304ա.—Ահմեդուլլահի ալա էլ-տա-մամի ուալսալուտու ուալսալամու ալա Մու-համմեդին խալիու ալլա նամի, ուալա ալի-հի ուասահաթիհի էլ-քիրամիհի քադուաքա-հա էլ-ֆարադու մին թահրիի հազա էլ-մուսհաֆի էլ-շարիֆի աան յադդի էլ-արդի էլ-դաիֆի Իսմայիլու Քամիլ մին թիլամիդի Իսմայիլու էլ-Ջուհիի քաաթիրու էլ-սարայա էլ-սուլթանի զաֆար-Ալլահու լահու ուալա-ուալիդալհի ուալիուստադիհի սանատ 1240 (հիշրայի):
- Բ. 57ա.—Վաքըֆ:
- (Ձեռագրում կա սև սատիկի մի կտոր, 20×12 սմ. շափերով, որի վրա գրված է հետևյալը).
- Էա իյայա իլլալահ, Մուհամմեդուն ոասուլ Ալլահ:
- (Շարունակելի)